Democracy Development Foundation

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑ ԱՉՔԵՐՈՎ

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՁԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2024

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑ ԱՉՔԵՐՈՎ

Հայաստանում ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի ուսումնասիրության զեկույց

ԵՐԵՎԱՆ
2024

Հեղինակներ՝ Մարիամ Անտոնյան
Անահիտ Ղազարյան
Լիանա Մխոյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում:

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծություններն արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԵՂՄԱԳԻՐ 6
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 9
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ 9
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 11
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ 11
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 12
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ 12
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ 14
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 15
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ 15
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 16
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ 16
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ 17
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 18
Մարտահրավերները 22
Մշտադիտարկողների վերապատրաստումը 24
Նիստերի ընտրության կարգ 25
ՈՂՋՄԱԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԸՍՏ ՄԻԵԿ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 25
ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 27
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 32
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 35
ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 36
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԸ 36
ԴԱՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԵՐԸ (ԱՌԱՐԿԱՆԵՐԸ) ՁՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ 39
ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 42
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 43
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան Կենտրոն նստավայր 47
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան Շենգավիթ նստավայր 48
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան Ավան նստավայր 50
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան 51
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Արաբկիր նստավայր 54
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Էրեբունի նստավայր 55
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Աջափնյակ-2 նստավայր 57
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գավառի նստավայր 58
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սևանի նստավայր 59
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարտունի նստավայր 60

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայր 62
Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայր 64
Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան....65
Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գյումրու նստավայր 66
ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Մարալիկի նստավայր 68
ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Արթիկի նստավայր....71
Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան....72
Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Իջևանի նստավայր 74
Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Դիլիջանի նստավայր....76
Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան....77
Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան Վանաձորի նստավայր....80
Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան Սպիտակի նստավայր Ալավերդու նստավայր 81
Վարչական դատարան 83
Վարչական դատարան Սևանի նստավայր 84
Վարչական դատարան Վանաձորի նստավայր 85
Վարչական դատարան Գյումրու նստավայր....85
Վարչական դատարան Երևանի նստավայր....86
ԳԼՈՒԽ 2. ԴԱՏԱԿԱՆ ԼՍՈՒՄ. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ....88
ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ....88
Դատարաններում այցելուների համար նախատեսված նստարանների առկայությունը 89
Դահլիճի դատավարական հատվածում դատավարության կողմերի համար նախատեսված նստարանների առկայությունը....90
Լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությունը դատական նիստերին 90
Դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածների (այցելուների հատված) առանձնացվածությունը....90
Դատական նիստի ժամի մասին տեղեկացումը....91
Դատական նիստի բացման ժամը....91
Դատարանի կազմի և քննության ենթակա գործի հրապարակումը նիստի մեկնարկին....92
Դատավարության մասնակիցներից մեկի չներկայանալու դեպքում դատական նիստի շարունակումը կամ հետաձգումը....93
Չհարցաքննված վկաների ներկայությունը դատական նիստերի դահլիճում....94
Դատավորի, դատավարության մասնակիցների սեղաններին և ամբիոնի վրա դրված բարձրախոսների տեխնիկական վիճակը 94
Դատական նիստերի արձանագրումը....95
Դատական նիստի համակարգչային ձայնագրության անընդհատությունը....97
Դատավորի և դատավարության մասնակիցների խոսքի լսելիությունը....97
Դատական նիստեր, որոնցում հրապարկվել են դատական ակտեր 98
Գործի քննության ավարտը....99
Դատական նիստերի հետաձգումները....104
ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՀԵՏԱՁԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ....107
Հաջորդող դատական նիստերի միջև ընկած ժամանակային միջակայքը 108
Դատավորների հաճախակի փոփոխության ազդեցությունը դատաքննության ժամկետների վրա 117
Իրավունքների ու պարտականությունների պարզաբանումը....118

Դատական նիստի դահլիճի պայմանները 120
Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումը և դատարանի տեխնիկական հագեցվածությունը 121
Դատարանի տեխնիկական հագեցվածությունը 123
Դռնփակ դատական նիստեր 124
Դատական նիստի ձայնագրումը 125
Դատավորի արձագանքը մշտադիտարկողի ներկայությանը 125
ԳԼՈՒԽ 3. ԴԱՏԱԿԱՆ ԼՍՈՒՄ. ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ 128
Դատական նիստերի դահլիճը 128
Դատարաններում այցելուների համար նախատեսված նստարանների առկայությունը. 129
Դահլիճի դատավարական հատվածում դատավարության կողմերի համար նախատեսված նստարանների առկայությունը 131
Դատական նիստերի անցկացման կարգը 133
Լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությունը դատական նիստերին 134
Դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածների (այցելուների հատված) առանձնացվածությունը. 134
Դատական նիստի ժամի մասին տեղեկացումը 136
Դատական նիստի բացման ժամը 138
Դատարանի կազմի և քննության ենթակա գործի հրապարակումը նիստի մեկնարկին 139
Դատավարության մասնակիցներից մեկի չներկայանալու դեպքում դատական նիստի շարունակումը կամ հետաձգումը 140
Վերաքննիչ բողոք բերելու իրավունքը 142
Բողոքարկվող դատական ակտ. 143
Դատական նիստերի արձանագրումը՝ ձայնագրման համակարգի միջոցով 145
Դատավորի, դատավարության մասնակիցների սեղաններին և ամբիոնի վրա դրված բարձրախոսների սարքինությունը. 146
Դատական նիստի համակարգչային ձայնագրության անընդհատությունը. 147
Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումը և դատարանի տեխնիկական հագեցվածությունը 148
Դատավորի և դատավարության մասնակիցների խոսքի լսելիությունը 149
Իրավունքների ու պարտականությունների պարզաբանում 149
Դատական նիստի հետաձգումը 150
Գործի քննություն ավարտ և դատական ակտի հրապարակում 151
Դատական կարգադրիչների ներկայությունը դատական նիստերին 152
Դատավորի վարքագիծը և էթիկան 153
Դատական իշխանության պաշտոնական կայք.Դատական տեղեկատվական համակարգ «ԴատաԼեքս» 156
Դատավորի արձագանքը մշտադիտարկողի ներկայությանը 159

ՍԵՂՄԱԳԻՐ

Վերջին տարիներին դատական և իրավական բարեփոխումների համատեքստում ձեռնարկված միջոցառումները բավարար չեն եղել կանխելու գործերի հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի խաթարման դեպքերը: Չնայած դատաիրավական համակարգում կատարվող պարբերական և արմատական բնույթ կրող փոփոխություններին՝ քաղաքացիները բախվում են ուշացած արդարադատության, մասնավորապես, դատական նիստերի չարդարացված հետաձգումների, գործերի երկարատև և ոչ արդյունավետ քննության, վճիռների չկատարման, վերջնական դատական ակտերի չհրապարակման և այլ փոխկապակցված խնդիրների:

Պետությունը պոզիտիվ պարտականություն ունի ապահովելու, որպեսզի դատավարությունները հանրության համար լինեն բաց՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված հատուկ դեպքերի: Դատավարության հրապարակայնությունը կարևոր նախապայման է արդյունավետ դատական պաշտպանության համար, ինչպես նաև բացառելու ստվերային արդարադատության իրականացումը:

Բացի այդ, հանրության և հատկապես մշտադիտարկողների ներկայությունը դատական նիստերին կարող է նպաստել դատական համակարգում առկա խնդիրների բացահայտմանը, ինչպես նաև խրախուսելու դատավորներին գործելու արդար դատաքննության իրավունքի միջազգային պահանջներին համահունչ:

Հայաստանում ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի ապահովումը բարելավելու նպատակով Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (ՀՔԱՎ գրասենյակ) «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակում 2023 թ. մինչև 2024 թ. մեկնարկել է դատական նիստերի մշտադիտարկման աշխատանքներ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության, մասնագիտացված և վերաքննիչ դատարաններում:

«Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի հիմնական նպատակն է ապահովել Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների ամբողջականությունը և բարելավել արդարադատության համակարգի հաշվետվողականությունը, թափանցիկությունը և դրա նկատմամբ վերահսկողությունը:

Դատական նիստերի մշտադիտարկումն ուղղված էր հավաքագրելու դատարաններում արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարրեր հանդիսացող՝ հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովման վիճակի վերաբերյալ հավաստի տվյալներ, ինչպես նաև զարգացնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարողությունները դատարաններում մշտադիտարկում իրականացնելու գործում:

Սույն զեկույցը նպատակ ունի ներկայացնել դատական համակարգում արձանագրված խնդիրները և առաջարկել փոփոխություններ, որոնք կնպաստեն արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես, հրապարակային և ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի վիճակի բարելավմանը:

ՀՔԱՎ գրասենյակը ցանկանում է իր երախտագիտությունը հայտնել ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատական դեպարտամենտի հետ արդյունավետ համագործակցության համար, ինչպես նաև մշտադիտարկողներին[1], ովքեր ծրագրի առաջին փուլից ի վեր օրինակելի, արհեստավարժ աշխատանք են կատարել:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական, վարչական և քրեական գործերով դատական վարույթների ողջամիտ ժամկետներում քննության և հրապարակայնության սկզբունքմեչի պահպանման գնահատման նպատակով ձևակերպվել են ներքոնշյալ հետազոտական հարցերը.

- Դատավորների ծանրաբեռնվածության գնահատումը՝ որպես հետազոտական տվյալներ հիմք ընդունելով դատավորի վարույթում գտնվող գործերի թիվը, յուրաքանչյուր տարի ստացված գործերի թիվը, յուրաքանչյուր տարի ավարտված գործերի թիվը.
- Դատավորների թվի բավարարությունը ՀՀ բնակչության թվին համամասնորեն.
- Գործերի քննության կարգը, գրավոր ընթացակարգի կիրառելիությունն ու ազդեցությունը գործերի քննության ժամկետների կրճատման վրա.
- Դատավորների և դատարանի աշխատակազմերի թվաքանակի, վերջինիս համալրման խնդիրները.
- Դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով ձեռնարկվող միջոցառումների ազդեցությունը. որքանո՞վ են դրանք հանգեցրել կամ հանգեցնելու ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքի պահպանմանը.
- Դատավորների միջև գործերի բաշխման խնդիրները .
- Դատավորների գործուղման պրակտիկան.
- Դատական նիստերի անցկացման ժամանակային միջակայքերը.
- Դատական նիստերի հետաձգման պատճառները.
- Վեճերի լուծման արտադատական մեխանիզմների կիրառելիությունը.
- Փորձաքննությունների ոլորտում առկա խնդիրները և դրանց ազդեցությունը դատավարական ժամկետների վրա.
- Դատարանում առկա կազմակերպական խնդիրները.
- Դատական որոշումների ուղարկման ժամկետները, դատական ակտերի հրապարակման հետ կապված խնդիրները.
- Քաղաքացիական, քրեական և վարչական գործերով նիստերի անցկացման վայրի պայմանները.
- Դռնբաց դատական նիստի կարգի պահպանման վիճակը.
- Դատական նիստերի արձանագրման վիճակը.
- Հանրության հասանելիությունը դատական գործերի նյութերին և տեղեկատվությանը.
- Դատական ակտերի հրապարակայնացման հետ կապված խնդիրները.
- Դատարաններում դռնփակ դատական նիստերի անցկացման պրակտիկան, անձնական տվյալների պաշտպանության խնդիրը.

[1] Տե՛ս հավելված N 5:

Հայաստանում ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքին նվիրված սույն զեկույցը բաղկացած է երեք գլխից. 1-ին գլխում ներկայացված են առաջին ատյանի դատարանների մասին ընդհանուր բնույթի տվյալներ, 2-րդ և 3-րդ գլուխները նվիրված են առաջին և

վերաքննիչ ատյանի դատարաներում դատական նիստերի մշտադիտարկման արդյունքներին:

2-րդ և 3-րդ գլուխներում անդրադարձ է կատարվում հետևյալ հարցերին.

1. Դատարանի շենքային և նյութատեխնիկական պայմանները,
   1.1 դատարանում այցելուների համար նախատեսված պայմանները,
   1.2 դատարանի տեխնիկական հագեցվածությունը:

2. Դատական նիստերի դահլիճների պայմանները.
   2.1 դատական նիստերի դահլիճի նույնականացումը,
   2.2 դահլիճի դատավարական հատվածում դատավարության կողմերի համար նախատեսված նստարանների առկայությունը,
   2.3 լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությունը դատական նիստերին
   2.4 դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածների (այցելուների հատված) առանձնացվածությունը:

3. Դատկան նիստի ընդհանուր կանոնները.
   3.1 դատական նիստի բացման ժամը,
   3.2 դատական նիստի ժամի մասին տեղեկացումը,
   3.3 դատարանի կազմի և քննության ենթակա գործի հրապարակումը նիստի մեկնարկին,
   3.4 դատավարության մասնակիցներից մեկի չներկայանալու դեպքում դատական նիստի շարունակումը կամ հետաձգումը,
   3.5 չհարցաքննված վկաների ներկայությունը դատական նիստերի դահլիճում,
   3.6 դատական նիստերի արձանագրումը,
   3.7 դատական նիստի համակարգչային ձայնագրության անընդհատությունը,
   3.8 դատավորի և դատավարության մասնակիցների խոսքի լսելիությունը,
   3.9 դատական նիստեր, որոնցում հրապարկվել են դատական ակտեր,
   3.10 դատական նիստերի հետաձգումները,
   3.11 հաջորդող դատական նիստերի միջև ընկած ժամանակային միջակայքը,
   3.12 գործի քննության ավարտը,
   3.13 իրավունքների ու պարտականությունների պարզաբանումը,
   3.14 դռնփակ դատական նիստեր,
   3.15 դատավորների հաճախակի փոփոխության ազդեցությունը դատաքննության ժամկետների վրա.

4. Դատավորի արձագանքը մշտադիտարկողի ներկայությանը:

1. Դատարանի շենքային և նյութատեխնիկական պայմանները.

1.1 Ոչ բոլոր դատարաններում կան դատական նիստերի ժամանակացույցի վերաբերյալ տեսանելի վայրում փակցված ցուցակներ: «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգում դատական նիստերի վերաբերյալ տեղեկատվությունը ժամանակին չի լրացվում և ծրագիրը ժամանակին չի թարմացվում, որը բավականին մեծ դժվարություններ է առաջացնում, թե դատավարության մասնակիցների, թե՛ մշտադիտարկողների համար:

1.2 Մշտադիտարկված դատարաններում դատական նիստերի նույն դահլիճից օգտվում են մի քանի դատավորներ, որի հիման վրա կարելի է արձանագրել, որ դահլիճների թիվը չի համապատասխանում դատավորների թվին և դատավորները նիստերն անցկացնում են նույն դահլիճներում:

1.3 Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ոչ բոլոր դատարանների միջանցքներում կան նստարաններ դատական նիստի մեկնարկին սպասելու համար, բացի այդ, դատարանները ապահովված չեն սպասասրահներով:

1.4 Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատավարության կողմերի համար նախատեսված բավարար քանակի նստարանների խնդիր արձանագրվել է 20 նիստի ընթացքում: Նշված խնդիրն արձանագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթ, Ավան, Վարչական դատարանի Երևան, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրու, Մարալիկի, Արթիկի, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարտունու, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վանաձորի նստավայրերում:

1.5 Մշտադիտարկված 1249 դատական նիստերից 1242 նիստի ընթացքում օգտագործվել է համակարգչային ձայնագրման համակարգը, իսկ 7-ում՝ ոչ:

1.6 Տեսաձայնագրություն հանդիսացող ապացույցների հետազոտման նպատակով նախատեսված մոնիտորները դատարաններում կամ բացակայել են կամ չեն ծառայել սահմանված նպատակին՝ սարքին չլինելու կամ տեխնիկական այլ պատճառներով:

1.7 Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2, Արաբկիր, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոն, Շենգավիթ, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արթիկի, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Դիլիջանի, Վարչական դատարանի Երևանի նստավայրերում կան դատական նիստերի դահլիճներ, որոնցում դատավարական և այցելուների համար նախատեսված հատվածներն առանձնացված չեն եղել:

1.8 Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատավորի սեղանի բարձրախոսը աշխատել է 1196 դատական նիստերի ժամանակ, իսկ 53 դատական նիստերին՝ չի աշխատել: Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատավարության մասնակիցների սեղաններին դրված բարձրախոսներն աշխատել են 1189 դատական նիստերի ժամանակ, իսկ 60 դատական նիստերի ժամանակ չեն աշխատել: Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից ամբիոնի վրա դրված բարձրախոսներն աշխատել են 1057 դատական նիստերի ժամանակ, իսկ 138 դատական նիստերի ժամանակ չեն աշխատել:

2. Դատական նիստի ընդհանուր կանոնները.

2.1 Մշտադիտարկված 1249 դատական նիստերի ընթացքում 1201 դատական նիստերի համակարգչային ձայնագրությունը չի ընդհատվել, իսկ 48 դատական նիստերի ձայնագրումը ընդհատվել է: Դատական նիստերի ձայնագրումը հիմնականում դադարեցվել է դատական նիստերի ժամանակ ընդմիջում հայտարարելու ժամանակ:

2.2 Մշտադիտարկման ընթացքում մշտադիտարկողները նշել են, որ դատավորներ Լիլիթ Սարգսյանի, Ռուբեն Ներսիսյանի, Գնել Գասպարյանի, Կարեն Ֆարխոյանի, Լուսինե Ալավերդյանի, Սյուզաննա Ուլիխանյանի խոսքը լսելի չէ, քանի որ շատ ցածր ձայնով են խոսում դատական նիստերի ժամանակ: Դատավարության մասնակիցների և դատավորի ցածր ձայնով խոսքի մասին նշվել է թվով 94 դատական նիստերի մշտադիտարկման քարտերում: <u>Դատական նիստերի հրապարակայնության ապահովման համար կարևոր է ոչ միայն նիստերի սահմանված կարգով դռնբաց անցկացումը և հանրության ներկայացուցիչների անխոչընդոտ մուտքը նշված նիստերին, այլ նաև նիստի բովանդակությանը հաղորդակից լինելը՝ այն է դատավարական գործողությունների տեսանելիությունը և լսելիությունը ներկա անձանց համար</u>: Մշտադիտարկողները նշել են այնպիսի դեպքեր, երբ դատավարական գործողության իրականացումը՝ դատավարության մասնակիցների և դատավորի խոսքը լսելի չի եղել: Նշվածը պայմանավորված է եղել 3 պատճառներով՝ <u>վատ ակուստիկայի, դատավարության մասնակիցների և դատավորի ցածր խոսքի և ձայնային սարքավորումների ոչ պատշաճ աշխատանքի</u>: Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատական նիստն ամբողջությամբ լսելի է եղել 1178 դեպքերում: Մասամբ լսելի է եղել թվով 71 դատական նիստերի ժամանակ:

2.3 Դատական ակտերի հրապարակման կարգը հիմնականում չի պահպանվում, իսկ հրապարակման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունը բացակայում է: Բարձրագույն դատական խորհուրդը նշված խախտումներին անդրադառնում է կարգապահական վարույթների շրջանակներում, ինչը, սակայն, բավարար չէ և չի լուծում առկա համակարգային խնդիրը: Որպես խնդրի լուծման արդյունավետ տարբերակ կարող է ծառայել Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշտադիտարկման իրականացումը:

2.4 83 վարչական գործով վարույթն ավարտվել է, դատարանը հայտարարել է դատական ակտի հրապարակման օրը: Նշված գործերից միայն 50-ով է վճիռը կամ գործի վարույթը կարճելու մասին որոշումը տեղադրվել տվյալ օրը:

2.5 70 ավարտված քաղաքացիական գործերից միայն 33-ով են դատական ակտերը հրապարակվել հրապարակման հայտարարված օրը:

2.6 59 քրեական գործերով կայացվել են դատավճիռներ կամ վարույթը կարճելու մասին որոշումներ, որոնցից ոչ մեկը չի տեղադրվել կայքում հրապարակման օրը:

2.7 Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ դատարաններում ոչ բոլոր դատավորներն ու վերջիններիս կազմերն են տիրապետում հանրության ներկայացուցիչների կողմից դատական նիստերի ձայնագրման, գրառումներ կատարելու կարգին, այն է՝ նման դեպքերում թույլտվության անհրաժեշտության բացակայությանը:

2.8 Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատական ակտեր են հրապարակվել թվով 108-ի ժամանակ, որից 76 դատական նիստերի ժամանակ դատավորը պարզաբանել է ակտը բողոքարկելու ժամկետներն ու կարգը, իսկ 32 դատական նիստերի ժամանակ՝ ոչ:

2.9 Թվով 13 դատական նիստերի ժամանակ իրավունքներն ու պարտականությունները չեն պարզաբանվել: Թվով 62 դատական նիստերի ժամանակ իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են, սակայն ոչ հասկանալի կերպով:

2.10 Մշտադիտարկված դատական նիստերից միայն մեկի ժամանակ են կիրառվել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներ: Մասնավորապես, թիվ ԵԴ/1954/01/21 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավանի նստավայրում, նախագահությամբ դատավոր Մանվել Շահվերդյանի, ԱՄՆ-ում բնակվող տուժողի մասնակցությունը դատական նիստին կայացել է տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների գործադրմամբ:

2.11 Մշտադիտարկման ընթացքում դատարանը դռնփակության է անցել թվով 3 դատական նիստերով: Ընդ որում, 3 դեպքերում էլ դռնփակությունը վերաբերել է ոչ թե ամբողջ գործի քննությանը, այլ կոնկրետ դատական նիստին: 2 գործով դռնփակ անցկացնելու միջնորդություն էին ներկայացրել կողմերը, իսկ 1 գործով նման որոշում է կայացրել Դատարանը իր նախաձեռնությամբ:

2.12 Արձանագրվել է նաև դեպք, երբ մշտադիտարկողը դիտարկել է այնպիսի դատական գործով անցկացվող դատական նիստ, որը «ԴատաԼեքս» համակարգում որակված է որպես փակ, այսինքն, ներկայացված է որպես դռնփակությամբ քննվող դատական գործ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

3. Դատական նիստի ընդհանուր կանոնները.

3.1. Մշտադիտարկված 1249 նիստերից 681-ը բացվել են նշանակված ժամին, իսկ 509-ը՝ ոչ: Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ առաջին ատյանի դատարաններում մշտադիտարկված դատական նիստերի 42 տոկոսը բացվել է նշանակված ժամից ուշ:

3.2. Մշտադիտարկված 1249 դատական նիստերից 716 դատական նիստերին չեն ներկայացել դատավարության մասնակիցները, որոնցից 558 դատական նիստերի ժամանակ դատավորը լսել է մյուս մասնակիցների կարծիքը դատական նիստը շարունակելու կամ հետաձգելու վերաբերյալ, իսկ 116 դատական նիստերի ժամանակ՝ ոչ:

3.3. Մշտադիտարկված 1249 դատական նիստերից 750 դատական նիստում գործի քննությունը հետաձգվել է: Այսպիսով, մշտադիտարկված դատական նիստերի գրեթե 60 տոկոսը հետաձգվել է: Մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ, որպես դատական նիստերի հետաձգումների հիմնական պատճառներ, հանդիսացել են ծանուցման հետ կապված խնդիրները և դատավարության մասնակիցների բացակայությունը, առանց որոնց անհնար է եղել դատական նիստն անցկացնել: Այնուհետև, շատ դատական նիստեր հետաձգվել են դատավարության մասնակիցների միջնորդությամբ:

3.4. Մշտադիտարկողները 769 գործով տրամադրել են հաջորդ դատական նիստի օրվա վերաբերյալ տվյալներ: Նշված գործերից միայն 287-ով է հաջորդ դատական նիստը նշանակվել 1 ամսվա ընթացքում: Ընդ որում, նշված գործերը մեծամասամբ քրեական գործեր են: Մյուս գործերով դատական նիստերը նշանակվել են ընդհուպ մինչև 273 օր հետո:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

4. Դատարանի շենքային և նյութատեխնիկական պայմանները.

4.1. Մշտադիտարկված թվով 600 դատական նիստերից դատական նիստերի դահլիճի նույնականացման (համարակալման) խնդիր արձանագրվել է թվով 4 դատական նիստեր մշտադիտարկելիս: Չհամարակալված դահլիճները գտնվել են Վերաքննիչ վարչական և Վերաքննիչ քրեական դատարաններում:

4.2. Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ Վերաքննիչ քրեական դատարանում այցելուների համար նախատեսված նստարանները բացակայել են, նստարանը տեղադրված է միայն անցակետի մուտքի մոտ:

4.3. Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ վերաքննիչ քրեական դատարանի և վերաքննիչ վարչական դատարանի միջանցքներում բացակայել են նստարաններ դատական նիստի մեկնարկին սպասող անձանց համար, բացի այդ, դատարանները ապահովված չեն սպասասրահներով:

4.4. Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ վերաքննիչ վարչական և վերաքննիչ քրեական դատարաններում մշտադիտարկման ընթացքում բացակայել է դատական նիստերի վերաբերյալ ժամանակացույցը, ինչպես նաև արձանագրվել է, որ «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգում դատական նիստերի վերաբերյալ տեղեկատվությունը ժամանակին չի լրացվում և ծրագիրը ժամանակին չի թարմացվում, որը բավականին մեծ դժվարություններ է

առաջացնում, թե դատավարության մասնակիցների, թե՛ մշտադիտարկողների համար:

4.5. Դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածները (այցելուների հատված) հիմնականում առանձնացված են միմյանցից փայտե պատնեշներով, սակայն ՀՀ վերաքննիչ վարչական և վերաքննիչ քրեական դատարաններում կան դահլիճներ, որտեղ նշված հատվածները առանձնացված չեն:

4.6. Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դատավարության մասնակիցների համար նախատեսված նստարանների քանակի խնդիր արձանագրվել է հիմնականում վերաքննիչ քրեական դատարանում, ինչը պայմանավորված է եղել դատավարության մասնակիցների մեծ թվով, իսկ վերաքննիչ վարչական և վերաքննիչ քաղաքացիական դատարաններում խնդիրը պայմանավորված է նիստերի դահլիճների փոքր մակերեսով:

4.7. Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ դատարաններում մշտադիտարկման ժամանակահատվածում չեն կիրառվել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներ: Ինչպես նաև արձանագրվել է 5 նիստի ժամանակ, որ դահլիճն ապահովված չի եղել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներով, որից՝ 1 նիստ վերաքննիչ քրեական դատարանում, 4 նիստ՝ վերաքննիչ վարչական դատարանում:

4.8. Մշտադիտարկված 600 նիստերից միայն 100 նիստերի ընթացքում են առկա եղել բարձրախոսներ՝ դահլիճում ձայնը լսելի դարձնելու համար: Մյուս բոլոր դեպքերում բարձրախոսները բացակայել են: Ընդ որում, նշված 100 նիստերից 7 նիստը կայացել է վերաքննիչ վարչական դատարանում, 2 նիստը՝ վերաքննիչ քաղաքացիական, իսկ 91 նիստը՝ վերաքննիչ քրեական դատարանում:

5. Դատական նիստի ընդհանուր կանոնները.

5.1 Մշտադիտարկված 600 դատական նիստից 363-ի դեպքում արձանագրվել է, որ դատավարության մասնակից անձանց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են պարզ և հասկանալի լեզվով, որից՝ վերաքննիչ վարչական դատարանում՝ 143, վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 16, վերաքննիչ քրեական դատարանում՝ 204 դեպքերում: Մյուս դեպքերում իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են պարզ և հասկանալի, իսկ 53 դատական նիստերին իրավունքները և պարտականությունները չեն պարզաբանվել, որը, սակայն, պայմանավորված է եղել կողմերի բացակայությամբ և/կամ ներկայացուցիչ փաստաբանների ներկայությամբ: Թվով 3 նիստերի ընթացքում իրավունքները և պարտականությունները չեն պարզաբանվել պարզ և հասկանալի: Նշված նիստերը կայացվել են թիվ ԿԴ/0033/01/20, ԳԴ1/0026/01/22, ԵԴ1/0033/01/23 քրեական գործերի շրջանակներում: Թեև նշված դեպքերը ընդհանուր մշտադիտարկված նիստերի փոքր տոկոսն են կազմում, այնուամենայնիվ, իրավունքների ու պարտականությունների չպարզաբանման կամ ոչ պարզ ու հասկանալի պարզաբանման յուրաքանչյուր դեպք անընդունելի է:

5.2 Արձանագրվել է, որ մշտադիտարկված 600 նիստից 99 դատական նիստի վերաբերյալ տեղեկությունները ժամանակին չեն լրացվել «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

6. Դատական նիստի ընդհանուր կանոնները.

6.1. Մշտադիտարկված 600 դատական նիստերից 197-ի ընթացքում դատական նիստը հետաձգվել է, որից՝ վերաքննիչ վարչական դատարանում՝ 26 նիստ, վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 8 նիստ, վերաքննիչ քրեական դատարանում՝ 163 նիստ: Մշտադիտարկման արդյունքները վկայում են, դատական նիստերի ավելի քան 32 տոկոսը հետաձգվել են: Ընդ որում, անդրադառնալով հետաձգման պատճառներին, նշենք, որ դատական նիստերի մեծ մասը հետաձգվել է կողմերի միջնորդությամբ, այնուհետև՝ դատարանի նախաձեռնությամբ՝ կողմերի ներկայությունն ապահովելու կամ աշխատանքային ժամը լրանալու պատճառով:

6.2. Մշտադիտարկված 600 նիստերից 318-ը բացվել են նշանակված ժամին: Ամենանաշատ ուշացումներ արձանագրվել են վերաքննիչ քրեական դատարանում՝ 181 դատական նիստ՝ մեղադրողի ուշացման, ամբաստանյալի ներկայության հետ կապված խնդիրների լուծման, պաշտպանի ուշացման հետ կապված, այլ դատական նիստով ծանրաբեռնվածության, կազմից դատավորներից մեկի ծանրաբեռնվածության պատճառներով:

6.3. Մշտադիտարկված 600 դատական նիստերից 421-ի ընթացքում չի ներկայացել դատավարության մասնակիցներից որևէ մեկը, որից 398-ի դեպքում դատարանը լսել է գործին մասնակցող անձանց կարծիքը դատական նիստը շարունակելու կամ հետաձգելու վերաբերյալ: Թվով 23 դատական նիստում չի լսվել գործին մասնակցող անձանց կարծիքը դատական նիստը շարունակելու կամ հետաձգելու վերաբերյալ, որից 12-ը վերաքննիչ վարչական դատարանում, 11-ը վերաքննիչ քրեական դատարանում:

6.4. 453 դատական նիստով արձանագրվել է, որ բողոքարկվել է վեճն ըստ էության լուծող դատական ակտ: Առաջին ատյանի դատական ակտն անփոփոխ է մնացել 238 գործով, որից 112-ը վարչական, 74-ը քաղաքացիական, 52-ը քրեական գործերով: Առաջին ատյանի դատական ակտը բեկանվել է 215 գործով, որից 99-ը քրեական, 73-ը քաղաքացիական, 43-ը վարչական գործերով:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ.

- Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ դատավարության մասնակիցների նկատմամբ դատավորների վերաբերմունքը և դրսևորած վարքագիծը (միմիկա, ժեստիկուլյացիա, հեգնանք և այլն) մշտադիտարկողների մոտ առաջացրել են դատավորի վարքագծի կանոնների պահպանման հետ կապված

մտահոգություններ: **Նշված դեպքերի՝ իրավասու մարմնի կողմից քննության ադրյունքում կարող են պարզվել դատավորների կողմից վարքագծի կանոնների պահպանման հետ կապված հարցերը:**

- Վերաքննիչ քրեական դատարանում թիվ ԵԴ/1835/01/21 քրեական գործի քննության ժամանակ դատական նիստը կայացել է երկու դատավորի կազմով՝ չէր ներկայացել դատավոր Մարինե Մելքոնյանը. նշվածի վերաբերյալ բացատրություն չի տրվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Առաջարկության հասցեատեր մարմին/կառույց.

Դատարանի աշխատակազմ

1. Մինչ զննություն իրականացնելն իրազեկել անձանց զննության կարգի մասին տեղեկատվական պաստառների կամ կարգադրիչների միջոցով:
2. Դատարանում փակցված տեղեկատվական պաստառներում ներառված տեղեկատվությունը դարձնել ընթեռնելի և մատչելի քաղաքացիների համար:
3. Ապահովել, որ դատական նիստի վերաբերյալ տեղեկությունները ժամանակին լրացվեն ԴատաԼեքս տեղեկատվական համակարգում:

Դատական դեպարտամենտ, Արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ

4. Դատարաններն ապահովել զննության սարքերով:
5. Դատարաններն ապահովել սպասասրահներով՝ դատական նիստի մեկնարկին սպասելու, ինչպես նաև գործի նյութերին ծանոթանալու համար:
6. Դատարաններում ապահովել նիստերի ժամանակացույցի հանրային հասանելիությունը:
7. Անհրաժեշտ է դատական նիստերի դահլիճների թիվը համապատասխանացնել նույն դատարանում գործող դատավորների թվին, որպեսզի յուրաքանչյուր դատավոր ունենա իր դահլիճը՝ իր անվան նշումով և համարակալմամբ:
8. Քաղաքացիների համար ավելի մատչելի կլինի նույնականացնել դատական նիստերի դահլիճը, եթե դահլիճների վրա նշվի նիստը վարող դատավորի անունը, ինչպես ՀՀ վարչական դատարանի Երևանի նստավայրի դահլիճների մեծ մասի դեպքում է:
9. Դատարաններն ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով՝ տեսաձայնագրություն հանդիսացող ապացույցների հետազոտման և այլ դատավարական գործողություններ կատարելու նպատակով:
10. Դատարանները զինել անհրաժեշտ տեխնիկական պայմաններով՝ դատավորի և դատավարության մասնակիցների խոսքը լսելի դարձնելու, դահլիճում օդափոխությունը

և օպտիմալ աշխատանքային ջերմաստիճանն ապահովելու, ինչպես նաև դատավարության կողմերի համար բավարար քանակի նստարանների խնդիրը լուծելու համար:

11. Ստեղծել դատական ակտերի հրապարակման ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկման արդյունավետ ընթացակարգեր:
12. Փոփոխություններ և լրացումներ կատարել թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշման մեջ՝ դատարանների նախագահների կողմից մշտադիտարկվող հարցերի շրջանակում նախատեսելով նաև դատական ակտերի հրապարակման վերաբերյալ հարցեր:
13. Վերապատրաստել դատավորներին հանրության ներկայացուցիչների կողմից դատական նիստերին մասնակցության, ձայնագրման, գրառումներ կատարելու կարգի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Առաջարկության հասցեատեր մարմին/կառույց.

Դատական դեպարտամենտ, Արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ

14. Փոփոխություններ և լրացումներ կատարել թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշման 14-րդ կետում՝ սահմանելով զեկույցների պարտադիր հրապարակման պահանջ:
15. Ներդնել դատական նիստերի հետաձգման պատճառների հետազոտության գործիքակազմ՝ պարզելու համար դրանց հիմնավորվածությունը, նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Հետազոտման արդյունքների մասին պարբերաբար իրազեկել հանրությանը:

16. Վարել վիճակագրություն հետևյալ հարցերի վերաբերյալ.
    - վաղեմության հիմքով կարճված գործերի թիվը (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի),
    - ավարտված գործերի քննության միջին տևողությունը՝ ըստ նիստերի քանակի (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի),
    - ավարտված գործերի քննության միջին տևողությունը՝ ըստ ժամանակի (հաշվարկի միավոր՝ ժամ) (այդ թվում՝ ըստ դատաքննության նախապատրաստության, դատաքննության և դատական ակտի կայացման փուլերի միջին տևողության) (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի),
    - ավարտված գործերով քանի՞ դատական նիստ չի կայացվել և ի՞նչ հիմքերով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի),

- ավարտված գործերով քանի՞ դատական նիստ հետաձգվել է և ի՞նչ հիմքերով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի),
- քանի՞ վարչական գործ է քննվել գրավոր ընթացկարգով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայերի):
- քանի՞ քրեական գործ է քննվել համագործակցության վարույթով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայերի):
- քանի՞ քրեական գործ է քննվել համաձայնեցման վարույթով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
- քանի՞ դատավոր է գործուղվել այլ դատարան (քաղաքացիական, քրեական, վարչական), ովքե՞ր են գործուղվել, որքա՞ն ժամանակով, քանի՞ գործ են ստացել և ավարտել գործուղման ընթացքում (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):
- քանի՞ դեպքում է դատական տուգանք նշանակվել փորձագետի նկատմամբ, ով անհիմն կերպով հրաժարվել կամ խուսափել է փորձաքննություն նշանակելու մասին դատարանի որոշման կատարումից (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):
- քանի՞ գործով է նշանակվել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):
- քանի՞ գործի (քրեական, քաղաքացիական, վարչական) վարույթ է կասեցվել փորձաքննություն նշանակելու հիմքով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Առաջարկության հասեցատեր մարմին/կառույց.

Դատարանի աշխատակազմ

1. Ապահովել, որ դատական նիստի վերաբերյալ տեղեկությունները ժամանակին լրացվեն ԴատաԼեքս տեղեկատվական համակարգում:

Դատական դեպարտամենտ, Արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ

2. Դատարաններն ապահովել սպասասրահներով՝ դատական նիստի մեկնարկին սպասելու, ինչպես նաև գործի նյութերին ծանոթանալու համար:
3. Դատարաններում ապահովել նիստերի ժամանակացույցի հանրային հասանելիությունը:

4. Դատարաններն ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով՝ տեսաձայնագրություն հանդիսացող ապացույցների հետազոտման և այլ դատավարական գործողություններ կատարելու նպատակով:
5. Դատարանները զինել անհրաժեշտ տեխնիկական պայմաններով՝ դատավորի և դատավարության մասնակիցների խոսքը լսելի դարձնելու, դահլիճում օդափոխությունը և օպտիմալ աշխատանքային ջերմաստիճանն ապահովելու համար, դատավարության կողմերի համար բավարար քանակի նստարանների խնդիրը լուծելու համար:
6. Այն դահլիճներում, որտեղ դեռևս դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածներն (այցելուների հատված) առանձնացված չեն՝ առանձնացնել:
7. Սահմանել որոշակի ժամանակահատվածներ դատարանների գործունեությունը և դատական նիստերը լուսաբելու համար: Ցանկալի է լուսաբանելու նպատակով յուրաքանչյուր դատարանում լինեն դատարանի մամլո խոսնակներ:
8. ԴատաԼեքս համակարգում գեներացնել Վերաքննիչ քրեական դատարանի կողմից լրացվող տեղեկատվության ամսաթվերը, ինչպես իրականացվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տեղադրվող տեղեկատվության դեպքում, գեներացնել յուրաքանչյուր գործողության ստեղծման ամսաթիվը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2022 թվականին մեկնարկած «Արդարացի դատահրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակում մշակվել է արդար դատաքննության իրավունքի վիճակի մշտադիտարկման մեթոդաբանությունը՝ նպատակ ունենալով գնահատել քաղաքացիական, քրեական և վարչական դատավարությունների համապատասխանությունն արդար դատաքննության իրավունքի միջազգային չափանիշներին և բացահայտել համակարգային բնույթ կրող խնդիրները դատական համակարգում՝ ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի ապահովման համատեքստում:

Մշտադիտարկման ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից՝

- Դատական նիստերի մշտադիտարկում.
- Դատական գործերի և օրենսդրության վերլուծություն:

Մշտադիտարկման մեթոդաբանությունը մշակվել է՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների լեհական հելսինկյան հիմնադրամի փորձը[2] և դատական գործերի մշտադիտարկման վերաբերյալ ԵԱՀԿ ուղեցույցները [3]:

Հայաստանում ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի մշտադիտարկման համար ՀՔԱՎ գրասենյակը կատարել է իրավիճակի նախնական ուսումնասիրություն, վերհանել է արդար դատաքննության իրավունքի ապահովման և պաշտպանության հիմնախնդիրները և հարցերը:

Արդար դատաքննության իրավունքի վիճակի նախնական հետազոտության արդյունքում մշակվել է մշտադիտարկման 3 հայեցակարգ.

1. «Հրապարակային դատաքննության իրավունքը՝ համաձայն ՄԻԵԿ 6-րդ հոդվածի»[4],

2. «Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը՝ համաձայն ՄԻԵԿ 6-րդ հոդվածի»[5]

3. «Դատարանի անկախությունը»:

Հայեցակարգերի հիման վրա պատրաստվել է մշտադիտարկման գործիքակազմը:

Սույն զեկույցը նպատակ չի հետապնդում անդրադառնալու հայեցակարգերում տեղ գտած բոլոր հետազոտական հարցերին և օպերատիվ խնդիրներին:

Միաժամանակ մշակված հայեցակարգերը կարող են օգտագործվել դատական ոլորտի հիմնահարցերով զբաղվող այլ կազմակերպությունների կամ անհատների կողմից՝ իրենց ուսումնասիրությունների կամ մշտադիտարկումների համար:

Իրավիճակի վերաբերյալ հավաստի տվյալներ ձեռք բերելու համար օգտագործվել են տեղեկատվության հավաքագրման և մշակման հետևյալ մեթոդները.

- հարցազրույցներ դատավորների, փաստաբանների և դատախազների հետ,
- «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում հրապարակված գործերի ուսումնասիրություն,
- վիճակագրական տվյալների համեմատական ուսումնասիրություն,
- հարցում պետական մարմիններին,
- դիտարկում,
- փորձարկում,

---

[2] https://hfhr.pl/en/about-us/who-we-are

[3] Տե՛ս օրինակ՝ Бюро ОБСЕ по демократическим институтам и правам человека (БДИПЧ), Мониторинг судебных процессов. Справочное руководство для практиков, ISBN 978-92-9234-863-2, ОБСЕ, 2013, https://www.refworld.org/ru/reference/handbook/osce/2013/ru/137554 [доступ 14 September 2024]:

[4] Տե՛ս Հավելված N 1:

[5] Տե՛ս Հավելված N 2, Հավելված N 3, Հավելված N 4:

➢ իրավունքի վերլուծություն:

Մշտադիտարկման ծրագրի շրջանակներում կատարված հետազոտությունը ներառել է 2018-2022 թթ. վիճակագրական տվյալների վերլուծությունը:

Դատական նիստերի մշտադիտարկումն իրականացվել է Լոռու, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում և Երևանում: Մշտադիտարկումն ընդգրկել է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության, մասնագիտացված և վերաքննիչ դատարանները:

ՀՔԱՎ գրասենյակը 2023 թ. հունվարից մինչև հունիս ամիսը մշտադիտարկել է 1249 դատական նիստ առաջին ատյանի դատարաններում (448 դատական նիստ քաղաքացիական գործերով, 465 դատական նիստ քրեական գործերով, 336 դատական նիստ վարչական գործերով), 2023 թ. դեկտեմբերից մինչև 2024 թ. ապրիլ ամիսը 600 դատական նիստ վերաքննիչ ատյանի դատարաններում (327 դատական նիստ քրեական գործերով, 25 նիստ քաղաքացիական գործերով, 248 դատական նիստ վարչական գործերով):

Հայաստանի դատական համակարգի գործունեության վերաբերյալ համապարփակ տվյալներ ստանալու նպատակով դատարաններն ընտրվել են տարբեր մարզերից, նեռավել են ինչպես մայրաքաղաքը, այնպես էլ սահմանամերձ մարզերը, ինչպես մեծ, այնպես էլ փոքր քաղաքներ:

Դատարանների նստավայրերը որոշվել են հիմք ընդունելով դատարանների ծանրաբեռնվածությունը (2022 թ.-ին դատարան ստացված գործերի ընդհանուր թիվը) և ՀՔԱՎ գրասենյակի կողմից արձանագրված արդար դատաքննության իրավունքի խախտումների աշխարհագրությունը:

Նիստերի քանակն ըստ դատարանների բաշխվել է հաշվի առնելով ընտրված դատարանների կողմից քննված գործերի ծավալը: Նախօրոք ուսումնասիրվել են նշված դատարանների կողմից քննված գործերի և ավարտված գործերի քանակը 2021-2022թթ.-ին և համապատասխան տոկոսային հարաբերությամբ բաշխվել է մշտադիտարկվելիք նիստերի քանակն ըստ դատարանների ծանրաբեռնվածության:

Աղյուսակ 1.Առաջին և Վերաքննիչ դատարաններում մշտադիտարկված նիստերի թիվը՝ ըստ նստավայրերի

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում մշտադիտարկված նիստերը քաղաքացիական գործերով		
Մարզ	**Նստավայրեր, դտական նիստերի թվեր**	**Նիստեր**
Լոռի	**Վանաձոր (21), Սպիտակ (21), Ալավերդի (21)**	**63**
Տավուշ	**Դիլիջան**	**23**
Շիրակ	**Գյումրի (28), Արթիկ (29), Մարալիկ (9)**	**66**
Գեղարքունիք	**Սևան (16), Գավառ (15),**	**31**
Սյունիք	**Սիսիան**	**22**
Երևան	**Էրեբունի (76), Աջափնյակ (88), Արաբկիր (79)**	**243**
		448
Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում մշտադիտարկված նիստերը քրեական գործերով		
Մարզ	**Նստավայրեր, դտական նիստերի թվեր**	**Նիստեր**

Լոռի	Վանաձոր (25), Սպիտակ (20)	45
Տավուշ	Իջևան	27
Շիրակ	Գյումրի (26), Մարալիկ (20)	46
Գեղարքունիք	Սևան (11), Գավառ (11), Մարտունի (10)	32
Սյունիք	Գորիս (36)	36
Երևան	Կենտրոն (89), Շենգավիթ (87), Ավան (103)	279
		465

Վարչական դատարանում մշտադիտարկված նիստերը		
Մարզ	Նստավայրեր, դտական նիստերի թվեր	Նիստեր
Երևան	Երևան	175
Լոռի	Վանաձոր	53
Շիրակ	Գյումրի	52
Գեղարքունիք	Սևան	23
Սյունիք	Սիսիան	33
		336

Վերաքննիչ դատարաններում մշտադիտարկված նիստերը	
Դատարան	Նիստեր
Վերաքննիչ քրեական դատարան	327
Վերաքննիչ քաղաքացիական դատարան	25
Վերաքննիչ վարչական դատարան	248
	600

Դատական նիստերը մշտադիտարկվել են՝ հիմք ընդունելով ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի սկզբունքները: Մշտադիտարկումն ընդգրկել է հրապարակային դատաքննության ամբողջ ընթացքը՝ նախնական դատական լսումից մինչև վճռի հրապարակումը: Մշտադիտարկման մեթոդաբանությունը կառուցվել է՝ խստորեն պահպանելով պրոֆեսիոնալիզմի, օբյեկտիվության, անաչառության և չմիջամտելու սկզբունքները:

Մշտադիտարկմամբ հավաքագրված տվյալները մուտքագրվել են էլեկտրոնային և թղթային դիտարկման քարտերում[6]:

Մշտադիտարկողները ստացված տվյալները լրացրել են երեք տեսակի դիտարկման քարտերում՝

1. «Գործի հրապարակային և ողջամիտ քննության իրավունքի մշտադիտարկման քարտ. «Դատարանի շենքը»»[7],

[6] Տ՛ես Հավելված N 7:

[7] «Դատարանի շենք» մշտադիտարկման քարտը մշտադիտարկողի կողմից լրացվում է մեկ անգամ դիտարկման ողջ ժամանակահատվածում:

2. Գործի հրապարակային և ողջամիտ քննության իրավունքի մշտադիտարկման քարտ. «Դատարանի մուտքը»[8],

3. Գործի հրապարակային և ողջամիտ քննության իրավունքի մշտադիտարկման քարտ. «Դատական լսում»[9]:

Մշակվել է տվյալների շտեմարան (բազա)[10]՝ դատական նիստերի մշտադիտարկման ընթացքում հավաքագրված տվյալների անվտանգ պահպանման համար:

Յուրաքանչյուր մշտադիտարկող ստացել է անհատական աշխատանքային պլան, որը ներառել է տեղեկատվություն մշտադիտարկման ենթակա դատական նիստերի քանակի, վայրի և մշտադիտարկման ընդհանուր կանոնների վերաբերյալ: Մշտադիտարկողներն իրենք են ընտրել լսումները, որոնք պետք է դիտարկեն կազմակերպության կողմից տրված ուղեցույցի համաձայն:

Լրացված դիտարկման քարտերը ստուգվել են երկու փուլով: Առաջին փուլում շտկվել են տեխնիկական հարցերը քարտերում և քարտերի առցանց տվյալների բազայում: Երկրորդ փուլի ընթացքում համակարգող թիմը ստուգել է առցանց տվյալների բազայում լրացված քարտերը՝ համեմատելով դրանք թղթային տարբերակների հետ:

Մարտահրավերները

Մշտադիտարկման արդյունքներն ամփոփելու նպատակով ՀՔԱՎ գրասենյակը հարցումներ է ուղարկել ՀՀ դատական դեպարտամենտ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության վարչական դատարան, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասություն դատարան, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ վարչական և Վերաքննիչ քրեական դատարաններ:

Հարցումներին ի պատասխան ներկայացված տեղեկատվության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ վիճակագրություն չի վարվում հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. 2018 թվականից 2022 թվականն առաջին ատյանի դատարանների (քաղաքացիական, քրեական, վարչական) դատավորների թիվը (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ <u>ըստ դատարանների նստավայրերի</u>):

---

[8] «Դատարանի մուտքը» մշտադիտարկման քարտը մշտադիտարկողի կողմից լրացվում է օրը մեկ անգամ, երբ մշտադիտարկողը մուտք է գործում դատարան:

[9] «Դատական լսում» մշտադիտարկման քարտը մշտադիտարկողի կողմից լրացվում է ամեն անգամ, երբ մշտադիտարկողը դիտարկում է կոնկրետ դատական նիստը:

[10] www.hcav.work

2. 2018 թվականից 2022 թվականը քանի՞ կասեցված գործի վարույթ է վերսկսվել (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
3. 2018 թվականից 2022 թվականը քանի՞ գործ է քննվել դռնփակ դատական նիստում:
4. 2018 թվականից 2022 թվականը քանի՞ գործի (քաղաքացիական, քրեական, վարչական) վարույթ է կարճվել վաղեմության հիմքով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
5. 2018 թվականից 2022 թվականն ավարտված գործերի (քաղաքացիական, քրեական, վարչական) քննության միջին տևողությունը՝ ըստ նիստերի քանակի (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
6. 2018 թվականից 2022 թվականն ավարտված գործերի (քաղաքացիական, քրեական, վարչական) քննության միջին տևողությունը՝ ըստ ժամանակի (հաշվարկի միավոր՝ ժամ) (այդ թվում՝ ըստ դատաքննության նախապատրաստության, դատաքննության և դատական ակտի կայացման փուլերի միջին տևողության) (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
7. 2018 թվականից 2022 թվականն ավարտված մինչդատական քրեական վարույթի գործերը՝ ըստ տեսակների (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
8. 2022 թվականին առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական, քրեական և վարչական իրավահարաբերությունների բարդության պարզ, միջին, բարդ, առանձնապես բարդ մակարդակ ունեցող քանի՞ գործ է քննվել՝ ըստ բարդության մակարդակ ունեցող գործերի և ի՞նչ ժամկետներում են քննվել (ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
9. 2018 թվականից 2022 թվականն ավարտված (քաղաքացիական, քրեական, վարչական) գործերով քանի՞ դատական նիստ չի կայացվել և ի՞նչ հիմքերով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
10. 2018 թվականից 2022 թվականը քանի՞ վարչական գործ է քննվել գրավոր ընթացկարգով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայերի):
11. 2021 թվականից 2022 թվականը քանի՞ քրեական գործ է քննվել համագործակցության վարույթով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայերի):
12. 2021 թվականից 2022 թվականը քանի՞ քրեական գործ է քննվել համաձայնեցման վարույթով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
13. 2021 թվականից 2022 թվականը քանի՞ համաձայնեցման վարույթի կիրառման միջնորդություն է ներկայացվել (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
14. 2021 թվականից 2022 թվականը քանի՞ համագործակցության վարույթի կիրառման միջնորդություն է ներկայացվել (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատավորների և դատարանների նստավայրերի):
15. 2018 թվականից 2022 թվականը դատարաններում (քաղաքացիական, քրեական, վարչական) թափուր հաստիքների քանակը, որքա՞ն ժամանակ են այդ հաստիքները

թափուր մնացել (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):

16. 2018 թվականից 2022 թվականը քանի՞ դատավոր է գործուղվել այլ դատարան (քաղաքացիական, քրեական, վարչական), ովքե՞ր են գործուղվել, որքա՞ն ժամանակով, քանի՞ գործ են ստացել և ավարտել գործուղման ընթացքում (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):
17. 2018 թվականից 2022 թվականը քանի՞ դեպքում է դատական տուգանք նշանակվել փորձագետի նկատմամբ, ով անհիմն կերպով հրաժարվել կամ խուսափել է փորձաքննություն նշանակելու մասին դատարանի որոշման կատարումից (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):
18. 2018 թվականից 2022 թվականը քանի՞ գործով է նշանակվել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):
19. 2018 թվականից 2022 թվականը քանի՞ գործի (քրեական, քաղաքացիական, վարչական) վարույթ է կասեցվել փորձաքննություն նշանակելու հիմքով (յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դատարանների նստավայրերի):

Բացի այդ, մշտադիտարկումը ցույց է տվել, որ Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի ընդհանուր իրավասության դատարաններում, Վարչական դատարանի Գորիսի նստավայրում դատավորների բացակայության պատճառով դատարան ստացված գործերով դատական նիստեր չէին նշանակվում տևական ժամանակ: Նման դեպքերը մարտահրավեր են ինչպես մշտադիտարկման իրականացման, այլ, որ առավել կարևոր է, բուն արդարադատության իրավունքի երաշխավորման տեսակետից:

Հիմք ընդունելով մշտադիտարկողների կողմից դատարաններում արձանագրված դատական նիստերի չնշանակման դեպքերը՝ ծրագրի իրականացման ընթացքում կատարվել է գործերի վերաբաշխում և մշտադիտարկման ժամկետի երկարաձգում:

Մշտադիտարկողների վերապատրաստումը

Մինչև դատական նիստերի մշտադիտարկումը, բոլոր մշտադիտարկողներն անցել են վերապատրաստում, ստացել տեսական և գործնական գիտելիքներ արդար դատաքննության իրավունքի, մշտադիտարկման գործիքների, վարքագծի կանոնների և այլ վերաբերելի հարցերի մասին:

Կազմակերպվել է թվով չորս 3-4-օրյա դասընթաց Լոռու, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի մարզերի և Երևանի մշտադիտարկողների թեկնածուների համար: Ընտրված 107 թեկնածուներից դասընթացներին մասնակցել են 72-ը: Դասընթացի 46 մասնակիցներ դասընթացի ընթացքում դրսևորեցին լավագույն արդյունքները և ընտրվեցին:

2023 թվականի օգոստոսի 17-19-ը կազմակերպվել է «Արդար դատաքննության իրավունքի մշտադիտարկում քրեական, քաղաքացիական և վարչական վերաքննիչ դատարաններում» վերտառությամբ դասընթաց: Դասընթացին մասնակցելու հայտ է ներկայացրել 34 անձ, 25-ը՝ ընտրվել են, և դասընթացին փաստացի մասնակցել են 17-ը, որոնք հետագայում ընտրվել են որպես մշտադիտարկող: Դասընթացի մասնակիցների ընտրության գործընթացում հաշվի է

առնվել նրանց բնակության վայրը, ինչը հանգեցրել է մարզերից դիմորդների բացառմանը՝ Երևանում վերաքննիչ դատարանների կենտրոնացված լինելու հանգամանքով:

Նիստերի ընտրության կարգ

Մշտադիտարկողն ինքն է ընտրում դիտարկվելիք նիստը: Մշտադիտարկումը սկսվում է այցի պահին սկվող նիստից, եթե միաժամանակ մի քանի նիստ է սկսվում, մշտադիտարկողը ընտրում է դատավորի ազգանունով՝ այբբենական կարգով առաջին նիստը:

Երկրորդ նիստի ընտրությունը. ըստ ժամանակացույցի մշտադիտարկողը ընտրում է հաջորդ նիստը, եթե նույն ժամին մի քանի նիստ է մեկնարկում, ընտրությունը կրկին կատարվում է այբբենական կարգով:

Նույն դատավորի մոտ նույն օրը երկրորդ նիստը մշտադիտարկվում է միայն այն դեպքում, երբ առաջիկա 1-2 ժամվա ընթացքում այլ նիստեր չկան սկսվող: Նույն օրվա ընթացքում չի թույլատրվում դիտարկել 3-ից ավել նիստ:

ՈՂՋՄԱԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԸՍՏ ՄԻԵԿ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ

Գործը ողջամիտ ժամկետում քննելը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) դիտում է որպես անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) նշում է, որ այս երաշխիքի նպատակն է դատական քննության բոլոր մասնակիցների իրավունքների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունը և վստահությունը վերջինիս նկատմամբ: «Ողջամիտ ժամկետի» էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում, դրանով իսկ վերջ տալով անորոշությանը, որում գտնվում է այս կամ այն անձը՝ կապված նրա քաղաքացիաիրավական կարգավիճակից կամ նրան առաջադրված քրեական մեղադրանքից[11]: Ըստ ՄԻԵԴ կողմից ձևավորված նախադեպային իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքը ներառում է նաև ողջամիտ ժամկետում դատական ակտերի ընդունումն ու կատարումը:

Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով ամրագրված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի միջև առկա է համակարգային կապ, ավելին, 6-րդ հոդվածի 1-ին կետը համարվում է lex specialis նորմ 13-րդ հոդվածի նկատմամբ, և ՄԻԵԴ-ը ձեռնպահ է մնում 13-րդ հոդվածի խախտումների վերաբերյալ բողոքները քննելուց այն գործերում, որտեղ արձանագրել է 6-րդ հոդվածի 1-ին կետի

[11] ԴՆԽ թիվ 98 որոշում, հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24944 :

խախտում[12]: Գործի քննության անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի ելքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը:

Վարույթի տևողության գնահատումը խիստ անհատական է և հիմնված է կոնկրետ գործի հանգամանքների վրա: Վարույթի նույն տևողությունը կարող է մի դեպքում համարվել ողջամիտ, մյուս դեպքում՝ ոչ: ՄԻԵԴ-ը կիրառում է վերահսկողության տարբեր չափանիշներ այն գործերում, որոնք ներառում են համակարգային խնդիր ազգային մակարդակում (Իտալիա, Լեհաստան, Սերբիա): Եթե խնդիրը համակարագային է և մշտական, ՄԻԵԴ-ը կիրառում է ապացուցման ավելի ցածր չափանիշ, հատկապես, երբ նախկինում կայացված նախադեպային իրավունքով սահմանվել էր խախտումների դեմ արդյունավետ ներպետական պաշտպանության միջոցների բացակայությունը[13]: ՀՀ դեմ 6-րդ հոդվածի խախտման հիմքով կայացված վերջին՝ Վասիլյան ու այլոք ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ը, վկայակոչելով Ֆիլլ ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ գործը, արձանագրել է նման խնդիր և արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայություն:

Պահանջելով, որպեսզի գործերը քննվեն «ողջամիտ ժամկետում»՝ Կոնվենցիան ընդգծում է, առանց ձգձգումների, արդարադատության իրականացման կարևորությունը: Ձգձգումները կարող են վնասել արդարադտության արդյունավետությունն ու վստահելիությունը: 6-րդ հոդվածի 1-ին կետը պարտավորեցնում է պայմանավորվող պետություններին այնպես կազմակերպել իրենց իրավական համակարգերը, որպեսզի դատարաններն ապահովեն դրա տարբեր պահանջների իրականացումը[14]:

Կոնվենցիոն նշված պահանջն իր արտացոլումն է գտել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից՝ գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով»:

ՄԻԵԴ-ը մշակել է դատավարությունների տևողության գնահատման չափանիշներ, որոնցից յուրաքանչյուրը ստացել է մանրամասն մեկնաբանություն դատարանի նախադեպային իրավունքում, ընդ որում, նշված չափանիշները կիրառելի են նաև քաղաքացիական դատավարության նկատմամբ: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ քաղաքացիաիրավական վեճերով կոնվենցիոն իրավունքը կիրառելի է և՛ մասնավոր, և՛ հանրային/ոչ քրեական/ իրավունքի նկատմամբ, հետևաբար մայրցամաքային իրավական

[12] Length of court proceedings in the member states of the Council of Europe based on the case law of the European Court of Human Rights, European Commission for the Efficiency of Justice (CEPEJ), 2018, p. 13.

[13] RIGHT TO A TRIAL WITHIN A REASONABLE TIME - COMPARATIVE OVERVIEW Based on the expertise of: Elton Lula Dženana Hadžiomerović Bekim Sejdiu Zoran Gavriloski Tea Gorjanc Prelević Ana Knežević Bojović, December, 2022, p. 12.

[14] Guide on Article 6 of the European Convention on Human Rights - Right to a Fair Trial (Civil Limb), 31 August 2020, par. 270.

համակարգին բնորոշ, քաղաքացիական և վարչական իրավունքների տարբերակումը տվյալ դեպքում կիրառելի չէ[15]:

ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դատավարական ժամկետների պահպանումը և ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքի խախտումը լուրջ մարտահրավեր է ՀՀ դատական և իրավական համակարգի պատշաճ գործունեության համար, որը, սակայն, ծագել է վաղուց և ներկայումս, խնդրի տևական չլուծման պայմաններում, ստացել է համակարգային բնույթ: Խնդրի տևականությունը հանգեցրել է նրան, որ ՄԻԵԿ-ի վավերացումից հետո[16] մինչև 2023 թ.-ը, ՄԻԵԴ-ը ՀՀ դեմ կայացրել է 196 վճիռ, որոնցից 67-ով արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Նշված վճիռներից 13-ով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերաբերում է ողջամիտ ժամկետում գործի քննությանը, այդ թվում վճիռների տևական չկատարմանը[17]:

Ողջամիտ ժամկետում գործերի քննության սկզբունքը պահպանելու համար ներպետական դատական համակարգը խորքային բարեփոխման կարիք ունի, իսկ բարեփոխումները բարդ և դանդաղ գործընթացներ են, որոնք հաճախ ներառում են փորձարկման և սխալ լուծումների բազմաթիվ դեպքեր:

Դեռևս «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրությամբ նախատեսվել էր դատավարական ժամկետների ձգձգումների հետևանքով ածանց իրավունքների սահմանափակման դեպքերը բացառելու ուղղությունը[18]: Այնուհետև ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարությամբ կրկին արձանագրվել է գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման, դատական նիստերի չարդարացված հետաձգումների խնդիրը, խախտումների դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների սահմանման անհրաժեշտությունը և նախանշվել են միջոցառումներ, որոնք պատշաճ չեն կատարվել[19]: Այնուհետև նույն խնդիրը հաջորդաբար արձանագրվել է դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ և 2022-2026թթ ռազմավարություններում:

---

[15] Տե՛ս Length of court proceedings in the member states of the Council of Europe based on the case law of the European Court of Human Rights, , European Commission for the Efficiency of Justice (CEPEJ), 2018, էջ 32:

[16] 2001 թ. հունվարի 2-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան: 2002 թ. ապրիլի 26-ից Կոնվենցիան մտել է ուժի մեջ և անձինք, այդ թվում ՀՀ քաղաքացիները հնարավորություն են ստացել դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ Հայաստանի Հանրապետության կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների պաշտպանության նպատակով:

[17] Տես հավելված N6:

[18] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66236

[19] https://www.moj.am/storage/files/improvements/improvements_5091018222_753.pdf

2022-2026թթ. ռազմավարությամբ սահմանվեց, որ դատական իշխանության անկախության ապահովման կարևոր նախադրյալներից են (...), դատական գործերի քննության ողջամիտ ժամկետների լիարժեք պահպանման ապահովումը և դատահրավական ժամկետների խնայողության սկզբունքի արդյունավետ իրականացման նպատակի իրացումը:

Գործող ռազմավարությամբ նշված նպատակին հասնելու համար նախատեսվել են մի շարք ուղղություններ և գործողություններ, մասնավորապես քաղաքացիական, քրեական, վարչական, սնանկության վարույթների շրջանակներում իրականացվող դատական գործառույթների իրականացումը էլեկտրոնային եղանակով, էլեկտրոնային ծանուցումների վերաբերյալ առավել արդյունավետ կարգավորումների նախատեսումը, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը, դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման համակարգի արդիականացումը՝ դատավորների ծանրաբեռնվածության և գործերի բարդության հաշվառմամբ, մասնագիտացված դատարանների և դատավորների ենթամասնագիտացումների ձևավորումը, փորձագիտական գործունեության արդյունավետության բարձրացումը:

Ողջամիտ ժամկետներում գործերի քննության խնդրին զեկույցներով անդրադարձել են ներպետական տարբեր մարմիններ և պաշտոնատար անձինք: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2020թ. հրապարակված «Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայության վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում արձանագրել է ողջամիտ ժամկետում գործի դատական քննության խախտված իրավունքի վերականգնամն օրենսդրական հնարավորության բացակայությունը[20]:

Ողջամիտ ժամկետներում քրեական գործերի քննության խնդիրը արձանագրվել է նաև ՀՀ դատախազության 2022թ. գործունեության մասին ՀՀ Ազգային ժողովին ներկայացրած հաղորդմամբ, որում առանձին գլուխ է նախատեսվել «Քրեական գործերի քննության ժամկետների ձգձգում (ուշացած արդարադատություն)» վերտառությամբ:

Համաձայն հաղորդման՝ 2022 թվականի ընթացքում 244 քրեական գործեր (վարույթներ) կարճվել են վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով: Դատարաններում քննվող գործերով 2022 թվականին 343 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները լրանալու հետևանքով[21]:

2022 թվականի ընթացքում ավարտված քրեական գործերի 55.5%-ը քննվել է մինչև 2 ամիս (2021 թվականին՝ 55.1%), 20.6%-ը՝ մինչև 4 ամիս (2021 թվականին՝ 15.8%), 10.8%-ը՝ մինչև 6 ամիս (2021 թվականին՝ 9.6%), 8.6%-ը՝ մինչև 1 տարի (2021 թվականին՝ 12.8%), 4.5 %-ը՝ 1 տարուց ավելի ժամկետում (2021 թվականին՝ 6.1%): 2022 թվականի ընթացքում քննված քրեական գործերի 13.1%-ի նախաքննությունը տևել է 6 ամսից ավելի, այդ թվում՝ 4.5%-ը մեկ տարուց ավելի[22]:

---

[20] Հասանելի է՝ https://ombuds.am/images/files/e722139fe25348c1076dae0df9496c55.pdf:

[21] Հաղորդում՝ Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին, հասանելի է՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf, էջ. 133:

[22] Տե՛ս նույն տեղում:

Քրեական գործերի քննության ժամկետների ձգձգման օբյեկտիվ պատճառներից է քրեական վարույթների քանակի աճը: Քրեական գործերի ժամկետների ձգձգման սուբյեկտիվ պատճառներից է քննիչների, դատախազների և դատավորների ոչ բարեխիղճ վերաբերմունքն իրենց պարտականությունների նկատմամբ, նույն գործով դատավորների հաճախակի փոփոխությունը, դատական նիստերի օրերի միջև ժամանակային երկար միջակայքերը[23]:

Որպես ՀՀ-ում դատավարական ժամկետների խախտման հիմնական պատճառներ վերը թվարկված ռազմավարություններում և մասնագիտական քննարկումներում ներկայացվում են դատավորների գերծանրաբեռնվածությունը և դատավորների ու դատական անձնակազմի՝ դատարանների վարույթներում քննվող գործերի ծավալներին ոչ համամասնական թիվը:

Երևան քաղաքում 2018թ. ընթացքում ստացված քաղաքացիական գործերի/հայցադիմումների, դիմումների/ թիվը կազմել է 32671, որից վարույթ են ընդունվել 22665/69.37%/, 2019թ. ընթացքում ստացված քաղաքացիական գործերի/հայցադիմումների, դիմումների/թիվը կազմել է 46518, որից վարույթ են ընդունվել 40728/87,55%/, 2020 թվականին՝ 36947, որից վարույթ են ընդունվել 32849 / 88,91 %/, 2021 թվականին՝ 59166, որից վարույթ են ընդունվել 52972/89,53 %/, 2022 թվականին՝ 67364, որից վարույթ են ընդունվել 60473 /89,77 %/:

Երևան քաղաքում 2018թ. ընթացքում ստացված քրեական գործերի թիվը կազմել է 1078, 2019թ. ընթացքում ստացված գործերի թիվը կազմել է 1288, 2020 թվականին՝ 1423, 2021 թվականին՝ 1984, 2022 թվականին՝ 2149:

Վարչական դատարանում 2018թ. ընթացքում ստացված գործերի թիվը կազմել է 13909, որից վարույթ են ընդունվել 11992 /86,22 %/, 2019թ. ընթացքում՝ 12629, որից վարույթ են ընդունվել 9815 /77,72 %/, 2020 թվականին՝ 12622, որից վարույթ են ընդունվել 8905 /70,55 %/, 2021 թվականին՝ 15431, որից վարույթ են ընդունվել 13217 /85,65 % /, 2022 թվականին՝ 9886, որից վարույթ են ընդունվել 8540 /86,38 %/:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից 2018 թվականի հուլիսի 9-ին ընդունված թիվ ԲԴԽ-23-Ն-1 որոշման համաձայն՝ 18.01.2024թ. դրությամբ ՀՀ-ում պաշտոնավարում են ընդհանուր թվով 303 դատավորներ:

Միջազգային իրավական և քաղաքական մակարդակներում նույնպես արձանագրվել է Հայաստանում դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրը: Այսպես, ԱՄՆ Պետքարտուղարության զեկույցում բացի դատավորների թվի սակավությունից որպես դատարանների ծանրաբեռնվածության ավելացմանը նպաստող գործոն նշվել է բողոքարկվող դատական ակտերի բարձր մակարդակը: Դա պայմանավորված է ինչպես դատական համակարգի նկատմամբ հանրային անվստահությամբ, այնպես էլ դատախազների կողմից արդարացման դատավճիռները որպես կանոն բողոքարկելու մարտավարական մոտեցմամբ[24]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում դատական գործերի քննության երկար տևողության պատճառները տարբեր են: Ընդ որում, որոշ պատճառներ նույնանում են

[23] Տե՛ս նույն տեղում:
[24] https://www.state.gov/reports/2022-country-reports-on-human-rights-practices/armenia/

դատավարության տարբեր ճյուղերի դեպքում, իսկ որոշները՝ բնորոշ են միայն դատավարության կոնկրետ տեսակին:

Պատճառների թվում են.

- դատարանի գերծանրաբեռնվածությունը,
- դատավորների և դատարանների աշխատակազմի անբավարար թիվը,
- դատավորների տեղափոխությունները,
- դատարանների անգործությունը,
- դատական սխալները, որոնց հետևանքով գործերը վերաքննության արդյունքում որպես կանոն հետ են ուղարկվում առաջին ատյանի դատարան՝ կրկին քննության,
- կրկնվող իրավական սխալները, որոնք հանգեցնում են վճիռների բեկանմանը,
- իրավասության, ենթակայության և ընդդատության վերաբերյալ խնդիրներ,
- գործի նյութերի ուշ փոխանցումները, ուշացումները, որոնք վերագրվում են փաստաբաններին,
- կողմերի կամ վկաների մասնակցությունն ապահովելը,
- փորձագետների աշխատանքի նկատմամբ վերահսկողության բացակայությունը,
- լսումների հաճախակի հետաձգումները, լսումների միջև հաճախակի ընդմիջումները,
- վճիռների կայացման և գրանցման կամ կողմերին հանձնման միջև տևական ժամանակը[25]:

Ներկայումս, թեև ԲԴԽ որոշմամբ նախատեսվել են գործերի քննության միջին ուղենիշային ժամկետներ, թեև ողջամիտ ժամկետում գործերի քննության խախտման հիմքով կայացվում են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումներ և որպես ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումներից պաշտպանության միջոց՝ ներդրված է փոխհատուցման ինստիտուտ, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված է նման դեպքերում ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավական հնարավորություն (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ՝ փոխկապակցված նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի և 17-րդ հոդվածի 1-ին մասի հետ), <u>այնուամենայնիվ գործերի քննությունը շարունակում է տևել երկար և գործնականում բացակայում են դրանց ողջամիտ ժամկետներում ապահովելուն ուղղված օրենսդրական և գործնական արդյունավետ միջոցները</u>:

Որպես օրինակ, նշենք, որ 2012 թվականի մայիսի 15-ին վարչական դատարան է մուտքագրվել «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձոր գրասենյակ» ՀԿ-ի հայցն ընդդեմ ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, որը դատարանի 2012 մայիսի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Գործի քննությունը տևել է շուրջ 8 տարի, և միայն 2020 թվականի մայիսի 07-ին դատարանը կայացրել է վճիռ, որը սակայն դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարկվել է 2021 թվականի սեպտեմբերի 25-ին: Գործը քննել է Վարչական դատարանի դատավոր Արշակ Ալավերդյանը:

[25] Length of court proceedings in the member states of the Council of Europe based on the case law of the European Court of Human Rights, EUROPEAN COMMISSION FOR THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ), 2018, p 4.

2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԲԴԽ-101-Ո-Կ-27 որոշմամբ Բարձրագույն դատական խորհուրդը որոշել է. «1. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը՝ Վարչական դատարանի դատավոր Արշակ Ալավերդյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Վարչական դատարանի դատավոր Արշակ Ալավերդյանին հայտարարել խիստ նկատողություն»:

Թիվ ԵԴ/54146/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը քննելով «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձոր գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ֆինանսների նախարարության՝ արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը հաստատելու և ոչ նյութական վնասի հատուցման պահանջների մասին հայցը՝ 13.12.2023թ. կայացրած վճռով հայցը բավարարվել է:

2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 19-ը Բարձրագույն դատական խորհուրդը կարգապահական գործերով կայացրել է 17 որոշումներ[26]: 17 որոշումներից 6-ով քննված կարգապահական վարույթի շրջանակներում բարձրացվել են դատավարական ժամկետների և ողջամիտ ժամկետում գործերի քննության պահանջի պահպանման հարցեր: Այսինքն, 2023 թվականի ընթացքում քննված կարգապահական վարույթների ավելի քան 1/3-ը վերաբերում է դատավարական ժամկետներին և ողջամիտ ժամկետում գործերի քննությանը: Հատկանշական է, որ 6 որոշումներում էլ Բարձրագույն դատական խորհուրդը հաստատել է դատավարական ժամկետների խախտման փաստը, սակայն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումները բավարարել է 4-ով: Մյուս 2 որոշումներով, ԲԴԽ գնահատմամբ, թեև դատավորների կողմից թույլ են տրվել ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի և դատավարական ժամկետների խախտումներ, սակայն խախտումները դատավարության մասնակիցների համար որևէ բացասական իրավական հետևանք չի առաջացրել, չի բացառել դատավարության մասնակիցների իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը: Այսինքն, թեև խախտումները թեև առերևույթ պարունակել են կարգապահական խախտման հատկանիշներ, այնուամենայնիվ նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չեն դրել դատավորների

[26] Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ռուբեն Բունիաթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 03.07.2023թ. կայացրած թիվ ԲԴԽ-48-Ո-Կ-13 որոշումը; Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մուրադ Հովակիմյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 12.06.2023թ. կայացրած թիվ ԲԴԽ-48-Ո-Կ-15 որոշում; Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արթուր Ստեփանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 27.02.2023թ. կայացրած թիվ ԲԴԽ-20-Ո-Կ-7 որոշում; Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդուարդ Ամալյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 26.01.2023թ. կայացրած թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-5 որոշում; Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հովհաննես Մելքոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 23.01.2023թ. կայացրած թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-2 որոշում; Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Փիլոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 26.12.2022թ. կայացրած թիվ ԲԴԽ-116-Ո-Կ-27 որոշումը:

համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Եվ՛ ՀՀ Սահմանադրությամբ, և՛ Եվրոպական կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության իրավունքը է երաշխավորում է յուրաքանչյուրի անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդար և հրապարակային դատաքննության իրավունքը: Նշված իրավունքի իրացման համար նվազագույն հնարավոր երաշխիքներն են հանդիսանում հրապարակային դատական լսումները, ինչպես նաև դատական ակտերի հրապարակումը:

Ի՞նչ է հրապարակային դատաքննությունը

- Հրապարկայնությունն արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքներից է:
- Հրապարակայնությունը ենթադրում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի կիրառում՝ պայմանավորված կոնկրետ դատավարական առանձնահատկություններով:
- Հրապարակային դատաքննության իրավունքը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրությամբ հստակ նախատեսված հանգամանքների առկայության դեպքում (ՍԴՈ-1452, 02.04.2019 թ.)

Հրապարակային դատաքննության նպատակն է կանխել արդարադատության իրականացումը հանրությունից գաղտնի՝ ապահովելու գործում ներգրավված կողմերի իրավունքների պաշտպանությունը: Սա նաև դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ապահովելու հիմնարար ուղիներից է[27]: Այսպիսով, դատավարության հրապարակային անցկացումը նվազեցնում է արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումների ռիսկերը:

Հրապարակային դատաքննության իրավունքը ենթադրում է.

- Տեղեկացված լինել դատարանի և դատավորների նստավայրերի, դատարանում քննվող գործերի տեսակների մասին.
- Հեշտորեն հասնել գործի քննության վայր.
- Տեղեկացված լինել, թե ո՞րտեղ և ե՞րբ է քննվելու դատական գործը.

[27] Judgment of 8 December 1983 in the Axen case, Series A: Judgments and Decisions, Volume 72 (1983), p. 12.

- Ներկա գտնվել դատական նիստին և հետևել դատաքննության ընթացքին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
- Ծանոթանալ ավարտված դատական գործին, որի վերաբերյալ դատական ակտն ուժի մեջ է մտել:

Հրապարակային դատաքննության իրավունքը դատական գործի բնույթից ելնելով պահանջում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգերի կիրառում: Այսպիսով, «գործը բանավոր քննելու» իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում, երբ, օրինակ, հարցը չի վերաբերում փաստերի և ապացույցների ուսումնասիրությանը: Օրինակ՝ ՀՀ վարչական դատարանում, ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում որոշ գործերով դատաքննությունը իրականացնում է գրավոր ընթացակարգով:

Գործի գրավոր քննության դեպքում հրապարակայնության սկզբունքը չի խախտվում, եթե.

- պայմանավորված է բացառիկ հանգամանքներով,
- իրականացվում է արագ դատաքննությունն ապահովելու նկատառումներով,
- պայմանավորված է քննվող գործի առանձնահատկությամբ,
- սկզբունքորեն կիրառվում է իրավունքի վերաբերյալ հարցեր լուծելիս, ինչպես նաև փաստական այնպիսի հանգամանքներ քննելիս, որոնք արդարացված են գրավոր ընթացակարգի պայմաններում (ՍԴՈ-1452):

Հրապարակային դատաքննության իրավունքը հատկապես կարևոր է քրեական դատավարությունում, որտեղ մեղադրյալը, ընդհանուր առմամբ, պետք է կարողանա մասնակցել առաջին ատյանի դատարանում նիստին, ի թիվս այլնի, ի պաշտպանություն իրեն ցուցմունք տալ, լսել իր դեմ ներակայացված ապացույցները, հարցաքննել վկաներին[28]: Չնայած այն հանգամանքին, որ գործի հրապարակային քննության պահանջը քրեական իրավունքի ոլորտում ամենախիստն է, ՄԻԵԴ-ը, հիմնվելով քրեական մեղադրանքների ինքնավար մեկնաբանման պրակտիկայի վրա, այս չափանիշը կիրառել է նաև վարչական գործերի նկատմամբ:

Հրապարակային դատաննության իրավունքը երաշխավորելու համար դատարանները պետք է տեղեկատվություն տրամադրեն դատավարության կողմերին և հանրությանը դռնբաց դատական նիստերի ժամի և վայրի մասին, ողջամիտ սահմաններում ապահովեն հանրության անդամների ներկայության համար համապատասխան պայմաններ[29]:

Նույնիսկ այն դեպքերում, երբ հանրությանը թույլ չի տրվում մասնակցել դատական նիստերին, դատարանի որոշումները, ներառյալ հիմնական եզրակացությունները,

[28] Guide on Article 6 of the European Convention on Human Rights - Right to a Fair Trial (Criminal Limb), par. 163-164.

[29] КПЧ, Замечание общего порядка № 32, §28; Ван Мёрс против Нидерландов, КПЧ, док. ООН CCPR/C/39/D/215/1986 (1990) §6.2; Рипан против Австрии (35115/97), Европейский суд (2000) §29.

ապացույցները և իրավական եզրահանգումները, պետք է հրապարակվեն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Այսպիսով, դատական նիստերը հիմնականում պետք է բաց լինեն հանրության համար, ներառյալ լրատվամիջոցների, և չսահմանափակվեն միայն որոշակի դատավարական կարգավիճակ ունեցող անձանցով[30]:

Որոշ դեպքերում թույլատրվում է հրապարակային դատաքննության իրավունքից հրաժարում՝ պայմանով, որ հրաժարումը բխում է շահագրգիռ անձի շահերից՝ իր կամքով, առանց նրա վրա ճնշում գործադրելու, միանշանակ ձևով և օրենքով նախատեսված հիմքերով[31]:

Մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»: (ՄԻԵԿ, 6 (1))

Դատական վարույթը կամ դրա մի մասն օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով (Սահմանադրություն 63(2)):

Դատական նիստի դռնփակ անցկացումը կարող է վերաբերել ինչպես ամբողջ գործին, այնպես էլ առանձին նիստերին: Այնուամենայնիվ, լսումների անցկացումը ամբողջությամբ կամ մասամբ դռնփակ, պետք է խստորեն թելադրվի գործի հանգամանքներով[32]:

Նախքան քրեական գործով դռնփակ դատաքննություն անցկացնելու որոշում կայացնելը, դատարանները պետք է կոնկրետ եզրակացություններ անեն, որ դռնփակ վարույթն անհրաժեշտ է բավական կարևոր հանրային շահը պաշտպանելու համար, և գաղտնիությունը պետք է կիրառվի միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է այդ շահը պաշտպանելու նպատակով[33]:

Քրեական կամ քաղաքացիական գործով դատարանի ցանկացած որոշում պետք է հրապարակային լինի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի. դատարանի որոշումը հրապարակվում է. (Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված):

---

[30] КПЧ Замечание общего порядка № 32, §29.

[31] Решение от 27 февраля 1980 года по делу Deweer, п. 24-29.

[32] Welke and Bialek v. Poland, § 74; Martinie v. France, § 40.

[33] Belashev v. Russia par. 83; Welke and Bialek v. Poland para. 77:

Դատական վարույթների հրապարակայնության հետ կապված 6-րդ հոդվածի նպատակն է «ապահովել հանրային վերահսկողություն դատական իշխանության նկատմամբ և դրանով իսկ երաշխավորել արդար դատաքննության իրավունքը»[34]: Դատարանը չընդունեց «վճիռը պետք է հրապարակվի հրապարակայնորեն» բառացի մեկնաբանությունը և փոխարենը իր նախադեպային իրավունքում հաշվի առավ Եվրոպայի խորհրդի շատ երկրներում «ձևավորված ավանդույթը» հանրությանը հաղորդել իր որոշ կամ բոլոր դատարանների որոշումների մասին[35]:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում վճռի հրապարակման ձևը պետք է ընտրվի և գնահատվի պատասխանող պետության ներքին օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով կոնկրետ վարույթի առանձնահատկությունները և հղում կատարելով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակին և խնդրին[36]:

Վճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, որը ենթադրում է, որ անհրաժեշտ է հրապարակավ ընթերցել դատավճիռը: Այդուհանդերձ, ՄԻԵԴ-ը գտել է, որ «վճիռն այլ ճանապարհով ընթերցելը» նույնպես կարող է համապատասխանել 6-րդ հոդվածի 1-ին կետին (Moser-ն ընդդեմ Ավստրիայի, 2006, § 101):

ՀՀ դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտերը, իսկ օրենքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում (http://www.datalex.am/):

Եթե դատական վարույթը կամ դրա մի մասը անցկացվում է դռնփակ, դատական իշխանության կայքում հրապարակվում է եզրափակիչ դատական ակտի եզրափակիչ մասը, եթե այն չի պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք: Եզրափակիչ դատական ակտի՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող եզրափակիչ մասը հրապարակվում է դռնփակ նիստում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Գործի հրապարակային քննության իրավունքը խոցելի է դառնում դռփակ դատական նիստերի անցկացման դեպքում: Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

Պետական անվտանգության պաշտպանության նկատառումներով դռնփակ քննվող դատական գործերը հիմնականում դուրս են մնում հասարակական վերահսկողությունից,

[34] ECHR, case of Preto and Others v. Italy, judgment of 8 December 1983, para.71.
[35] Guide on Article 6 of the European Convention on Human Rights - Right to a Fair Trial (Criminal Limb), par.318-319.
[36] ECHR, case of Preto and Others v. Italy, judgment of 8 December 1983, para.26.

հետևաբար առաջնային է դառնում հրապարակային դատաքննության իրավունքի սահմափակման իրավաչափության գնահատման հարցը:

2021 թվականին ՄԻԵԴ-ը Հայրապետյանն ընդդեմ ՀՀ գործով ճանաչեց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ հրապարակային դատաքննության բացակայության մասով[37]:

Հայրապետյանն ընդդեմ ՀՀ գործով դիմումատուն բողոքել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, որ ներպետական դատարանների՝ ամբողջ դատավարությունը դռնփակ անցկացնելու որոշումը հանգեցրել է նրան, որ իր դատավարությունը եղել է անարդար:

ՄԻԵԴ-ը ընդունել է, որ թեև դիտարկվող որոշումը պայմանավորված է եղել ազգային անվտանգության նկատառումներով՝ հաշվի առնելով, որ դիմումատուի դեմ հարուցված գործն առնչվում է հնարավոր պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող ապացույցների քննությանը, միևնույն ժամանակ վերահաստատել է, որ գործի նյութերում գաղտնազերծված տեղեկատվության առկայությունը ինքնաբերաբար չի ենթադրում դատավարությունը հանրության համար փակ անցկացնելու անհրաժեշտություն՝ առանց հավասարակշռելու ազգային անվտանգության խնդիրները դռնբաց դատական նիստի հետ (տե՛ս Բելեշևի գործը, § 83)[38]:

ՄԻԵԴ-ը նշել է, որ Հայաստանի դատարանը չի պարզաբանել դիմումատուի գործով ամբողջ դատավարությունը դռնփակ անցկացնելու պատճառները՝ ի հակադրություն դրա միայն որոշ հատվածները դռնփակ անցկացնելու: Այն նաև որևէ միջոց չի ձեռնարկել հավասարակշռելու համար Պետության՝ իր գաղտնիքները պահպանելու շահը և արդարադատության պատշաճ իրականացման գործում հանրության վստահության վրա դիմումատուի դատավարությունը դռնփակ դատական նիստում անցկացնելու մասին որոշման բացասական ազդեցությունը[39]:

Չնայած նրան, որ ՄԻԵԴ-ի կողմից միայն մի գործով է արձանագրվել հրապարակային դատաքննության իրավունքի խախտում, ողջ դատավարության դռնփակ անցկացումը բավական տարածված պրակտիկա է Հայաստանի դատարանների համար:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԸ

Կանոն

Դատարանների վարչական շենքերում սահմանվում են բաց և կիսափակ գոտիներ: Վարչական շենքի բաց գոտին վարչական շենքի այն հատվածն է, որտեղ գտնվում են գրասենյակի սպասարկման սրահը, դատական նիստերի և մյուս դահլիճները, սպասասրահները: Վարչական շենքերի բաց գոտիներ մուտքն ազատ է բոլոր այցելուների

[37] https://hudoc.echr.coe.int/?i=001-214206; https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160855
[38] https://hudoc.echr.coe.int/?i=001-214206; https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160855
[39] Տե՛ս նույն տեղում:

համար: Վարչական շենքի փակ գոտին վարչական շենքի այն հատվածն է, որը ներառում է արգելված և սահմանափակ գոտիները[40]:

ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի հունվարի 24-ի «Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-5-Ն-2 որոշման (ԲԴԽ-5-Ն-2 որոշում) համաձայն՝ արգելվում է ժամկետանց փաստաթղթերով մուտքը վարչական շենք:

Այսպիսով, Դատարանի վարչական շենքի բաց գոտիներ մուտք գործելու համար ԲԴԽ-5-Ն-2 որոշումը անձը հաստատող փաստատուղթ ներկայացնելու պարտադիր պահանջ չի սահմանում:

Մշտադիտարկմամբ արձանագրված ընդհանուր բնույթի տեղեկություններ

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ դատական կարգադրիչի կողմից անձը հաստատող փաստաթուղթ պահանջվել է հիմնականում այն ժամանակ, երբ մշտադիտարկողը առաջին անգամ էր մուտք գործում դատարան, հետագայում արդեն մշտադիտարկողն առանց անձը հաստատող փաստաթղթի իրականացնում էր մշտադիտարկումը:

Մշտադիտարկման ժամանակ գրանցվել է դեպք, երբ դատական կարգադրիչն արգելել է իրականացնել մշտադիտարկում դատարանում մշտադիտարկողի մոտ բեյջի բացակայության պատճառով:

«2023 թվականի փետրվարի 22-ին, ժամը 13:40-ի սահմաններում մուտք գործեցի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոնի նստավայր: Դատական կարգադրիչը հետաքրքրվեց այցիս նպատակով: Ես ներկայացա, ներկայացրի այցիս նպատակը, որից հետո կարգադրիչը պահանջեց բեյջ: Առանց բեյջի արգելեցին մշտադիտարկել, ասելով, որ դատարանի մուտքն ազատ է բոլորի համար, նիստին կարող եք ներկա գտնվել, բայց մշտադիտարկել միայն բեյջով: Որից հետո ես դատարանից դուրս եկա (մշտադիտարկող Մ. Միդոյան, քարտ 7/285, 22.02.2023:)

Մշտադիտարկողներից դատական կարգադրիչները պահանջել են ներկայացնել անձնագիր 165 անգամ, որևէ փաստաթուղթ չի պահանջվել 368 անգամ:

Այսպիսով, դատարան մուտք գործող մշտադիտարկողներից 27,93% դեպքում պահանջվել է ներկայացնել անձը հաստաթող փաստաթուղթ:

Աղյուսակ 2.Դատարան մուտք գործող մշտադիտարկողներից պահանջվող փաստաթղթերը

Փաստաթղթի տեսակ	թիվ
Ոչ մի փաստաթուղթ չի պահանջվել	368 անգամ
Անձնագիր/ID	165 անգամ
Վարորդական իրավունքի վկայական	1 անգամ[41]
Ծննդյան վկայական	1 անգամ[42]

[40] Տե՛ս «Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-5-Ն-2 որոշումը:

[41] Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սևանի նստավայր (քարտ համար 18/619)

[42] Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան Գորիսի նստավայր (քարտ համար 2/127)

Աղյուսակ 3.Դատարան մուտք գործող մշտադիտարկողներից պահանջվող փաստաթղթերը՝ ըստ դատարանի նստավայրերի

Դատարանի նստավայր	Փաստաթուղթ չի պահանջվել	Մուտքերի թիվ
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթ նստավայր	18	38
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայր	21	32
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափյակ 2-նստավայր	18	33
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունի նստավայր	28	35
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավան նստավայր	18	37
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոն նստավայր	12	40
Վարչական դատարանի Գորիսի նստավայր	0	1
Վարչական դատարանի Երևանի նստավայր	68	80
Վարչական դատարանի Վանաձորի նստավայր	10	10
Վարչական դատարանի Սևանի նստավայր	0	7
Վարչական դատարանի Գյումրու նստավայր	16	27
Սյունիքի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սիսիանի նստավայր	6	12
Սյունիքի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գորիսի նստավայր	3	16
Լոռու մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Վանաձորի նստավայր	50	52
Լոռու մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սպիտակի նստավայր	22	24
Լոռու մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Ալավերդու նստավայր	12	12
Շիրակի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Մարալիկի նստավայր	14	15
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գավառի նստավայր	5	8
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սևանի նստավայր	0	12
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Մարտունու նստավայր	6	10
Շիրակի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գյումրու նստավայր	38	52
Շիրակի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Արթիկի նստավայր	3	12
Տավուշի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Դիլիջանի նստավայր	0	12
Տավուշի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Իջևանի նստավայր	0	21
Ընդհանուր	368	598

Դատարանի նստավայր	Պահանջվել է անձնագիր	Մոլտքերի թիվ
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան Շենգավիթ նստավայր	18	38
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Արաբկիր նստավայր	8	32
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Աջափյակ 2-նստավայր	13	33
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Էրեբունի նստավայր	2	35
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան Ավան նստավայր	12	37
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան Կենտրոն նստավայր	19	40
Վարչական դատարան Գորիսի նստավայր	1	1
Վարչական դատարան Երևանի նստավայր	5	80
Վարչական դատարան Վանաձորի նստավայր	0	10
Վարչական դատարան Սևանի նստավայր	7	7
Վարչական դատարան Գյումրու նստավայր	10	27
Սյունիքի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սիսիանի նստավայր	6	12
Սյունիքի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գորի նստավայր	12	16
Լոռու մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Վանաձորի նստավայր	1	52
Լոռու մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սպիտակի նստավայր	1	24
Լոռու մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Ալավերդու նստավայր	0	12
Շիրակի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Մարալիկի նստավայր	1	15
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գավառի նստավայր	3	8
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սևանի նստավայր	11	12
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Մարտունու նստավայր	0	10
Շիրակի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրի նստավայր	11	52
Շիրակի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Արթիկի նստավայր	3	12
Տավուշի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Դիլիջանի նստավայր	10	12
Տավուշի մարզի առաջի ատյանի ընդհանուր իրավասության դատարան Իջևանի նստավայր	11	21
Ընդհանուր	165	598

ԴԱՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԵՐԸ (ԱՌԱՐԿԱՆԵՐԸ) ՋՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Կանոն

ԲԴԽ-5-Ն-2 որոշումը մանրամասն սահմանում է դատարանի շենք, դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերի զննության կարգը: Ստորև ներկայացնում ենք մշտադիտարկման համար վերաբերելի դրույթները:

Դատարանի շենք, դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձինք և նրանց իրերը ենթարկվում են զննության:

Դատարանի շենք, դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը կատարվում է տեխնիկական միջոցներով կամ այլ եղանակներով (տեսողական, լսողական, հոտառության զգայարաններով և այլն):

Զննության ընթացքում արգելվում է դատական կարգադրիչի կողմից որոնողական կամ այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք կխեղաթյուրեն դիտարկման էությունը կամ այն կվերածեն խուզարկության:

Դատական կարգադրիչը պահպանվող տարածք (դատարանի շենք, դատական նիստերի դահլիճ) մուտք գործող անձանց և նրանց իրերը զննության ենթարկելու գործառույթն իրականացնելիս պարտավոր է խստագույնս պահպանել օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և թափանցիկության սկզբունքները:

Պահպանվող տարածք մուտք գործող անձանց զննությունն իրականացվում է համապատասխան սեռի դատական կարգադրիչի կողմից:

Պահպանվող տարածք մուտք գործող անձանց և նրանց իրերը զննության ենթարկելու գործընթացը, որպես կանոն, կազմակերպվում է տեղակայված տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Համապատասխան տեխնիկական միջոցների բացակայության դեպքում զննությունն իրականացվում է տվյալ պահին առկա տեխնիկական միջոցներով (օրինակ՝ շարժական տեխնիկական միջոց և այլն):

Դատական կարգադրիչը զննություն իրականացնելուց առաջ անձին առաջարկում է իր հետ չվերցնել այն իրերը, որոնք Անվտանգության կանոնների իմաստով համարվում կամ կարող են համարվել արգելված իրեր: Միաժամանակ անձը տեղեկացվում է դատարանի վարչական շենքում գտնվող համապատասխան պահոցներից օգտվելու հնարավորության մասին (դրանց առկայության դեպքում):

Մշտադիտարկմամբ արձանագրված ընդհանուր բնույթի տեղեկություններ

Մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ոչ բոլոր դատարաններում են փակցված տեղեկատվական պաստառներ դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ: Մշտադիտարկված դատարաններից միայն Վարչական դատարանի Երևան, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոն, Շենգավիթ, Երևան քաղաքի

ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում էին առկա նմանատիպ պաստառներ:

Այն դատարաններում, որտեղ մշտադիտարկողները հայտնաբերել են դատարան մուտք գործող անձանց և նրանց իրերի զննության մասին տեղեկատվական թերթիկներ, գնահատել են դրանք ոչ մատչելի քաղաքացիների համար, քանի որ պարզապես փակցված է եղել ԲԴԽ-5-Ն-2 որոշումը՝ տպված ուշադրությունը չգրավող, փոքր տառատեսակով:

Դատական կարգադրիչները շատ քիչ դեպքերում են քաղաքացիներին տեղեկացնում արգելված իրերի մասին:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայրում չկա կին դատական կարգադրիչ, ինչը խնդրահարույց է անձին զննության ենթարկելու դեպքում նրա պատվի և արժանապատվության հարգման իրավունքն ապահովելու հարցում:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սևանի նստավայրում անձի և նրա իրերի զննությունը կատարվում է միայն այն դեպքում, եթե անձը մասնակցում է քրեական գործով դատաքննությանը: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է երկու դեպք, երբ մշտադիտարկողը ենթարկվել է զննության առանձին սենյակում՝ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սևանի նստավայրում համապատասխան զննության սարքի բացակայության պատճառով:

Աղյուսակ 4. Դատարան մուտք գործող մշտադիտարկողների զննությունը

Անձի զննություն	
Քանի՞ անգամ է կատարվել անձի զննություն:	393
Քանի՞ անգամ զննություն չի կատարվել:	192
Քանի՞ անգամ է կատարվել անձի զննություն ստացիոնար մետաղափնտրիչի միջոցով:	377
Քանի անգամ է կատարվել անձի զննություն ձեռքի մետաղափնտրիչի միջոցով:	16
Քանի անգամ է կատարվել անձի զննություն առանց սարքավորումների:	1
Քանի անգամ է անձը ենթարկվել զննության առանձին սենյակում:	2

Նախքան զննությունը մշտադիտարկողները չեն տեղեկացվել, որ չեն կարող վերցնել իրենց հետ այնպիսի իրեր, որոնք արգելված են կամ կարող են համարվել արգելված անվտանգության կանոնների համաձայն 598-ից 535 կամ 89,46% դեպքերով:

Աղյուսակ 5. Դատարան մուտք գործող մշտադիտարկողների նախքան զննությունը իրականացված իրազեկումն արգելված իրերի վերաբերյալ

Քանի՞ անգամ եք, նախքան զննությունը, տեղեկացվել, որ Ձեզ հետ չեք կարող վերցնել այնպիսի իրեր, որոնք արգելված են կամ կարող են համարվել արգելված անվտանգության կանոնների համաձայն	**62**	**10,37%**
Քանի՞ անգամ եք, նախքան զննությունը, տեղեկացվել որ Ձեզ հետ չեք կարող վերցնել այնպիսի իրեր, որոնք արգելված են կամ կարող են համարվել արգելված անվտանգության կանոնների	28	4,68%

համաձայն (տեղեկատվական պաստառների կամ նյութերի միջոցով):		
Քանի՞ անգամ եք, նախքան զննությունը, տեղեկացվել, որ Ձեզ հետ չեք կարող վերցնել այնպիսի իրեր, որոնք արգելված են կամ կարող են համարվել արգելված անվտանգության կանոնների համաձայն (դատական կարգադրիչի միջոցով):	30	5,02%
Քանի՞ անգամ եք, նախքան զննությունը, տեղեկացվել, որ Ձեզ հետ չեք կարող վերցնել այնպիսի իրեր, որոնք արգելված են կամ կարող են համարվել արգելված անվտանգության կանոնների համաձայն (դատական կարգադրիչի և տեղեկատվական պաստառների միջոցով)	4	0,67%
Քանի՞ անգամ եք նախքան զննությունը, տեղեկացվե՞լ, որ Ձեզ հետ չեք կարող վերցնել այնպիսի իրեր, որոնք արգելված են կամ կարող են համարվել արգելված անվտանգության կանոնների համաձայն:	535	89,46%

Աղյուսակ 6. Իրերի զննություն

Իրերի զննություն	Թիվ
Քանի՞ անգամ է կատարվել իրերի զննություն:	102
Քանի՞ անգամ զննություն չի կատարվել:	467
Քանի՞ անգամ է կատարվել իրերի զննություն ռենտգենահեռուստատեսային սարքավորման միջոցով:	68
Քանի անգամ է կատարվել անձի զննություն ձեռքի մետաղափնտրիչի միջոցով:	15
Քանի անգամ է կատարվել իրերի զննություն առանց սարքավորումների:	19

Այսպիսով, կարող ենք տեսնել, որ դատարաններում 82,07 % դեպքում իրերի զննություն չի իրականացվել:

Դատարաններում իրերի զննության չիրականացումը պայմանավորված է համապատասխան զննության սարքերի սակավությամբ կամ բացակայությամբ:

Այսպես, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի Սպիտակ, Ալավերդի նստավայրերում, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Իջևանի նստավայրում բացակայում է զննության որևէ սարք:

Վարչական դատարանի Սևանի նստավայրում, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գավառի, Սևանի նստավայրերում, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գորիս նստավայրում, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարալիկ և Արթիկ նստավայրերում կիրառվում է միայն ձեռքի մետաղափնտրիչ:

Որպես օրինակելի դատարաններ այս հարցում կարելի է նշել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավան և Շենգավիթ նստավայրերը, որտեղ օգտագործվում է ստացիոնար մետաղափնտրիչը, ռենտգենահեռուստատեսային սարքավորումը և ձեռքի մետաղափնտրիչը:

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Դատական նիստի ժամի և վայրի մասին տեղեկատվությունը պետք է տեղադրվի «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում: Վերջին շրջանում «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգը հաճախակի խափանվում է, որն անհնար է դարձնում կայացվող դատական նիստերի մասին տեղեկություն ստանալը: Բացի այդ, մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում տվյալները մուտքագրվում են ուշացումով կամ ընդհանրապես չեն լրացվում: Հայաստանի դատարաններում բացակայում է դատական նիստերի ժամանակացույցի կազման պարտադիր պահանջ: Դատական կարգադրիչների մոտ է հիմնականում առկա լինում նիստերի ժամանակացույցը, սակայն այն համարվում է աշխատանքային փաստաթուղթ և մուտք գործող քաղաքացիներին հասանելի չէ այդ տեղեկությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, «... որ դատավարությունը համապատասխանում է հրապարակայնության պահանջին միայն այն դեպքում, եթե հանրությունը ի վիճակի է տեղեկատվություն ստանալ դրա ամսաթվի և վայրի մասին, և եթե այդ վայրը հեշտությամբ հասանելի է հանրությանը»[43]: Հետևաբար, դատարաններից պահանջվում է տեղեկատվություն տրամադրել հանրությանը՝ բանավոր լսումների ժամանակի և վայրի վերաբերյալ[44]:

Դատական նիստերի ժամանակացույցը պետք է պարբերաբար փակցվի դատարանի շենքի ներսում, դատարանի մուտքի մոտ կամ նիստերի դահլիճներում: Այս տեղեկատվությունը պետք է ներառի մանրամասներ, ինչպիսիք են նիստի անցկացման ամսաթիվը և վայրը, ինչպես նաև այն դատարանի անվանումը, որտեղ այն անցկացվում է[45]:

Մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ հիմնականում դատական նիստերի ժամանակացույցը կազմվում է դատական կարգադրիչների համար՝ դատական նիստի բնականոն ընթացքի ապահովման հետ կապված լիազորությունները կատարելու նպատակով:

Մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ ՀՀ վարչական դատարանի Երևանի նստավայրում և Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում դատական նիստերի ժամանակացույցերը փակցվում են և հասանելի են հանրությանը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Դատարանի նստավայրերը	Կենտրոն, Շեգավիթ, Ավան, Աջափնյակ-1
Դատավորների թիվը	36
Դատարանի նախագահը	Մնացական Մարտիրոսյան
Մշտադիտարկված նիստերի թիվը	279

[43] Airey v Ireland [1979] ECHR 3, para 25.

[44] Riepan v Austria [2000] ECHR 575, para 29.

[45] Տե՛ս Справедливое судебное разбирательство в международном праве: юридический сборник, БДИПЧ ОБСЕ, 2013, https://www.osce.org/files/f/documents/e/e/100894.pdf, էջ 90:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի փոխարեն 2023 թվականի հունվարից ստեղծվեցին երկու առանձին՝ քաղաքացիական և քրեական մասնագիտացված դատարաններ[46]: Առանձին դատարանների ստեղծումը նպատակ էր հետապնդում հաղթահարել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գերծանրաբեռնվածությունը[47]: Քանի որ դատարանի նստավայրերը բաժանված են եղել ըստ դատավորների մասնագիտացման, 2018-2022 թթ. տվյալները կիրառելի են՝ դատարանի ծանրաբեռնվածությունը պարզելու համար:

Աղյուսակ 7. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան ստացվացած և փոխանցված գործերի թիվը

	2018	2019	2020	2021	2022
Ստացված գործերի թիվը	1078	1288	1423	1984	2149
Փոխանցված գործերի ընդհանուր թիվը	939	910	1321	1812	2497
	2017	2198	2744	3796	4646
Ընդամենն ավարտվել են գործեր	1064	844	873	1242	1668

2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան ստացված և փոխանցված գործերի թիվն աճել է 2629-ով կամ 130,34%-ով:

Գծապատկեր 1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում քննվող գործերի թիվը 2018-2022 թթ.



[46] Տե՛ս 23.12.2022,ՀՕ-575-Ն օրենքը:

[47] Տե՛ս ավելի մանրամասն՝ https://www.e-draft.am/projects/4762/justification:

2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ավարտված գործերի թիվն աճելը 604-ով կամ 56,76%-ով:

Գծապատկեր 2. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ավարտված գործերի տոկոսը 2018-2022 թթ.



2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում փոխանցված գործերի թիվն աճել է 1558-ով կամ 165,92%-ով:

Գծապատկեր 3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում փոխանցված գործերի տոկոսը 2018-2022 թթ.



2018-2022թթ. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում դատավորների հաստիքների քանակը եղել է 25, 2023 թվականին՝ 34, 2024 թվականին՝ 36:

2018-2020թթ. ընթացքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և քրեական վարույթների քննությունը կատարում էին դատարանի քրեական մասնագիտացման բոլոր դատավորները: 2021 թվականին «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 03.02.21թ. ՀՕ-265-Ն օրենքով սահմանվեց, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորները քննելու են մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները:

03.02.21թ. ՀՕ-265-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում նշանակվեց 8 դատավոր:

Դատական համակարգում «քրեական մասնագիտացման առանձին դատավորների» ինստիտուտի ներդրումը ձախողվեց և 2022 թ.-ին 23.12.2022, ՀՕ-575-Ն օրենքի ուժի մեջ մտելուց հետո մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի քննությունը վերադարձվեց քրեական մասնագիտացման բոլոր դատավորներին:

Միչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող 8 դատավորներից 5-ը նշանակվեց Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, 2-ը Լոռի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, 1 դատավոր որևէ դատարանում չնշանակվեց:

Բացի այդ, ՀՕ-575-Ն օրենքով ՀՀ տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր

միջնորդությունների քննությունը փոխանցվեց Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորներին:

Հայաստանում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննում են 4 դատավորներ՝ Մնացական Մարտիրոսյանը (հանձնվող գործերի 5%), Արթուր Մկրտչյանը (հանձնվող գործերի 75%), Դավիթ Արղամանյանը (հանձնվող գործերի 75%,), Ջոն Հայրապետյանը (հանձնվող գործերի 75%)[48]:

Երևան քաղաքի քրեական և քաղաքացիական դատարանների առանձնացման արդյունավետությունը կարող է գնահատվել մի քանի տարի հետո միայն՝ համեմատելով դատարանի ծանրաբեռնվածությունը նախորդ տարիների համեմատ:

Հարկ ենք համարում արձանագրել, որ քրեական մասնագիտացման դատավորների թվի ավելացումը (2018թ. համեմատությամբ՝ 2024 թ.-ին ավելացել է 11-ով) դրական ազդեցություն

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան

Կենտրոն նստավայր

Շենքի տարածքը	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոնի նստավայր
Դատավորների թիվը	7
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	2-5 րոպե
Դահլիճների թիվը	7
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ, Ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Առկա է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Առկա է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը կատարվում է ստացիոնար մետաղափնտրիչի միջոցով: Կարգադրիչները տեղեկացրել են, որ ձեռքի մետաղափնտրիչը կիռավում է միայն բացառիկ դեպքերում:

[48] https://www.arlis.am/documentview.aspx/Res/DocumentView.aspx?docid=195204

Մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ մշտադիտարկման սկզբնական փուլում մշտադիտարկողներին թույլ չէին տալիս մտնել դատարան առանց բեյջի և կատարել գրառումներ դատական նիստերի ժամանակ: Առանձին դեպքերում մշտադիտարկողների իրերի զննությունը կատարվել է առանց սարքավորումների:

Դատական նիստերի ցուցակը պահվում է դատական կարգադրիչների մոտ, որը հասանելի չէ այլ անձանց համար:

«Կարգադրիչներից մեկի մոտ առկա էր ձեռագիր տարբերակով նիստերի ժամանակացույցը, որը թաքցվում էր: Կարգադրիչների ղեկավարը թաքցրեց այդ թուղթը, պնդելով՝ այն իմաստ չունեցող թուղթ է»: (Մշտադիտարկող Ն. Բոցինայն, քարտ 1/79/, 01/19/2023)



Դատարանի մուտքը

Դատարանի առաջին հարկը

Շենքի տարածքը	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթ նստավայր
Դատավորների թիվը	7
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5
Դահլիճների թիվը	7
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ, ռենտգենահեռուստատեսային սարքավորում, ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Առկա է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Առկա է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում





Դատարան մուտք գործող անձանց զննությունը կատարվում է ստացիոնար մետաղափնտրիչի, նրանց իրերի զննությունը՝ ռենտգենահեռուստատեսային սարքավորման

միջոցով: Դատարանի մուտքում տեղադրված են պահոցներ՝ արգելված իրերի պահման համար:



Դատական նիստերի ժամանակացույցը գտնվում է դատական կարգադրիչների մոտ, ովքեր անհրաժեշտության դեպքում տրամադրում էին մշտադիտարկողներին, ինչպես նաև թույլատրում էին լուսանկարել: Մշտադիտարկողները արձանագրել են Երևան քաղաքի դատարանի Շենգավիթ նստավայրի դատական կարգադրիչների հարգալից վերաբերմունքը մշտադիտարկողների, այցելուների նկատմամբ, նաև նրանց պատրաստակամությունը տրամադրելու անհրաժեշտ տեղեկատվությունը՝ կայացվող դատական նիստերի վերաբերյալ: Դատարան մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը դատական կարգադրիչները կատարում էին օրենսդրությամբ սահմանված կարգով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան

Ավան նստավայր

Շենքի տարածքը	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավան նստավայր
Դատավորների թիվը	11
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	10-15
Դահլիճների թիվը	9
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ, ռենտգենահեռուստատեսային սարքավորում, ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Առկա է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Դատարան մուտք գործող անձանց զննությունը կատարվում է ստացիոնար մետաղափնտրիչի, նրանց իրերի զննությունը՝ ռենտգենահեռուստատեսային սարքավորման միջոցով: Դատարանում առկա են պահոցներ արգելված իրերի պահման համար:

Նիստերի ժամանակացույցը ձեռագիր տարբերակով առկա է միայն կարգադրիչների մոտ:

Իրերի զննության սարքը



Դատական նիստերի ժամանակացույց

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան

Դատարանի նստավայրերը	Էրեբունի, Արաբկիր, , Աջափնյակ-2
Դատավորների թիվը	40
Դատարանի նախագահը	Ավագ Գաբրիելյան
Մշտադիտարկված նիստերի թիվը	279

2023 թվականի հունվարից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը վերակազմակերպվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների[49]: Առանձին դատարանների ստեղծումը նպատակ էր հետապնդում հաղթահարել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գերծանրաբեռնվածությունը[50]: Քանի որ դատարանի նստավայրերը բաժանված են եղել ըստ դատավորների մասնագիտացման, 2018-2022 թթ. տվյալները կիրառելի են դատարանի ծանրաբեռնվածությունը պարզելու համար:

Աղյուսակ 8. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ստացվացած, փոխանցված, վարույթ ընդունված և ավարտված գործերի թիվը

	2018	2019	2020	2021	2022
Ստացված գործերի թիվը	32671	46518	36947	59166	67364

[49] Տե՛ս 23.12.2022,ՀՕ-575-Ն օրենքը:

[50] Տե՛ս ավելի մանրամասն՝ https://www.e-draft.am/projects/4762/justification

Փոխանցված գործերի ընդհանուր թիվը	20225	22150	30005	19125	30068
Ընդունվել է վարույթ	22665	40728	32849	52972	60473
Ընդամենն ավարտվել են գործեր	22191	33285	43090	42520	53004

Գծապատկեր 4. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ստացված և փոխանցված գործերի թիվը, դատարանում դատավորների թիվը



2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ստացված և փոխանցված գործերի թիվն աճել է 44536-ով կամ 84,19%-ով: 2018-2022թթ.ընթացքում միայն 2020 թվականին է գրանցվել ստացված և փոխանցված գործերի թվի նվազում 2,50%-ով:

2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում ավարտված գործերի թիվն աճելը 30813-ով կամ 138,85%-ով[51]:

Գծապատկեր 5. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում

[51] Ավարտված գործերի տոկոսը հաշվարկվել է ընդունված վարույթների և փոխանցված գործերի հանրագումարից:

քննվող գործերի թիվը



Գծապատկեր 6. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում ավարտված գործերը 2018-2022թթ.



2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում փոխանցված գործերի թիվն աճելը 9843-ով կամ 48.66%-ով:

Գծապատկեր 7. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում փոխանցված գործերը 2018-2022թթ.



2018-2022թթ. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում դատավորների հաստիքների քանակն եղել է 2018թ.՝ 41, 2019թ.՝ 37. 2020թ.՝ 37, 2021թ.՝ 38, 2021թ.՝ 37, 2022թ.՝ 37, 2023թ.՝ 37:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան

Արաբկիր նստավայր

Շենքի տարածքը	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Արաբկիր նստավայր
Դատավորների թիվը	14
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5 րոպե
Դահլիճների թիվը	10
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ, Ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Առկա է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է

Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը կատարվում է ստացիոնար մետաղափնտրիչի միջոցով: Մշտադիտարկողները արձանագրել են, որ Դատարանի միջանցքում, որտեղ տեղադրված է նստարանը, լուսավորությունը բավարար չէ գրառումներ կատարելու կամ փակցված տեղեկատվական պաստառներն ընթերցելու համար: Դատական նիստերի ցուցակը գտնվում է կարգադրիչի մոտ, այն համարվում է աշխատանքային փաստաթուղթ կարգադրիչների համար և չի տրամադրվում այլ անձանց, այսինքն հասանելի չէ հանրությանը:



Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Էրեբունի նստավայր

Շենքի տարածքը	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունի նստավայր
Դատավորների թիվը	11
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5-10 րոպե
Դահլիճների թիվը	7

Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է, հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը կատարվում է ստացիոնար մետաղափնտրիչի միջոցով: Դատարանում պահարաններ կամ պահոցներ չկան արգելված իրերը թողնելու համար: Դատական կարգադրիչները հայտնել են մշտադիտարկողներին, որ ցանկության դեպքում իր(եր)ը հանձնվում է(են) կարգադրիչին և պահվում են կարգադրիչների սենյակում:

Մշտադիտարկողներն արձանագրել են, որ Դատարանի կարգադրիչները բարեհամբույր և հարգալից են եղել, մշտապես ուղղորդել համապատասխան դահլիճը գտնելու համար ինչպես մշտադիտարկողներին, այնպես էլ դատարան մուտք գործող այլ անձանց:

Դատական նիստերի ժամանակացույցը պահվում էր դատական կարգադրիչների մոտ, որոնք անհրաժեշտության դեպքում տրամադրում էին մշտադիտարկողներին, ինչպես նաև թույլատրում էին լուսանկարել այն:



Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան

Աջափնյակ-2 նստավայր

Շենքի տարածքը	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2 նստավայր (շենքի 10-րդ և 11-րդ հարկերը), ԴԱՀԿ,
Դատավորների թիվը	15
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5 րոպե
Դահլիճների թիվը	11
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	-
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է, հասանելի, գտնվում է լավ սանիտարական վիճակում

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2 նստավայրը գտնվում է ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության շենքի 10-11-րդ հարկերում:



Այցելուների և դատարանի աշխատակիցների սպասարկման համար վերելակները առանձնված են: Մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ վերելակներից մեկի խափանման դեպքում դատարան մուտք գործելու համար կարող են առաջանալ խոչընդոտներ, քանի որ սահմանափակված է նաև աստիճաններից օգտվելու հնարավորությունը:

Մենք ցանկացանք օգտվել դատարանի աշխատակիցների համար նախատեսված վերելակից, քանի որ մյուս վերելակը չէր աշխատում: Վերելակում գտնվող անձը,որը հետո պարզվեց դատավոր էր, թույլ չտվեց իր հետ նույն վերելակից օգտվել և բարձր ձայնային տոնով ասաց,որ կարգադրիչները կբացատրեն, թե ինչու չեք կարող օգտվել այս վերելակից:

Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը կատարվում է ստացիոնար մետաղափնտրիչի միջոցով: Նշենք, որ ստացիոնար մետաղափնտրիչը այնպես է տեղադրված, որ հնարավոր է նաև շրջացել այն և մուտք գործել դատարան: Դատարանում պահարաններ կամ պահոցներ չկան արգելված իրերը թողնելու համար:

Դատական նիստերի ժամանակացույցում առկա տեղեկատվությունը կարգադրիչները հաղորդում էին մշտադիտարկողներին, սակայն թույլ չէին տալիս լուսանկարել:

Դատարանի շենքի տեղակայումը ՀՀ արդարադատության նախարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության շենքում դատարանի մատչելիության տեսանկյունից խնդրահարույց է: Դատարանի կահավորումը, դահլիճները, գրասենյակը և դատարանի աշխատանքը սպասարկող այլ տարածքները խնդիրներ է առաջացնում քաղաքացիների համար հասանելիության տեսակետից:

Դատարանի մուտքը

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

Գավառի նստավայր

Շենքի տարածքը	Շենքի առաջին հարկում գտնվում է ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության Գավառի անձնագրային բաժանմունքը, 2-րդ և 3-րդ հարկում՝ Դատարանը
Դատավորների թիվը	2
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	20 րոպե
Դահլիճների թիվը	1
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է

Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Ջուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվում են քաղաքացիական և քրեական գործեր:

Դատարանում զննությունը կատարվում է միայն ձեռքի մետաղափնտրիչի միջոցով, որը անսարք լինելու պատճառով միշտ չէ, որ օգտագործվում էր: Մշտադիտարկումն իրականացնելու ժամանակ դատարանում քրեական գործեր քննող դատավոր Արշակ Հարությունյանը 2023թ. հունվարի 30-ին նշանակվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր[52], իսկ նոր դատավորը (Արտավազդ Կարապետյանը) նշանակվել է 2023թ. մարտի 23-ին[53]: Նշենք, որ Արշակ Հարությունյանը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր նշանակվել է 2022թ. օգոստոսի 1-ին:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

Սևանի նստավայր

Շենքի տարածքը	Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և Վարչական դատարան
Դատավորների թիվը	Քաղ.և քրեական գործեր քննող 3 դատավոր, վարչ. գործեր քննող 1 դատավոր
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	6-10 րոպե
Դահլիճների թիվը	4 (1՝ վարչ. գործերի, 3՝ քաղ. և քր. գործերի համար)
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ

[52] 2023 թ. հունվարի 30-ին ՀՀ նախագահի՝ թիվ ՆՀ-35-Ա հրամանագրով նշանակվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

[53] 2023թ. մարտի 23-ին ՀՀ նախագահի՝ թիվ ՆՀ-105-Ա հրամանագրով նշանակվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է լավ սանիտարական վիճակում

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը և Վարչական դատարանը տեղակայված են նույն շենքում (ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Աբովյան փողոց, թիվ 6/1):

Դատարանների շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննություն որպես կանոն չի կատարվում, բացառությամբ, եթե անձը մասնակցում է քրեական գործով դատական քննությանը:

Զննությունը կատարվում է ձեռքի մետաղափնտրիչի միջոցով առանձին սենյակում նույն սեռի դատական կարգադրիչի կողմից:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարտունի նստավայր

Դատարանի տարածքը	Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան
Դահլիճների թիվը	1
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Բացակայում է
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Բացակայում է
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Այո
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է լավ սանիտարական վիճակում
Մշտադիտարկված նիստերի թիվը քրեական գործերով	14
Մշտադիտարկված նիստերի թիվը քաղաքացիական գործերով	3

Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննություն ընդհանրապես չի կատարվում:

Դատարանն ունի մեկ նիստերի դահլիճ, որտեղ քննվում են քաղաքացիական և քրեական գործեր: Մշտադիտարկողն արձանագրել է, որ հաճախ դատական նիստերի ժամանակացույցը խախտվում էր, եթե նույն օրը նշանակված էին լինում և քաղաքացիական և քրեական գործեր:

Կալանավորված անձանց համար չկար այլընտրանքային մուտք դատարան: Դատարանում բացակայում է ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահման խցեր: Այդ իսկ պատճառով, հնարավոր բախումներից խուսափելու նպատակով կալանավորված անձանց պահում են կարգադրիչների սենյակում:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարտունու նստավայրը 2024 թ. հունվարից այլևս չի գործում [54]:



Դատական նիստերի ժամակացույցը

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայր

Շենքի տարածքը	Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և Վարչական դատարան
Դատավորների թիվը	1 քր., 2քաղ. 1 վարչ.
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5 րոպե
Դահլիճների թիվը	3
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Այո
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում

54 https://www.facebook.com/story.php?story_fbid=298114633273331&id=100092243884825&mibextid=WC7FNe&rdid=D00MbjpHDMAPkqca

Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Այո
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Այո
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Այո
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է լավ սանիտարական վիճակում

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը և Վարչական դատարանը տեղակայված են նույն շենքում: Դատարանների շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը որպես կանոն կատարվում է ձեռքի մետաղափնտրիչի միջոցով:

Վարչական դատարանում գործերը քննում է մեկ դատավոր, ով գործուղվում էր Երևանից և նիստերը նշանակվում էին ամիսը 2-3 անգամ: Այդ իսկ պատճառով Վարչական դատարանի Գորիսի նստավայրում չի հաջողվել իրականացնել դատական նիստերի մշտադիտարկում:

2021 թ. հոկտեմբերի 20-ից Վարչական դատարանի Գորիսի նստավայրում պաշտոնավորող Վարազդատ Միքայելյանը 2023 թ. հունվարի 27-ից վարչական գործերը քննում է Երևան քաղաքի նստավայրում: Լուսին Բոյաջյանը նշանակվել է Վարչական դատարանի Գորիսի նստավայրի դատավոր 2023 թ. մայիսի 8-ին[55]: Այսինքն, գրեթե 3 ամիս Վարչական դատարանի Գորիսի նստավայրում դատավորի հաստիքը թափուր է մնացել:

[55] 2023թ. մայիսի 8-ի ՆՀ-152-Ա հրամանագրով նշանակվել է վարչական դատարանի դատավոր:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայր

Շենքի տարածքը	Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: Դատարանը գտնվում է շենքի երկրորդ հարկում: Առաջին հարկում անձնագրային բաժին է:
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	2-5 րոպե
Դահլիճների թիվը	1
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Այո
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Այո
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Այո
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Ոչ
Զուգարան	Այո, բայց հասանելի չէ (հասանելի է միայն խնդրանքով)
Մշտադիտարկված նիստերի թիվը	դատական նիստ (քաղ./քր. գործեր)
	դատական նիստ (0 վարչ. գործեր)

Դատարանների շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը որպես կանոն չի իրականացվում: Դատական նիստերի ցուցակը գտնվում է մուտքի մոտ: Դատական կարգադրիչները արգելել են մշտադիտարկողին լուսանկարել նիստերի ժամանակացույցը՝ ելնելով անվտանգության նկատառումներից:

Մշտադիտարկողները արձանագրել են դատարանի անբավարար շենքային պայմանները: Սանհանգույցն անհարմար տեղում է գտնվում: Սանհանգույց հասնելու համար պետք է անցնել նիստերի դահլիճի միջով, իսկ այդպես կարող է խախտվել նիստի բնականոն ընթացքը:

Դատարանում չկար կին դատական կարգադրիչ: Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայրը 2024 թ. հունվարից այլևս չի գործում [56]:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

Նստավայրերը	ք.Գյումրի, ք. Մարալիկ
Դատավորների թիվը	13 (5 քրեական մասնագիտացման, 8 քաղաքացիական)
Նախագահ	Հայկ Աղաքարյան

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորների թիվը. 2018 թ.՝ 5 դատավոր, 2019 թ.՝ 6 դատավոր, 2020 թ.՝4 դատավոր, 2021 թ.՝ 2 դատավոր, 2022 թ.՝ 5 դատավոր: ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացման դատավորների թիվը. 2018 թ.՝ 9 դատավոր, 2019 թ.՝ 7 դատավոր, 2020 թ.՝ 8 դատավոր, 2021 թ.՝ 8 դատավոր, 2022 թ.՝ 8 դատավոր:

Աղյուսակ 9. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացվացած, փոխանցված, ավարտված քաղ. գործերի թիվը

Քաղաքացիական գործեր	2018	2019	2020	2021	2022
Փոխանցված գործերի ընդհանուր թիվը	4409	4262	7545	4989	6458
Ստացված գործերի թիվը	7595	9943	8837	15950	15260
Այդ թվում՝ընդունվել է վարույթ	5941	9418	7946	15431	14238
Ավարտվել են գործն ըստ էության լուծող դատական ակտերի (վճիռների կայացմամբ)	6051	6141	10457	13901	13305

56 https://www.facebook.com/story.php?story_fbid=298114633273331&id=100092243884825&mibextid=WC7FNe&rdid=D00MbjpHDMAPkqca

2018 թ. ստացված և փոխանցված քաղաքացիական գործերի թիվը կազմել է 12004, 2022թ.՝ 21718: 2018 թ. նախորդ տարվանից փոխանցված գործերը կազմել են 42,60%, իսկ 2022թ. 31,20%[57]: 2018թ. ավարտված գործերը կազմել են 58,46%, 2022 թ.՝ 64,29%[58]:

Աղյուսակ 10. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացվացած, փոխանցված, ավարտված քր. գործերի թիվը

Քրեական գործեր	2018	2019	2020	2021	2022
Ստացված գործերի թիվը	134	182	241	261	283
Փոխանցված գործերի ընդհանուր թիվը	96	76	144	186	284
Ավարտվել են գործն ըստ էության լուծող դատական ակտերի (վճիռների կայացմամբ)	150	113	197	158	227

2018 թ. ստացված և փոխանցված քրեական գործերի թիվը կազմել է 230, 2022թ.՝ 567: 2018 թ. նախորդ տարվանից փոխանցված գործերը կազմել են 41, 74%, իսկ 2022թ. 50,09%: 2018թ. ավարտված գործերը կազմել են 65,22%, 2022 թ.՝ 40,04%:

Այսպիսով, 2018-2022 թթ. ընթացքում դատավորների թիվը չի փոփոխվել, միաժամանակ ավելացել են դատարանում քննվող գործերի թիվը:

Գծապատկեր 8. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացված, փոխանված քր. գործերի թիվը, դատավորների թիվը



Գծապատկեր 9. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացված, փոխանված քաղ. գործերի թիվը, դատավորների թիվը

[57] Տոկոսը հաշվարկվել է ընդունված վարույթների և փոխանցված գործերի հանրագումարից:
[58] Տոկոսը հաշվարկվել է ընդունված վարույթների և փոխանցված գործերի հանրագումարից:

Շենքի տարածքը	Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն առաջին և երկրորդ հարկերում է, երկրորդ հարկում՝ Վարչական դատարանը: Շենքի առաջին հարկում տեղակայված են նոտարական գրասենյակը, ԴԱՀԿ, պրոբացիայի ծառայությունը: Դատարանի մուտքն առանձնացված է:
Դատավորների թիվը	1 վարչ., 4 քր., 6 քաղ.,
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	2 րոպե
Դահլիճների թիվը	9
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ Ստացիոնար մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Առկա է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, բայց գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրու նստավայրը և Վարչական դատարանի Գյումրու նստավայրը տեղակայված են նույն շենքում: Դատարանների մուտքերն առանձնացված չեն:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրու նստավայրում քննվում են քաղաքացիական և քրեական գործեր: <u>Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունն իրականացվում է ստացիոնար մետաղափնտրիչի միջոցով:</u>

Ըստ կարգադրիչի տրամադրած տեղեկատվության, շենքում առկա է արգելված իրերի պահարան, սակայն վերջինս գտվում է փակ գոտում:

Շենքի ներսում փակցված է «Դատարանում լսվող գործերի» ցուցատախտակ, սակայն դատական նիստերի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Լսվող գործերի ցուցակները գտնվում են կարգադրիչի մոտ:

> *«Այսօր `18.01.2023թ.-ին կարգադրիչից խնդրեցի վաղվա՝ 19.01.2023թ.-ի նիստերի ցանկը, չտրամադրեցին, ասեցին, որ պետք է օգտվեմ դատալեքսից, քանի որ իրենք չունեն այդ ցանկը: Ես նշեցի, որ երեկ մեկ այլ կարգադրիչ ինձ*

տրամադրել է այդ ցանկը, որի մեջ ներառված էր 17.01,2023 թ.-ից մինչև 19.01.2023թ.-ի նիստերը: Նրանք պնդեցին, որ ցանկը չունեն»[59]:

Դատարանի առաջին հարկում N 1-5 դահլիճները նախատեսված են քրեական գործերի քննության համար: Երկրորդ հարկում N 6-8 դահլիճները՝ քաղաքացիական գործերի համար և երկրորդ հարկում N 1 դահլիճը՝ վարչական գործերի քննության համար:



Դատարանի մուտքը, զննության սարքը

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

Մարալիկի նստավայր

Շենքի տարածքը	Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան
Դատավորների թիվը	3
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	2-5 րոպե
Դահլիճների թիվը	2
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	բացակայում է

[59] Մշտադիտարկողի մեկնաբանությունը, քարտ N 2/37

Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, բայց գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարալիկի նստավայրում քննվում են քաղաքացիական և քրեական գործեր: Մշտադիտարկողներն արձանագրել են, որ Դատարան մուտք գործելիս հնարավոր չի լինում տեղեկություն ստանալ տվյալ օրը տեղի ունեցող դատական նիստերի վերաբերյալ: Կարգադրիչները մշտադիտարկողներին հորդորում էին օգտվել datalex.am կայքից՝ կայանալիք նիստերի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար: Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննություն չի իրականացվում:



Դատական նիստերի մշտադիտարկման փուլում մշտադիտարկողները բախվել են այն խնդրին, որ քաղաքացիական գործերով տևական ժամանակ նիստեր չէին նշանակվում Դատարանում: Մշտադիտարկման շարունակական ընթացքն ապահովելու համար կատարվել է վերաբաշխում և նվազեցվել է քաղաքացիական գործերով մշտադիտարկվող նիստերի թիվը:

Խնդիրը կայանում էր նրանում, որ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարալիկի նստավայրում պաշտոնավորող Ա. Աթանեսյանը

2023թ. փետրվարի 1ին նշանակվել էր Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր[60]:

2023թ. փետրվարի 17-ին Շ. Նիկողոսյանը նշանակվել է[61] Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր: Սակայն միայն 2023 մարտի 27-ին ԲԴԽ,27.03.2023,ԲԴԽ-38-Ն-13 որոշմամբ դատավոր Շ. Նիկողոսյանի գործերի քննության նստավայրը սահմանվեց ք. Մարալիկ:

2018-2022 թթ. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարալիկի նստավայրում քրեական գործեր քննող միայն մեկ դատավոր է եղել:

Աղյուսակ 11. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարալիկի նստավայր ստացված և փոխանցված քր.գործերի թիվը՝ ըստ դատավորների

Ա. Մանուկյան	2018	2019	2020	2021	2022
Ստացված քրեական գործերի ընդհանուր թիվը	44	43	10		
Փոխանցված քրեական գործերի թիվը	38	25	30		
	82	68	40		
Ա. Ավետիսյան					
Ստացված քրեական գործերի ընդհանուր թիվը				173	681
Փոխանցված քրեական գործերի թիվը				0	13
				173	694

2018 թ. ստացված և փոխանցված քրեական գործերի թիվը կազմել է 82, 2022թ.՝ 694 գործ: Եթե տոկոսային հարաբերակցության վերածենք թվերը, ապա կարող ենք տեսնել, որ 2018 թ. նախորդ տարվանից փոխանցված գործերի տոկոսը եղել է 46,34 %, իսկ 2022թ. 1,87%:

Ներկայացված աղյուսակում 2021 և 2022 թթ. ժամանակահատվածում ստացված քրեական գործերի աճը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դատավոր Ա. Ավետիսյանը իրականացնում է նաև մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն:

Աղյուսակ 12. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարալիկի նստավայր ստացված և փոխանցված քաղ. գործերի թիվը՝ ըստ դատավորների

Լ. Հովհաննիսյան	2018	2019	2020	2021	2022
ստացված գործերի (այդ թվում՝ հայցադիմումների, դիմումների) ընդհանուր թիվը	1428	1036			
փոխանցված ընդհանուր գործերի թիվը	328	523			

[60] Տե՛ս ՀՀ նախագահի՝ ՆՀ-46-Ա հրամանագիրը:
[61] Տե՛ս ՀՀ նախագահի՝ թիվ ՆՀ-76-Ա հրամանագիրը:

Անի Աթանեսյան					
ստացված գործերի (այդ թվում՝հայցադիմումների, դիմումների) ընդհանուր թիվը		274	1197	2236	2182
փոխանցված ընդհանուր գործերի թիվը		0	263	301	835

2018 թ. ստացված և փոխանցված քաղաքացիական գործերի թիվը կազմել է 1510, 2022թ.՝ 3017: Եթե տոկոսային հարաբերակցության վերածենք թվերը, ապա կարող ենք տեսնել, որ

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

Արթիկի նստավայր

Շենքի տարածքը	Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան; Նույն շենքի 2-րդ հարկում գտնվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը
Դատավորների թիվը	1
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	15-20 րոպե
Դահլիճների թիվը	2
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Ոչ
Տեղեկատվական տերմինալ	Ոչ
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Ոչ
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Ոչ
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Ոչ
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է լավ սանիտարական վիճակում

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արթիկի նստավայրում քննվում էին քաղաքացիական գործեր:

Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննություն չէր իրականացվում:

2024 թ. հունվարին ՀՀ դատական դեպարտամենտը Հայաստանի մի շարք դատական նստավայրերի փակման վերաբերյալ հայտարարություն է տարածել, որի համաձայն՝ Հայաստանի ամբողջ տարածքում գործող 51 դատարաններից 9 նստավայրերը, այդ թվում

Արթիկը, փակվելու են[62]: Արթիկում պաշտոնավարող դատավոր Արման Սարոյանը տեղափոխվել է Մարալիկ:

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

Նստավայրերը	ք.Իջևան, ք. Դիլիջան, ք.Բերդ, ք. Նոյեմբերյան
Դատավորների թիվը	Քրեական մասնագիտացում՝ 3, քաղաքացիական մասնագիտացում՝4
Նախագահ	Մակար Կիրակոսյան

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրվել են տվյալներ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բոլոր նստավայրում ստացված և փոխանցված գործերի թիվը:

Աղյուսակ 13.Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացված, փոխանցված քաղ. գործերի թիվը

Քաղաքացիական գործ	2018	2019	2020	2021	2022
Ստացված	2923	4164	3639	5723	5837
Փոխանցված	811	732	1653	1136	2111
Ընդհանուր	3734	4896	5292	6859	7948

Աղյուսակ 14. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացված, փոխանցված քաղ. գործերի թիվը

Քրեական գործ	2018	2019	2020	2021	2022
Ստացված	204	215	241	265	211
Փոխանցված	74	55	74	133	176
Ընդհանուր	278	270	315	398	387

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի և ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ դատարանում դատավորների քանակը եղել է.

[62] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=686617263659173&id=100069327154682

- 2018 թ.՝ 3 քրեական մասնագիտացման, 3 քաղաքացիական. մասնագիտացման դատավոր,
- 2019 թ.՝ 3 քրեական մասնագիտացման, 3 քաղաքացիական մասնագիտացման դատավոր,
- 2020 թ.՝ 3 քրեական մասնագիտացման, 3 քաղաքացիական մասնագիտացման դատավոր,
- 2021 թ.՝ 3 քրեական մասնագիտացման, 5 քաղաքացիական մասնագիտացման դատավոր,
- 2022 թ.՝ 3 քրեական մասնագիտացման, 4 քաղաքացիական մասնագիտացման դատավոր:

2024 թ. դրությամբ դատարանում գործում է 4 քր. մասնագիտացման, 3 քաղ. մասնագիտացման դատավոր:

Այսպիսով, եթե դիտարկենք Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բոլոր նստավայրերում ստացված և նախորդ տարվանից փոխանցված գործերի թիվը, ապա կարող ենք դուրս գրել հետևյալ տվյալները, որ 2018թ.-ից 2022 թ. դատարանում քննվող քաղաքացիական գործերի թիվը աճել է 53 %, իսկ քրեական գործերը՝ 28 %: 2018 թ. նախորդ տարվանից փոխանցված քաղ. գործերի տոկոսը կազմել է 21,72%, իսկ 2022թ. 26,56%: 2018 թ. նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի տոկոսը կազմել է 26,62%, իսկ 2022թ.՝ 45,48%:

Գծապատկեր 10. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացված և փոխանցված քաղ.գործերի թիվը, դատավորների թիվը



Գծապատկեր 11. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացված և փոխանցված քր. գործերի թիվը, դատավորների թիվը



Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Իջևանի նստավայր

Շենքի տարածքը	Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան
Դատավորների թիվը	4
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5
Դահլիճների թիվը	3
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ոչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Ոչ
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Ոչ
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Ոչ
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է լավ սանիտարական վիճակում

Մշտադիտարկման ժամանակ դատական կարգադրիչներն արգելել են մշտադիտարկողներին դատարանում լուսանկարել դատական նիստերի ժամանակացույցը: Դատավորներն առաջարկում էին նիստերի դահլիճների թիվն ավելացնել, հաշվի առնելով դատարանում պաշտոնավորող դատավորների թիվը:

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (ք. Իջևան) 2018-2020 թ. պաշտոնավորել է թվով 3 դատավոր, 2021 թ.՝ 5, 2022 թ.՝ 4:

Աղյուսակ 15. Ստացված քրեական գործերի ընդհանուր թիվը՝ ըստ դատավորների և տարիների

Դատավոր	2018	2019	2020	2021	2022
Ս. Մարդանյան	64	69	74	118	50
Ռ. Մելքոնյան	74	71	76	41	
Ա. Մարտիրոսյան					85
	138	140	150	159	135

Աղյուսակ 16. Նախարդ տարվանից փոխանցված քրեական գործերի թիվը՝ ըստ դատավորների և տարիների

Նախարդ տարվանից փոխանցված քրեական գործերի թիվը՝ ըստ դատավորների և տարիների					
դատավոր	2018	2019	2020	2021	2022
Ս. Մարդանյան	59	57	60	78	67
Ռ. Մելքոնյան	32	14	19	32	
Ա. Մարտիրոսյան					0
	91	71	79	110	67

2018 թ. ստացված և փոխանցված քրեական գործերի թիվը կազմել է 229, 2022թ.՝ 202 գործ: Եթե տոկոսային հարաբերակցության վերածենք թվերը, ապա կարող ենք տեսնել, որ 2018 թ. նախորդ տարվանից փոխանցված գործերի տոկոսը եղել է 39,74 %, իսկ 2022թ. 33,17 %:

Աղյուսակ 17. Ստացված քաղ. գործերի ընդհանուր թիվը՝ ըստ դատավորների և տարիների

դատավոր	2018	2019	2020	2021	2022
Ս. Իսկանդարյան	1171	1280			
Ա. Արմենակյան					1427
Ա. Կուրեխյան	306	1027	1434	877	
	1477	2307	1434	877	1427

Աղյուսակ 18. Նախարդ տարվանից փոխանցված քաղաքացիական գործերի թիվը՝ ըստ դատավորների և տարիների

դատավոր	2018	2019	2020	2021	2022
Ս. Իսկանդարյան	240	299			
Ա. Արմենակյան					532
Ա. Կուրեխյան	198	34	357	275	1
	438	333	357	1136	533

2018 թ. ստացված և փոխանցված քաղ. գործերի թիվը կազմել է 1915, 2022թ.՝ 1960 գործ: Եթե տոկոսային հարաբերակցության վերածենք թվերը, ապա կարող ենք տեսնել, որ 2018 թ. նախորդ տարվանից փոխանցված գործերը կազմել են 22,87%, իսկ 2022թ.՝ 27,19%:

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան

Դիլիջանի նստավայր

Շենքի տարածքը	Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան
Դատավորների թիվը	1
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	10-15
Դահլիճների թիվը	2
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է լավ սանիտարական վիճակում

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (ք. Դիլիջան) քննվում են միայն քաղաքացիական գործեր: Դատարանի շենքը տիպային չէ, նախկինում ծառայել է որպես մանկապարտեզ: Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը չի իրականացվում:

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (ք. Դիլիջան) 2018-2022 թ. նախատեսված է եղել դատավորի 1 հաստիք:

Աղյուսակ 19. Ստացված քաղ. գործերի ընդհանուր թիվը՝ ըստ դատավորների և տարիների

Դատավոր	2018	2019	2020	2021	2022
Ա. Օհանյան	1465	160			
Ս. Ուլիխանյան		2187	574		
Արմենակյան				2250	
Ն. Դալլաքյան				775	2564
Ընդհանուր	1465	2347	574	3025	2564

Աղյուսակ 20. Նախարդ տարվանից փոխանցված քաղաքացիական գործերի թիվը՝ ըստ դատավորների և տարիների

Դատավոր	2018	2019	2020	2021	2022
Ա. Օհանյան	373	399			
Ս. Ուլիխանյան		0	1062		
Ա. Արմենակյան				861	
Ն. Դալլաքյան				0	672
Ընդհանուր	373	399	1062	861	672

2018 թ. ստացված և փոխանցված քրեական գործերի թիվը կազմել է 1838, 2022թ.՝ 3236 գործ, այսինքն՝ գործերի թիվը աճել է 43 %-ով:

Եթե տոկոսային հարաբերակցության վերածենք թվերը, ապա կարող ենք տեսնել, որ 2018 թ. նախորդ տարվանից փոխանցված գործերի տոկոսը կազմել է 20,29 %, իսկ 2022թ. 20,77%:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան

Նստավայրերը	ք.Վանաձոր, ք. Ալավերդի, ք.Տաշիր, ք. Սպիտակ, ք. Ստեփանավան
Դատավորների թիվը	Քրեական մասնագիտացում՝ 6, քաղաքացիական մասնագիտացում՝7
Նախագահ	Մուշեղ Հարությունյան

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի տրամադրած տեղեկատվության համաձան՝ դատավորների թիվը 2018 թ. կազմել է՝ 14, 2019թ.՝ 12 և 1 գործուղված դատավոր, 2020թ.՝ 13 և 1 գործուղված դատավոր, 2021 թ. ՝ 14 դատավոր, 2022թ.՝ 15 դատավոր:

2024 թ. հունվարի 23-ից Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի ռեզերվային դատավոր Վարդյան Սուրյանը գործուղվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ դատարանի ծանրաբեռնվածության հիմնավորմամբ:

Աղյուսակ 21. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ստացված, փոխանցված, ավարտված քրեական գործերի թիվը

Քրեական	2018	2019	2020	2021	2022
Ստացված գործերի թիվը	246	262	339	344	332
Փոխանցված գործերի ընդհանուր թիվը	98	132	167	244	290
	344	394	506	588	622
Ընդամենն ավարտվել են գործեր	208	225	254	292	246

2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ստացված և փոխանցված գործերի թիվն աճել է 278-ով կամ 80,81%-ով:

Գծապատկեր 12. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քր. գործերի թիվը



2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում ավարտված գործերի թիվն աճել է 38-ով կամ 18,26%-ով: Ստացվում է, որ չնայած փոխանցված և ստացված գործերի թվի բարձր աճին (80,81%), 2022 թվականին գրանցվել է ավարտված գործերի ցածր աճ: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանում ավարտված գործերի տոկոսը տարեցտարի նվազել է:

Գծապատկեր 13. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում ավարտված քր.գործերի տոկոսը



2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում փոխանցված քրեական գործերի թիվն աճել է 192-ով կամ 195,91%-ով:

Գծապատկեր 14. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում փոխանցված գործերի տոկոսը



Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-23-Ն-1 որոշման համաձայն՝ 2018 թ.-ին քրեական մասնագիտացման դատավորների թիվը եղել է 4, 2019-2021թթ.՝ 5, 2022-2024թթ.՝ 6: Այսպես, քրեական մասնագիտացման դատավորների թիվն աճել է 2-ով, իսկ քաղաքացիական մասնագիտացման դատավորների թիվը՝ ոչ:

ԲԴԽ-23-Ն-1 որոշման համաձայն՝ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացման դատավորների թիվը 2018 թ. կազմել է 9, իսկ 2019-2024 թթ. դարձել է 7:

Աղյուսակ 22. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ստացված, փոխանցված, ավարտված քաղ. գործերի թիվը

Քաղաքացիական	2018	2019	2020	2021	2022
Ստացված գործերի թիվը	7110	11388	11323	15845	15202
Փոխանցված գործերի ընդհանուր թիվը	2820	2975	5403	4618	5879
Ընդունվել է վարույթ	4815	10241	9757	13628	13521
Ընդամենն ավարտվել են գործեր	4730	7919	10746	12819	13705

2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ստացված և փոխանցված գործերի թիվն աճել է 11151-ով կամ 112,29%-ով:

Գծապատկեր 15. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղ. գործերի թիվը



[63]

2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում ավարտված գործերի թիվն աճել է 8975-ով կամ 189.74%-ով:

Գծապատկեր 16. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում ավարտված գործերի տոկոսը



2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում փոխանցված քաղաքացիական գործերի թիվն աճել է 3059-ով կամ 108,47%-ով:

Այսպիսով ստացվում է, որ չնայած գործերի թվի բարձ աճին, քաղաքացիական գործեր քննող դատավորների թիվը 2019-ից մնացել է անփոփոխ:

[63] Հաշվարկվել է վարույթ ընդունած և փոխանցված գործերի թիվը:

Շենքի տարածքը	ıոոու մարզի ընդհանուր իրավասության դատարան, Վարչական դատարանի Վանաձոր նստավայր
Դատավորների թիվը	ջրեական մասնագիտացման, 3 քաղաքացիական
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5 րոպե
Դահլիճների թիվը	3 քր., 1 քաղ.,
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ,
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Դատարան մուտք գործող անձանց զննությունը կատարվում է ստացիոնար մեատաղափնտրիչի միջոցով: Դատարանում բացակայում էր դատական նիստերի ժամանակացույցը: Դատական կարգադրիչները դատական նիստերի ժամանակացույցի վերաբերյալ հարցերը ստանալիս հիմնականում ուղղորդում էին զանգահարել աշխատակազմին: Մշտադիտարկողները նշել են, որ մշտադիտարկումը սկսելուց որոշ ժամանակ անց դատարանում փակցվել է նաև դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն պարունակող պաստառ:

Մշտադիտարկողները արձանագրել են, որ դատական կարգադրիչները հարգալից վերաբերմունք են ցուցաբերում ինչպես այցելուներին, այնպես էլ մշտադիտարկողների նկատմամբ:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան

Սպիտակի նստավայր

Շենքի տարածքը	Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան
Դատավորների թիվը	1 քրեական մասնագիտացման, 1 քաղաքացիական
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	10 րոպե

Դահլիճների թիվը	2
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Բացակայում է
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Ոչ
Տեղեկատվական տերմինալ	Ոչ
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Ոչ
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Ոչ
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Ոչ
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Դատարան մուտք գործող անձանց և նրանց իրերի զննություն չի կատարվում, քանի որ դատարանը ապահովված չէ զննության սարքերով: Կարգադրիչների մոտ առկա էր միայն քրեական գործերով կայացվող նիստերի ժամանակացույցը, որը չէր տրամադրվում մշտադիտարկողներին:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան

Ալավերդու նստավայր

Շենքի տարածքը	Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան
Դատավորների թիվը	2 քաղաքացիական
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5 րոպե
Դահլիճների թիվը	
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Բացակայում է

Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Այո
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Ոչ
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Ոչ
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի Ալավերդի նստավայրում քննվում են միայն քաղաքացիական գործեր:

Դատարան մուտք գործող անձանց և նրանց իրերի զննություն չի կատարվում: Դատարանում բացակայում էին զննության սարքերը:

Մշտադիտարկողն արձանագրել է, որ դատական կարգադրիչները բավական հարգալից են, սակայն ոչ մի տեղեկատվություն չեն տրամադրում մինչև չեն հարցնում դատական նիստերի քարտուղարին:

Վարչական դատարան

Դատարանի նստավայրերը	Երևան, Սևան, Վանաձոր, Գյումրի, Գորիս
Դատավորների թիվը	24
Դատարանի նախագահ	Արգիշտի Ղազարյան

Վարչական դատարանում 2018թ.-ից առ այսօր պաշտոնավորում է 24 դատավոր:

Աղյուսակ 23. Վարչական դատարան ստացված, փոխանցված, ավարտված գործերի թիվը

	2018	2019	2020	2021	2022
Ստացված գործերի թիվը	13909	12629	12622	15431	9886
Փոխանցված գործերի ընդհանուր թիվը	7841	5348	5508	7129	7961
Ընդունվել է վարույթ	11992	9815	8905	13217	8540
Ընդամենն ավարտվել են գործեր	11002	8034	5640	9959	7700

2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին դատարան ստացված և փոխանցված գործերի թիվը նվազել է 17847-ով կամ 17.95%-ով:

Գծապատկեր 17.Վարչական դատարանում քննվող գործերի թիվը



[64]

2018 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին Վարչական դատարանում փոխանցված գործերի թիվն աճել է 120-ով կամ 1,53%-ով:

Այսպիսով, կարող ենք տեսնել, որ Վարչական դատարանը ավարտված գործերի տեսանկյունից լավագույն ցուցանիշ արձանագրել է 2018 թ.-ին:

Գծապատկեր 18. Վարչական դատարանում ավարտված գործերի տոկոսը



[64] Հաշվարկվել է վարույթ ընդունած և փոխանցված գործերի թիվը:

Շենքի տարածքը	Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և Վարչական դատարան
Դատավորների թիվը	1
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	6-10 րոպե
Դահլիճների թիվը	1
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	**Բացակայում է**
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	**Բացակայում է**
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է լավ սանիտարական վիճակում

Վարչական դատարան

Վանաձորի նստավայր

Շենքի տարածքը	ոու մարզի ընդհանուր իրավասության դատարան, Վարչական դատարանի Վանաձոր նստավայր
Դատավորների թիվը	1
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5 րոպե
Դահլիճների թիվը	1
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ,
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Բացակայում է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Վարչական դատարան

Գյումրու նստավայր

Շենքի տարածքը	Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն առաջին և երկրորդ հարկերում է, երկրորդ հարկում՝ Վարչական դատարանը: Շենքի առաջին հարկում տեղակայված են նոտարական գրասենյակը, ԴԱՀԿ, պրոբացիայի ծառայությունը: Դատարանի մուտքն առանձնացված է:
Դատավորների թիվը	1
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	2 րոպե
Դահլիճների թիվը	1
Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ձեռքի մետաղափնտրիչ Ստացիոնար մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Ոչ
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Բացակայում է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Բացակայում է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, բայց գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Վարչական դատարան

Երևանի նստավայր

Շենքի տարածքը	Վարչական դատարանի Երևանի նստավայր, Վերաքննիչ քրեական դատարան, Վերաքննիչ քաղաքացիական
Դատավորների թիվը	21
Որքա՞ն ժամանակ է պահանջվում հասարակական տրանսպորտի կանգառից դատարան հասնելու համար	5-10 րոպե
Դահլիճների թիվը	26

Մուտք գործող անձանց և իրերի զննության համար սարքավորումների առկայությունը	Ստացիոնար մետաղափնտրիչ, ձեռքի մետաղափնտրիչ
Դատարան մուտք գործելու կանոնների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը	Առկա է
Տեղեկատվական տերմինալ	Չի աշխատում
Պահարաններ կամ պահոցներ, որտեղ կարելի է թողնել արգելված իրերը	Առկա է
Դատական նիստերի ցուցակի առկայությունը հանրամատչելի վայրում	Առկա է
Մաքուր խմելու ջրի հասանելիությունը	Բացակայում է
Զուգարան	Առկա է և հասանելի, գտնվում է ոչ լավ սանիտարական վիճակում

Դատարանի շենք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննությունը կատարվում է ստացիոնար մետաղափնտրիչի միջոցով:

Վարչական դատարանի Երևանի նստավայրում մշտադիտարկողներին թույլատրում էին գրառումներ կատարել դատական նիստերի ցուցակներից, ինչպես նաև երբեմն լուսանկարել: Վարչական դատարանի Երևանի նստավայրում դատական նիստերի ցուցակները թարմացվում են շաբաթը մեկ անգամ: Դատական նիստերի ցուցակում նշվում է գործի համարը, հայցվորի, պատասխանողի տվյալները, պահանջը, դատաքննության փուլը, նիստի օրը/ժամը, դատավորի անունը և դահլիճի համարը:

Մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ Վարչական դատարանի Երևանի նստավայրում ձևավորված պրակտիկան դատական նիստերի ցուցակների կազման և հանրայնացման հարցում կարող է օրինակելի լինի բոլոր դատարանների համար:





Դատարանի մուտքը

ԳԼՈՒԽ 2. ԴԱՏԱԿԱՆ ԼՍՈՒՄ. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԸ

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Դահլիճն ունի հերթական համար, որի համարակալումն սկսվում է թիվ 1-ից՝ աճողական կարգով: Դահլիճի համարը և մեծատառերով գրված «ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃ» բառերը նշվում են 15 սմ * 30 սմ պլաստիկե ցուցանակի վրա: Դահլիճի համարը և «ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃ» բառերը նշված են 100 տառաչափով և «Գրապալատ» տառատեսակով: Ցուցանակն ամրացվում է Դահլիճի արտաքին մուտքի-ելքի դռան աջ կամ ձախ կողքի պատին՝ տեսանելի, դռան վերին նիշի բարձրությամբ[65]:

Մշտադիտարկման արդյունքներ

ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի, Մարտունու նստավայրերում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2, Էրեբունու, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոնի, Շենգավիթի,

[65] ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», կետ 2

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սպիտակի, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Արթիկի, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի և Գորիսի, Վարչական դատարանի Երևանի նստավայրերում առկա են եղել դահլիճներ, որոնց վրա համարակալումը կամ այլ ձևով նույնականացումը բացակայել է:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ մշտադիտարկված դատարաններում դատական նիստերի դահլիճները մեծամասամբ համարակալված են: Դատական նիստերի նույն դահլիճից, սակայն, օգտվում են մի քանի դատավորներ, որի հիման վրա կարելի է արձանագրել, որ դահլիճների թիվը չի համապատասխանում դատավորների թվին և դատավորները նիստերն անցկացնում են նույն դահլիճներում: Դատավորների մի մասը նիստերը նշանակում է շաբաթվա կենտ օրերին, մյուս մասը՝ զույգ օրերին՝ նիստերի համընկնումներից խուսափելու նպատակով:

Առաջարկություն

Անհրաժեշտ է դատական նիստերի դահլիճների թիվը համապատասխանացնել նույն դատարանում գործող դատավորների թվին, որպեսզի յուրաքանչյուր դատավոր ունենա իր դահլիճը՝ իր անվան նշումով և համարակալմամբ: Քաղաքացիների համար ավելի մատչելի կլինի նույնականացնել դատական նիստերի դահլիճը, եթե դահլիճների վրա նշվի նիստը վարող դատավորի անունը, ինչպես Վարչական դատարանի Երևանի նստավայրի դահլիճների մեծ մասի դեպքում է:

Դատարաններում այցելուների համար նախատեսված նստարանների առկայությունը

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկողները նշել են, որ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի, Մարտունու, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Աջափնյակ-2, Արաբկիրի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթ, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արթիկի, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայրերում այցելուների համար նախատեսված նստարանները բացակայել են:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ոչ բոլոր դատարանների միջանցքներում կան նստարաններ դատական նիստի մեկնարկին սպասելու համար, բացի այդ, դատարանները ապահովված չեն սպասասրահներով:

Առաջարկություն

Դատարաններն ապահովել սպասասրահներով՝ դատական նիստի մեկնարկին սպասելու, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար՝ գործի նյութերին ծանոթանալու նպատակով:

Դահլիճի դատավարական հատվածում դատավարության կողմերի համար նախատեսված նստարանների առկայությունը

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատավարության կողմերի համար նախատեսված բավարար քանակի նստարանների խնդիր արձանագրվել է 20 նիստի ընթացքում: Նշված խնդիրն արձանագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթի, Ավանի, Վարչական դատարանի Երևանի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրու, Մարալիկի, Արթիկի, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մարտունու, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վանաձորի նստավայրերում:

Եզրահանգում

Դատավարության մասնակիցների համար նախատեսված նստարանների քանակի խնդիրներ արձանագրվել են հիմնականում քրեական գործեր քննվող դատարաններում, ինչը պայմանավորված է եղել դատավարության մասնակիցների մեծ թվով: Դատավարության մասնակիցների համար նախատեսված բավարար քանակի նստարանների խնդիր արձանագրվել է Վարչական դատարանի Երևանի նստավայրում, որը պայմանավորված է եղել նիստերի դահլիճների փոքրությամբ:

Լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությունը դատական նիստերին

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման ամբողջ ընթացքում լրատվամիջոցների ներկայացուցիչներ ներկա են եղել ընդամենը 13 դատական նիստի ընթացքում, որից 11-ը քրեական գործեր են, իսկ 2-ը՝ քաղաքացիական:

Եզրահանգում

Լրատվամիջոցների ներկայացուցիչները ներկա են գտնվում և լուսաբանում են մեծամասամբ հանրային հնչեղություն ունեցող քրեական գործերի դատական նիստերը:

Դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածների (այցելուների հատված) առանձնացվածությունը

Կանոն

Դահլիճն առանձնացված է 2 հատվածի՝ դատավարական գործողություններ իրականացնող անձանց համար նախատեսված հատվածի (դատավոր, դատական նիստերի

քարտուղար, դատավարության մասնակիցներ) (դատավարական հատված) և դատական նիստերին ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածի (այցելուների հատված):

Դահլիճում դատավարական հատվածն այցելուների հատվածից առանձնացված է դահլիճի կահավորանքին համապատասխան առնվազն մեկ մետր բարձրությամբ փայտե կամ զրահապատ ապակե միջնորմով[66]:

Մշտադիտարկման արդյունքներ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2, Արաբկիրի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոնի, Շենգավիթի, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արթիկի, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Դիլիջանի, Վարչական դատարանի Երևանի նստավայրերում կան դատական նիստերի դահլիճներ, որոնցում դատավարական և այցելուների համար նախատեսված հատվածներն առանձնացված չեն եղել:

Եզրահանգում

Դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածներն (այցելուների հատված) հիմնականում առանձնացված են միմյանցից փայտե պատնեշներով, բացառությամբ վերոնշյալ դատարաններում:

Դատական նիստի ժամի մասին տեղեկացումը

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման ընթացքում մշտադիտարկողները դատական նիստերի ժամի մասին տեղեկացել են հիմնականում դատական նիստերի կարգադրիչների, «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգի, իսկ առավել քիչ՝ դատական նիստերի ցուցակների միջոցով:

Եզրահանգում

Ոչ բոլոր դատարաններում կան դատական նիստերի ժամանակացույցի վերաբերյալ հրապարակային և տեսանելի վայրում փակցված ցուցակներ, ինչպես նաև արձանագրվել է, որ «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգում դատական նիստերի վերաբերյալ տեղեկատվությունը ժամանակին չի լրացվում և ծրագիրը ժամանակին չի թարմացվում, որը բավականին մեծ դժվարություններ է առաջացնում, թե դատավարության մասնակիցների, թե մշտադիտարկողների համար:

Դատական նիստի բացման ժամը

Կանոն

[66] ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», կետեր 3 և 4

Դատական նիստ սկսելու համար սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հրապարակում է դատարանի կազմը և քննության ենթակա գործը[67]:

Համապատասխան որոշմամբ սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հայտարարում է, թե որ վարույթն է ենթակա քննության, ինչպես նաև հայտնում է դատավորի և դատական նիստի քարտուղարի անունը և ազգանունը[68]:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 1249 նիստերից 681-ը բացվել են նշանակված ժամին, իսկ 509-ը՝ ոչ:

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ մշտադիտարկված դատական նիստերի 42 տոկոսը բացվել է նշանակված ժամից ուշ:

Գծապակտեր 19. Դատական նիստերի ուշ բացման պատճառները



Դատարանի կազմի և քննության ենթակա գործի հրապարակումը նիստի մեկնարկին

Կանոն

[67]ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 143-րդ հոդված ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 102-րդ հոդված, 1-ին մաս:

[68] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 266-րդ հոդված, 2-րդ մաս:

Դատական նիստ սկսելու համար սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հրապարակում է դատարանի կազմը և քննության ենթակա գործը[69]:

Համապատասխան որոշմամբ սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հայտարարում է, թե որ վարույթն է ենթակա քննության, ինչպես նաև հայտնում է դատավորի և դատական նիստի քարտուղարի անունը և ազգանունը[70]:

Մշտադիտարկման արդյունքներ

Քաղաքացիական և վարչական գործերով մշտադիտարկված դատական նիստերի 95 տոկոս դեպքերում Դատարանը դատական նիստը բացելիս հրապարակել է Դատարանի կազմը և քննության ենթակա գործը, իսկ քրեական գործերի դեպքում՝ քննության ենթակա վարույթը, ինչպես նաև դատավորի և դատական նիստի քարտուղարի անունը և ազգանունը: Մնացած 5 տոկոս դեպքերում կայացել են այնպիսի դատական նիստեր, որոնցով դատաքննությունը շարունակվել է:

Դատավարության մասնակիցներից մեկի չներկայանալու դեպքում դատական նիստի շարունակումը կամ հետաձգումը

Կանոն

Դատական նիստին դատավարության մասնակիցներից որևէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով գործին մասնակցող անձանց կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը նրա բացակայությամբ շարունակելու կամ դատական նիստը հետաձգելու մասին[71]:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 1249 դատական նիստերից 716 դատական նիստերին չեն ներկայացել դատավարության մասնակիցները, որոնցից 558 դատական նիստերի ժամանակ դատավորը լսել է մյուս մասնակիցների կարծիքը դատական նիստը շարունակելու կամ հետաձգելու վերաբերյալ, իսկ 116 դատական նիստերի ժամանակ՝ ոչ:

«Թեպետ նիստը նշանակված էր ժամը 17:00-ին, այն ուշ սկսվեց՝ ժամը 17:09-ին, քանի որ դատավորը սպասում էր պաշտպանների ներկայանալուն, ովքեր Երևանից էին: Դատարանի համար անհայտ էր նիստին պաշտպանների չներկայանալու պատճառները: Դատավորը նշեց, որ իր աշխատակազմը նախապես կապ է հաստատել պաշտպանների հետ, վերջիններս ասել են՝ կգան նիստին, բայց չեն եկել: Հաջորդ նիստի օրը դատավորը որոշեց համաձայնեցնել պաշտպանների հետ, որպեսզի ապահովի նրանց ներկայությունը նիստին: Դատախազը նշեց, որ պաշտպանների վարքագիծը պետք է գնահատականի արժանանա: Ամբաստանյալը նիստին ևս ներկա էր և տեղեկություն չուներ պաշտպաններից»: (Մշտադիտարկողի մեկնաբանությունը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում թիվ ՍԴ/0066/01/18 քրեական գործով դատական նիստից):

[69] ՀՀ [illegible]
[illegible] դատավարության օրենսգիրք, 102-րդ հոդված, 1-ին մաս

[70] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 266-րդ հոդված, 2-րդ մաս

[71] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 146-րդ հոդված, 3-րդ մաս:

«Դատական նիստի ավարտից հետո դատավոր Մկրտչյանն իր դժգոհությունն հայտնեց այն մասին,որ դատարանները ծանրաբեռնվում են այնպիսի դատական նիստերով, որոնք տարիներով ընթանում են, իսկ կողմերը չեն ներկայանում նիստերին, օրինակ բերելով այն դեպքը,որի նստի ես ներկա էի: Մինչ հիմա ոչ մի նիստի կողմերը չեն ներկայացել»: (Մշտադիտարկողի մեկնաբանությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Աջափնյակ-2 նստավայրում կայացած դատական նիստից)

Չհարցաքննված վկաների ներկայությունը դատական նիստերի դահլիճում

Կանոն

Հիմնական դատալսումներն սկսվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով դատական նիստը բացելով և դատաքննության մասնակիցների վերաբերյալ հաղորդումը լսելով: Այնուհետև նախագահողը կարգադրում է դատական նիստի ներկայացած վկաներին մինչև նրանց հարցաքննությունը լքել դահլիճը, իսկ դատական կարգադրիչներին հանձնարարում է միջոցներ ձեռնարկել, որ չհարցաքննված վկաները չհաղորդակցվեն արդեն հարցաքննված վկաների, ինչպես նաև դատական նիստերի դահլիճում գտնվող այլ անձանց հետ[72]:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից 66 դատական նիստերին եղել են չհարցաքննված վկաներ, որոնցից

- 44 դատական նիստից հեռացվել են,
- 22 դատական նիստի ժամանակ չեն հեռացվել

Դատավորի, դատավարության մասնակիցների սեղաններին և ամբիոնի վրա դրված բարձրախոսների տեխնիկական վիճակը

Կանոն

[72] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդված:

Դատական գործերի միանձնյա քննության դեպքում դատավորի, իսկ դատական գործերի կոլեգիալ կազմով քննության դեպքում՝ դատավորների սեղանը հարմարեցված է մեկ համակարգչի օգտագործման համար, և սեղանին առկա է համակարգիչ, ինչպես նաև դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոսներ:

Դատավորի սեղանի դիմաց՝ կենտրոնական հատվածում, տեղադրված է ամբիոնը, որի վրա պետք է ամրացված լինի դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոս:

Դահլիճում դատավարության կողմերի համար նախատեսված գրասենյակային սեղանի (սեղանների) վրա տեղադրված են դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոսներ[73]:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատավորի սեղանի բարձրախոսը աշխատել է 1196 դատական նիստերի ժամանակ, իսկ 53 դատական նիստերին՝ չի աշխատել:

Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատավարության մասնակիցների սեղաններին դրված բարձրախոսերն աշխատել են 1189 դատական նիստերի ժամանակ, իսկ 60 դատական նիստերի ժամանակ չեն աշխատել:

Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից ամբիոնի վրա դրված բարձրախոսներն աշխատել են 1057 դատական նիստերի ժամանակ, իսկ 138 դատական նիստերի ժամանակ չեն աշխատել:

Դատական նիստերի արձանագրումը

Կանոն

1. Դատական նիստում գործողություններ կատարելիս վարվում է արձանագրվում են:
2. Դատական նիստերի դահլիճում հատուկ համակարգչային ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակյա համառոտագրման ձևով: Համառոտագրումը դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են:
3. Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգի բացակայության կամ դրա օգտագործման անհնարինության դեպքում արձանագրությունը վարվում է պարզ թղթային արձանագրման ձևով: Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգի

[73] ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», կետ 10, 15 և 18:

օգտագործման հնարավորությունը վերականգնվելու դեպքում արձանագրությունը վարվում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված ձևով[74]:

Դատական նիստի արձանագրման ձևի և բովանդակության, այն վարելու կարգի, արձանագրության վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները[75]:

Դատարանում վարույթի ընթացքը ենթակա է պարտադիր արձանագրման: Արձանագրությունը դատական նիստի ընթացքում վարում է դատական նիստի քարտուղարը՝ դրանում ներառելով բոլոր վարութային գործողությունները և որոշումները:

Դատական նիստի դահլիճում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով: Համառոտագրումը կատարվում է դատական նիստերի դահլիճում իրականացվող վարութային գործողությունների և կայացվող որոշումների մասին նշումների ձևով: Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգի շահագործման, տվյալների արխիվացման և համակարգի պահպանության կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը: (...)

Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը կատարվում է ձայնագրման հետ միաժամանակ՝ համակարգչային եղանակով: Ձայնային արձանագրությունը վարույթի նյութերին կցվում է էլեկտրոնային կրիչով: Համառոտագրումը վարույթի նյութերին կցվում է թղթային կրիչով՝ դատական նիստի քարտուղարի ստորագրությամբ:

Դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի օրինակը դրա համառոտագրման հետ միասին վարույթի մասնակիցների գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է դատական նիստից անմիջապես հետո:

Դատական նիստի պարզ թղթային արձանագրության պատճենը վարույթի մասնակիցների գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է ոչ ուշ, քան դիմումը ստանալու հաջորդ օրը:

Արձանագրության բովանդակության մեջ չի թույլատրվում կատարել ջնջումներ: Ուղղում կատարելու անհրաժեշտության դեպքում դատական նիստի քարտուղարն այն մինչև ստորագրելը համաձայնեցնում է նախագահողի հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 279-րդ հոդված

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 1249 դատական նիստերից դատական նիստերի դահլիճներից 1242 ապահովված են եղել համակարգչային ձայնագրման համակարգով, իսկ 7 դահլիճ՝ ոչ:

Հայաստանի Հանրապետության դատարաններում դատական նիստերի արձանագրումը կատարվում է SRS Femida ձայնագրման համակարգի միջոցով: Ձայնագրման համակարգը գործում է համակարգչի միջոցով և նախատեսված է Հայաստանի Հանրապետության բոլոր

[74] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 161-րդ հոդված

[75] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 129-րդ հոդված

դատարաններում դատական նիստերի ձայնագրման և համակարգչային եղանակով միաժամանակյա համառոտագրման աշխատանքներն իրականացնելու համար:

Դատական նիստի համակարգչային ձայնագրության անընդհատությունը

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 1249 դատական նիստերի ընթացքում 1201 դատական նիստերի համակարգչային ձայնայագրությունը չի ընդհատվել, իսկ 48 դատական նիստերի ձայնագրումը ընդհատվել է:

Դատական նիստերի ձայնագրումը հիմնականում դադարեցվել է դատական նիստերի ժամանակ ընդմիջում հայտարարելու ժամանակ:

Ընդմիջմամբ պայմանավորված դատական նիստերի ձայնագրման դադարեցման պատճառների նկարագիրը հետևյալն է.

1. հաջորդ դատական նիստի օրն ու ժամը որոշելու նպատակով,
2. վստահորդի հետ փաստաբանի խոսելու նպատակով,
3. տուժողին իր իրավունքների և պարտականությունների մասին հուշաթերթը փոխանցելու նպատակով,
4. տեխնիկական պատճառներով՝ գործի նյութերից որոշակի նյութեր պատճենելու, կրիչ փոխանցելու և այլ պատճառներով,
5. թարգմանչի կողմից ավելի հանգամանալից բացատրություն ու թարգմանություն կատարելու նպատակով,
6. դատարանի կողմից դատավարության մասնակիցների հետ կապ հաստատելու և սպասելու նպատակով,
7. դատավարության մասնակիցների՝ գործի նյութերին ծանոթանալու նպատակով,
8. դատավորի խնդրանքով՝ անձնական պատճառներով,
9. կողմերի միջև վեճի պատճառով:

Դատավորի և դատավարության մասնակիցների խոսքի լսելիությունը

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման ընթացքում մշտադիտարկողները նշել են, որ դատավորներ Լիլիթ Սարգսյանի, Ռուբեն Ներսիսյանի, Գնել Գասպարյանի, Կարեն Ֆարխոյանի, Լուսինե Ալավերդյանի, Սյուզաննա Ուլիխանյանի խոսքը լսելի չէ, քանի որ շատ ցածր ձայնով են խոսում դատական նիստերի ժամանակ: Դատավարության մասնակիցների և դատավորի ցածր ձայնով խոսքի մասին նշվել է թվով 94 դատական նիստերի մշտադիտարկման քարտերում:

«Դատավարության մասնակիցները խոսքը լսելի է, բայց դատավոր Ֆարխոյանը շաատ ցածր է խոսում, նույնսիկ այցելուների համար նախատեսված առաջին նստարաններից վերջինսի ձայնը չի լսվում»: (Մշտադիտարկողի մեկնաբանությունը դատավոր Կարեն Ֆարխոյանի վարած դատական նիստի վերաբերյալ

«դատավորի խոսքը ընդհանրապես լսելի չէր, անհնարին էր հասկանալ, թե
ւչ է խոսում, ուստի հնարավորություն չեմ ունեցել հասկանալու արդյոք դատավորը հայտարարել է, որ
ույթն է քննության և այլն»: Մշտադիտարկողի մեկնաբանությունը դատավոր Սյուզաննա Ուլիխանյանի
վարած դատական նիստի վերաբերյալ

Դատական նիստերի հրապարակայնության ապահովման համար կարևոր է ոչ միայն նիստերի սահմանված կարգով դռնբաց անցկացումը և հանրության ներկայացուցիչների անխոչընդոտ մուտքը նշված նիստերին, այլ նաև նիստի բովանդակությանը հաղորդակից լինելը՝ այն է դատավարական գործողությունների տեսանելիությունը և լսելիությունը ներկա անձանց համար: Մշտադիտարկողները նշել են այնպիսի դեպքեր, երբ դատավարական գործողության իրականացումը՝ դատավարության մասնակիցների և դատավորի խոսքը լսելի չի եղել: Նշվածը պայմանավորված է եղել 3 պատճառներով՝ վատ ակուստիկայի, դատավարության մասնակիցների և դատավորի ցածր խոսքի և ձայնային սարքավորումների ոչ պատշաճ աշխատանքի:

Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատական նիստն ամբողջությամբ լսելի է եղել 1178 դեպքերում: Մասամբ լսելի է եղել թվով 71 դատական նիստերի ժամանակ:

Մշտադիտարկման արդյունքներ

Թվով 29 դատական նիստեր եղել են ոչ լսելի՝ վատ ակուստիկայով պայմանավորված: Թվով 4 դատական նիստերում ձայնային սարքավորումների ոչ պատշաճ աշխատանքի հետևանքով եղել է աղմուկ:

Դատական նիստեր, որոնցում հրապարկվել են դատական ակտեր

Կանոն

Դատարանի վճիռը բոլոր դեպքերում հրապարակվում է դռնբաց նիստում, բացառությամբ որդեգրման գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասի հրապարակման դեպքերի[76]:

[76] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 17.06.1998, ուժը կորցրել է 09.04.201

Դատավճիռն ստորագրելուց հետո դատարանը վերադառնում է դատական նիստի դահլիճ, և նախագահողը հրապարակում է դատավճիռը: Դատական նիստի դահլիճում բոլոր ներկա գտնվողները դատավճիռը լսում են հոտնկայս: (...) Նախագահողն ամբաստանյալին, մյուս մասնակիցներին պարզաբանում է դատավճռի բողոքարկման կարգը և ժամկետը[77]:

Դատավճիռը հրապարակվում է նախապես հայտարարված վայրում և ժամին: Դատական նիստի դահլիճում բոլոր ներկաները դատավճիռը լսում են հոտնկայս: Նախագահողը հրապարակում է դատավճիռն ամբողջությամբ կամ միայն դրա եզրափակիչ մասը: Եթե վարույթի մասնավոր մասնակիցը չի տիրապետում վարույթի լեզվին, ապա դատավճիռը հրապարակելիս թարգմանիչը տվյալ անձի համար թարգմանում է դրա եզրափակիչ մասը:

Դատավճիռը հրապարակելուց հետո նախագահողը պարզաբանում է դատավճռի բողոքարկման կարգը և ժամկետը, ինչպես նաև տալիս է անհրաժեշտ այլ պարզաբանումներ[78]:

Բանավոր ընթացակարգով բողոքի քննության դեպքում որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է դատական նիստում[79]:

Վերդիկտը կազմվում է գրավոր և հրապարակվում է դատական նիստում[80]:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված թվով 1249 դատական նիստերից դատական ակտեր են հրապարակվել թվով 108-ի ժամանակ, որից 76 դատական նիստերի ժամանակ դատավորը պարզաբանել է ակտը բողոքարկելու ժամկետներն ու կարգը, իսկ 32 դատական նիստերի ժամանակ՝ ոչ:

Գործի քննության ավարտը

Կանոն

Դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտերը (այսուհետ՝ եզրափակիչ դատական ակտ), իսկ օրենքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում:

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, 11-րդ հոդված, 6-րդ մաս

Դատարանի՝ եզրափակիչ, իսկ սույն օրենսգրքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 17-րդ հոդված, 7-րդ մաս

---

[77] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 01.07.1998, 01.07.2022-ին, բացառությամբ 30.06.21 ՀՕ-306-Ն օրենսգրքի 483-րդ հոդվածով նածատեսված դեպքերի, 373-րդ հոդված, 1-ին և 3-րդ մասեր

[78] ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրք, 350-րդ հոդված, 1-4-րդ մասեր

[79] ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրք, 304-րդ հոդված, 4-րդ մաս

[80] ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրք, 344-րդ հոդված, 1-ին մաս

Դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվում է դատավարության մասնակիցներին, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 114-րդ հոդված, 6-րդ և 7-րդ մաս

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված դատական նիստերից 212 դատական նիստերում գործի քննությունն ավարտվել է, որից 83 վարչական գործով, 70 քաղաքացիական և 59 քրեական գործերով: Ավարտված բոլոր գործերը հետագայում ուսումնասիրության են ենթարկվել դատական իշխանության պաշտոնական հրապարակման կայքում. պարզվել է դրանց հրապարակված (տեղադրված) լինելու հանգամանքը և ժամանակը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

83 վարչական գործով գործի վարույթն ավարտվել է, դատարանը հրապարակել է դատական ակտի հրապարակման օրը: Նշված գործերից միայն 50-ով է վճիռը կամ գործի վարույթը կարճելու մասին որոշումը տեղադրվել տվյալ օրը: Մնացած գործերը. 9 գործով 1 օր ուշացմամբ[81], 4 գործով 2 օր[82], 7 գործով 3 օր[83], 2 գործով 4 օր[84], 4 գործով 5 օր[85], 1 գործով 6 օր[86], 1 գործով 8 օր[87], 1 գործով 14 օր[88], 1 գործով տեղեկատվությունը բացակայում է[89], 2 գործով 2 ամիս[90] հետո, 1 գործով վարույթը վերսկսվել է:

Գծապատկեր 20. Վարչական գործերով վճռի հրապարակում

[81] ՎԴ/13322/05/21, ՎԴ/10703/05/21, ՎԴ6/0213/05/20, ՎԴ5/0264/05/22, ՎԴ5/0229/05/20, ՎԴ/1419/05/20, ՎԴ6/0040/05/22, ՎԴ6/0218/05/22, ՎԴ6/0196/05/22

[82] ՎԴ/1211/05/22, ՎԴ/7118/05/22, ՎԴ/9163/05/20, ՎԴ6/0247/05/22

[83] ՎԴ2/0153/05/22, ՎԴ6/0191/05/21, ՎԴ/6914/05/21, ՎԴ/8103/05/21, ՎԴ/1928/05/22, ՎԴ/6539/05/22, ՎԴ/6839/05/21

[84] ՎԴ/7908/05/21, ՎԴ/0965/05/22

[85] ՎԴ5/0321/05/22, ՎԴ/4423/05/16, ՎԴ2/0255/05/22, ՎԴ/6897/05/21

[86] ՎԴ/13297/05/21

[87] ՎԴ2/0361/05/21

[88] ՎԴ2/0263/05/22

[89] ՎԴ/4681/05/21

[90] ՎԴ6/0009/05/20, ՎԴ6/0098/05/22



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

70 ավարտված քաղաքացիական գործերից միայն 33-ով են դատական ակտերը հրապարակվել հրապարակման հայտարարված օրը: Մնացած գործերը. 2 գործով 1 օր[91], 4 գործով 2 օր[92], 3 գործով 4 օր[93], 2 գործով 5 օր[94], 2 գործով 7 օր[95], 1 գործով 11 օր[96], 1 գործով 12 օր[97], 1 գործով 15 օր[98], 1 գործով 16 օր[99], 1 գործով 20 օր[100], 1 գործով 22 օր[101], 1 գործով 6 ամիս[102], 1 գործով 5 ամիս[103], 3 գործով 3 ամիս[104], 1 գործով 2 ամիս[105], 4 գործով 1 ամիս[106], 2 գործով 8 ամիս[107] հետո, 1 գործով վերսկսվել է [108], 5 գործով տեղեկատվությունը բացակայում է[109]:

Գծապատկեր 22. Քաղաքացիական գործերով վճռի հրապարակում

[91] ԵԿԴ/1849/02/16, ՏԴ/3910/02/22
[92] ԼԴ1/1616/02/22, ԵԴ/37230/02/22, ԼԴ2/1343/02/22, ԼԴ4/1047/02/21
[93] ԵԴ/45348/02/19, ԼԴ/6110/02/22, ԵԴ/50182/02/22
[94] ԵԴ/18090/02/22, ԵԴ/32079/02/22
[95] ՏԴ/0221/02/20, ԼԴ4/1559/02/22
[96] ԵԴ/17779/02/18
[97] ԼԴ/5595/02/22
[98] ԵԴ/35806/02/22
[99] ԵԴ/63706/02/22
[100] ԵԴ/30061/02/20
[101] ԵԴ/2512/02/23
[102] ՇԴ/7818/02/21
[103] ԵԴ/0777/02/18
[104] ՇԴ1/0105/02/20, ԵԴ/41172/02/22, ՇԴ/5491/02/21
[105] ԳԴ4/0130/02/22
[106] ԵԴ/22914/02/22, ԳԴ4/0176/02/22, ԵԴ/24616/02/22, ԵԴ/58282/02/21
[107] ՇԴ3/2518/02/21, ԵԴ/4068/02/22
[108] ԵԴ/2170/02/23
[109] ԼԴ/7334/02/22, ԵԴ/0639/02/22, ԵԴ/55088/02/22, ԼԴ2/0999/02/22, ՇԴ/4224/02/20



ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

59 քրեական գործերով կայացվել են դատավճիռներ կամ վարույթը կարճելու մասին որոշումներ, որոնցից ոչ մեկը չի տեղադրվել կայքում հրապարակման օրը: 2 գործով 2,5 ամսի հետո[110], 2 գործով 3 ամիս հետո[111], 1 գործով 4 ամիս հետո[112], 6 գործով 6 օր հետո[113], 4 գործով 2 ամիս հետո[114], 5 գործով 3 օր հետո[115], 4 գործով 1 ամիս հետո[116], 3 գործով 3,5 ամիս հետո[117] , 4 գործով 2 օր հետո[118], 3 գործով 8 օր հետո[119], 1 գործով 15 օր հետո[120], 2 գործով 1,5 ամիս հետո[121] , 4 գործով 9 օր հետո [122], 1 գործով 12 օր հետո[123], 3 գործով 14 օր հետո[124], 4 գործով 7

[110] ԵԴ/0573/01/21, ԵԴ/1085/01/22
[111] ԵԴ/1698/01/22, ԵԴ/1092/01/22
[112] ԵԴ/0610/01/22
[113] ԵԴ/0311/01/22, ԵԴ/2041/01/22, ԼԴ2/0103/01/22, ԵԴ/2045/01/22, ՏԴ/0042/01/23, ԼԴ2/0005/01/23
[114] ԵԴ/0572/01/21, ԵԴ/1401/01/20, ԵԴ/0577/01/21, ԵԴ/2051/01/22
[115] ԼԴ2/0043/01/22, ԼԴ2/0010/01/23, ԼԴ/0163/01/22, ԵԴ/1719/01/22, ԵԴ/0504/01/22
[116] ԵԴ/1395/01/22, ՏԴ/0194/01/22, ԵԴ/1777/01/22, ԵԴ/0236/01/23
[117] ԵԴ/0206/01/23, ԵԴ/1736/01/22, ԵԴ/2005/01/22
[118] ՍԴ/0070/01/22, ՇԴ/0002/01/23, ԵԴ/0108/01/23, ԵԴ/1784/01/22
[119] ՇԴ1/0002/01/23, ՏԴ/0204/01/22, ԵԴ/1742/01/22
[120] ՍԴ1/0039/01/22
[121] ԵԴ/1217/01/20, ԵԴ/1146/01/22
[122] ԵԴ/1987/01/22, ԵԴ/1766/01/22, ԵԴ/0016/01/23, ՇԴ/0181/01/22
[123] ԵԴ/0103/01/23
[124] ԼԴ4/0002/01/23, ԵԴ/1062/01/21, ԼԴ1/0019/01/21

օր հետո[125], 3 գործով 1 օր հետո[126], 1 գործով 16 օր հետո[127], 1 գործով 11 օր հետո[128], 1 գործով 20 օր հետո[129], 1 գործով 11 օր հետո[130], 1 գործով 4 օր հետո[131], 1 գործով 5 օր հետո[132], 1 գործով դատական ակտի հրապարակման մասին տեղեկությունը բացակայում է:

Եզրահանգում

Վարչական գործերից 60 տոկոսով է պահպանվել դատական ակտի հրապարակման ժամկետը, քաղաքացիական գործերից 47 տոկոսով է պահպանվել, իսկ քրեական գործերով՝ 0 տոկոս: Նշված վիճակագրությունը խիստ մտահոգիչ է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վճռի հրապարակումն իրականացվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով, այսինքն՝ դատական նիստ հրավիրելու և նիստում դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակելու փոխարեն դատական ակտը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքում: ***Հրապարակման նոր կարգ սահմանելն ուղղված է հանրության ավելի լայն շրջանակներին դատական ակտին հաղորդակից դարձնելուն, ինչպես նաև դատարանների ծանրաբեռնվածության բեռնաթափմանը:*** Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքով սահմանել է նոր կարգ, սակայն դատարաններին չի ազատել դատական ակտի օրինակն անձին առձեռն հանձնելու կամ ուղարկելու պարտականությունից:

Անձի բողոքարկման իրավունքը, հանդիսանալով դատարանի մատչելիության իրավունքի բաղկացուցիչ տարր, կարող է իրացվել այն դեպքում, երբ անձն իրական հնարավորություն է ձեռք բերել ծանոթանալու դատարանի որոշման հետ: Ներպետական օրենսդրությամբ դատական ակտը հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու և նրանց ուղարկելու ընթացակարգեր սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում այդ միջոցներով ստեղծել բավարար հիմքեր և երաշխիքներ, որպեսզի անձինք կարողանան անխաթար կերպով օգտվեն իրենց դատական պաշտպանության իրավունքից[133]:

Ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ դատական ակտերի հրապարակման կարգը հիմնականում չի պահպանվում, իսկ հրապարակման կարգի պահպանման նկատմամբ որևէ արդյունավետ վերահսկողություն բացակայում է: Բարձրագույն դատական խորհուրդը նշված խախտումներին անդրադառնում է կարգապահական վարույթների շրջանակներում, ինչը, սակայն, բավարար չէ և չի լուծում առկա խնդիրը: Որպես խնդրի լուծման արդյունավետ տարբերակ կարող է ծառայել ԲԴԽ-ի կողմից մշտադիտարկման իրականացումը: Բարձրագույն դատական խորհուրդը 18.03.2024թ. ընդունել է ԲԴԽ-25-Ն-10 որոշումը, որով սահմանել է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից գործերի քննության

---

[125] ԳԴ4/0055/01/22, ՍԴ1/0029/01/23, ՍԴ1/0025/01/19, ՍԴ1/0030/01/23
[126] ՍԴ1/0019/01/23, ՍԴ1/0018/01/23, ՍԴ1/0035/01/22
[127] ԵԴ/0492/01/22
[128] ԵԴ/0917/01/22
[129] ԵԴ/1384/01/22
[130] ԵԴ/0031/01/23
[131] ԵԴ/1996/01/22
[132] ԼԴ/0052/01/22
[133] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՇԴ3/0845/02/19 գործով 03.03.2022թ. կայացրած որոշումը

ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու կարգը, որում, սակայն, դատական ակտերի հրապարակման հարցերը ներառված չեն: Ընդհանուր առմամբ, մշտադիտարկվող հարցերի շրջանակը նեղ է: Բացի այդ, Որոշման 14-րդ կետի համաձայն. «Մշտադիտարկման արդյունքում կազմված Զեկույցը Դատարանի նախագահն ուղարկում է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին: Զեկույցը կարող է հրապարակվել դատական իշխանության պաշտոնական կայքում»:

Ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքի պահպանման նկատմամբ նաև հասարակական վերահսկողությունն ապահովելու տեսանկյունից շատ կարևոր է զեկույցների պարտադիր, ոչ թե կամընտրային հրապարակումը դատական իշխանության պաշտոնական կայքում:

Առաջարկություններ

1. Ստեղծել դատական ակտերի հրապարակման ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկման արդյունավետ ընթացակարգեր:
2. Փոփոխություններ և լրացումներ կատարել թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշման մեջ՝ դատարանների նախագահների կողմից մշտադիտարկվող հարցերի շրջանակում նախատեսելով նաև դատական ակտերի հրապարակման հարցերը:
3. Փոփոխություններ և լրացումներ կատարել թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշման 14-րդ կետում՝ սահմանելով զեկուցների պարտադիր հրապարակման պահանջ:

Դատական նիստերի հետաձգումները

Կանոն

Քաղաքացիական դատավարություն

1. Դատարանն իրավունք ունի հետաձգելու գործի քննությունը, եթե՝

1) գործին մասնակցող անձանցից որևէ մեկը կամ նրա ներկայացուցիչը դատարանի կողմից հարգելի ճանաչված պատճառով չի ներկայացել դատական նիստին.

2) չի կարող իրականացվել տվյալ նիստում՝ դատավարության մասնակիցներից որևէ մեկի չներկայանալու պատճառով.

3) դա թելադրված է ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ.

4) դա թելադրված է գործին մասնակցող անձի ներկայացրած լրացուցիչ ապացույցներին գործին մասնակցող այլ անձանց ծանոթանալու անհրաժեշտությամբ.

5) գործին մասնակցող անձանցից որևէ մեկը միջնորդում է տրամադրել ողջամիտ ժամկետ՝ վեճը հաշտությամբ լուծելու համար, և գործին մասնակցող մյուս անձինք չեն առարկում, կամ դատարանը նշանակել է հաշտարարություն.

6) հայցվորը ներկայացրել է հայցի առարկան և հիմքը կամ դրանցից որևէ մեկը փոփոխելու վերաբերյալ միջնորդություն, և գործին մասնակցող անձը չի միջնորդել գործի քննությունը շարունակելու վերաբերյալ.

7) ներկայացվել է հակընդդեմ հայց կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ.

8) ավարտվել է աշխատանքային օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական նիստը շարունակելը թելադրված է գործի քննության՝ օրենքով սահմանված հատուկ ժամկետը պահպանելու անհրաժեշտությամբ.

9) դատական նիստը չի կարող շարունակվել դատավարության մասնակցի կամ նիստերի դահլիճում ներկա անձի կողմից թույլ տրվող դատական նիստի կարգի խախտման պատճառով.

10) առաջին ատյանի դատարանը որոշել է գործի քննությանը ներգրավել գործին մասնակցող նոր անձի կամ, սույն օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ծանուցել որևէ անձի.

11) առկա են դատավորի առողջական վիճակի հետ կապված կամ այլ հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում դատարանի կողմից գործի քննությունը.

12) դատական նիստերի դահլիճում տեղադրված համակարգչային ձայնագրման համակարգի անսարքության պատճառով հնարավոր չէ ապահովել դրա շահագործումը և դատական նիստին ներկա գործին մասնակցող անձինք առարկում են պարզ թղթային եղանակով դատական նիստն արձանագրելուն.

13) դատական նիստերի դահլիճում տեղադրված տեսաձայնային հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգի անսարքության կամ այլ տեխնիկական պատճառներով հնարավոր չէ ապահովել դատավարության մասնակցի մասնակցությունը դատական նիստին.

14) օրենքով սահմանված հիմքերի առկայության կամ սույն օրենսգրքով սահմանված դատավարական գործողությունները կատարելու անհրաժեշտության դեպքերում[134]:

Վարչական դատավարություն

1. Վարչական դատարանն իրավասու է հետաձգելու գործի դատաքննությունը, եթե՝

1) համարում է, որ այն չի կարող քննվել տվյալ նիստում, մասնավորապես դատավարության մասնակիցներից որևէ մեկի, վկաների, փորձագետների, թարգմանիչների բացակայության պատճառով.

2) այն թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ.

3) ավարտվել է աշխատանքային օրը, եթե սույն օրենսգրքով գործի քննության հատուկ ժամկետներ սահմանված չեն.

4) կողմերից մեկը միջնորդում է տրամադրել ողջամիտ ժամկետ՝ վեճն արտադատարանական կարգով լուծելու համար.

5) հայցվորը ներկայացրել է հայցի հիմքը և (կամ) առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդություն.

6) կողմերը փոխադարձ համաձայնությամբ միջնորդում են հետաձգել գործի դատաքննությունը:

2. Գործի դատաքննությունը հետաձգելու մասին կայացվում է որոշում:

3. Դատավարության մասնակիցները պատշաճ ծանուցվում են հաջորդ դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

4. Գործի դատաքննությունը հետաձգելուց հետո այն շարունակվում է ընդհատված պահից[135]:

Քրեական դատավարություն

1. Դատալսումները հետաձգվում են՝

---

[134] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 156-րդ հոդված

[135] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 106-րդ հոդված

1) եթե առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ և 5-րդ կետերով նախատեսված՝ քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու որևէ հիմք.

2) դատական նիստին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 272-275-րդ հոդվածներով նախատեսված անձանցից որևէ մեկի չներկայանալու դեպքում, եթե նրա մասնակցությունը պարտադիր է օրենքով կամ դատարանի որոշման հիման վրա.

3) եթե դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է լուծել տվյալ վարույթով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցը.

4) եթե սույն օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսված դեպքերում դատական նիստի դահլիճից հեռացված վարույթի մասնակցի բացակայությամբ դատական նիստը շարունակելն անհնար է:

2. Դատալսումները դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող են հետաձգվել, եթե դա անհրաժեշտ է՝

1) նոր ապացույց ձեռք բերելու համար.

2) հանրային մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու, ինչպես նաև պաշտպանության կողմին նոր մեղադրանքին ծանոթանալու և դրանից պաշտպանվելու միջոցներ ձեռնարկելու համար.

3) վերդիկտ կամ դատավճիռ կայացնելու համար.

4) եզրափակիչ ելույթներին պատրաստվելու համար[136]:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 1249 դատական նիստերից 750 դատական նիստում գործի քննությունը հետաձգվել է: Այսպիսով, մշտադիտարկված դատական նիստերի գրեթե 60 տոկոսը հետաձգվել է:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	
Նստավայր	Հետաձգված նիստերի քանակ
Գավառ	16
Մարտունի	12
Սևան	15

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	
Նստավայր	Հետաձգված նիստերի քանակ
Ալավերդի	13
Սպիտակ	19
Վանաձոր	27

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	
Նստավայր	Հետաձգված նիստերի քանակ
Արթիկ	21

[136] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 278-րդ հոդված

Գյումրի	39
Մարալիկ	20

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	
Նստավայր	Հետաձգված նիստերի քանակ
Գորիս	43
Սիսիան	9

Վարչական դատարան	
Նստավայր	Հետաձգված նիստերի քանակ
Գյումրի	22
Երևան	81
Սևան	10
Վանաձոր	10

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	
Նստավայր	Հետաձգված նիստերի քանակ
Դիլիջան	7
Իջևան	26

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	
Նստավայր	Հետաձգված նիստերի քանակ
Աջափնյակ 2	58
Արաբկիր	53
Էրեբունի	50
Ավան	81
Կենտրոն	58
Շենգավիթ	60

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՀԵՏԱՁԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ, որպես դատական նիստերի հետաձգումների հիմնական պատճառներ հանդիսացել են ծանուցման հետ կապված խնդիրները և դատավարության մասնակիցների բացակայությունը, առանց որոնց անհնար է եղել դատական նիստն անցկացնել: Այնուհետև, շատ դատական նիստեր հետաձգվել են դատավարության մասնակիցների միջնորդությամբ: Հարկ է նկատել, որ դատարանի կամ դատավորի հետ կապված անձնական պատճառներով դատական նիստերի հետաձգումներ չեն արձանագրվել:

Ընդհանուր առմամբ, դատական նիստերի հետաձգման պատճառներ հանդիսացել են ներքոնշյալները.

- դատավարության մասնակիցների բացակայություն/ կամ ներկայությունն ապահովելու նպատակով,
- դատավարության մասնակիցների կամ դատարանի կողմից ապացույց ձեռք բերելու/ներկայացնելու համար ժամկետներ սահմանելու նպատակով,
- գործի նյութերին ծանոթանալու նպատակով,
- կողմերի/պաշտպան, դատախազ, հայցվոր, պատասխանող/ միջնորդությամբ,
- աշխատանքային օրվա ավարտի պատճառով,
- հաշտության համաձայնություն կնքելու և համաձայնեցման վարույթ կիրառելու հետ կապված հարցերի քննարկման նպատակով,
- վկաներին բերման ենթարկելու նպատակով,
- տեխնիկական պատճառներով (օրինակ՝ էլեկտրականության կորստի),
- ծանուցումների ապահովման նպատակով:

Հաջորդող դատական նիստերի միջև ընկած ժամանակային միջակայքը

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկողները 769 գործով տրամադրել են հաջորդ դատական նիստի օրվա վերաբերյալ տվյալներ: Նշված գործերից միայն 287-ով է հաջորդ դատական նիստը նշանակվել 1 ամսվա ընթացքում: Ընդ որում, նշված գործերը մեծամասամբ քրեական գործեր են: Մյուս գործերով դատական նիստերը նշանակվել են ընդհուպ մինչև 273 օր հետո:

Դատավոր	Օր																			
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Աջափնյակ-2 նստավայր																				
Արամ Մկրտչյան	33	89	91	91	93	110	114	114	115											
Արմինե Սաֆարյան	19	161	161																	
Արշակ Պետրոսյան	43	57	67	68	72	77	4	90												
Գրիգորի Վարդանյան	14	50	91																	
Հայարփի Զարգարյան	42	100	105	105	110															
Հասմիկ Ջալալյան	4																			
Հովիկ Շահնազարյան	30	58																		
Հովհաննես Ղազարյան	28	49	56	89	89															
Նաիրա Ավետիսյան	56	103	103	107																
Սարգիս Երիցյան	27	28	29	38	44	91	99													
Սերգեյ Սահակյան	77	80	87	87	91	94	102													
Տիգրան Գրիգորյան	13	19	22	30	51	63														

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅ																				
Արթուր Ստեփանյան	72	112	124																	
Արմենուհի Բաղիրյան	27	99																		
Զարուհի Նախշքարյան	32																			
Էդուարդ Ամալյան	28	29	42	50	56	74	77	91	91	93	93	105	105	118						
Լիլիթ Սարգսյան	19	27	92	119	154	160	161													
Մարինա Տաշչյան	70	70																		
Մուրադ Հովակիմյան	76	79	91	99	128															
Ռուբեն Բունիաթյան	41	63	70	72	75	78	78	191												
Ռուբեն Ներսիսյան	7	27	49	84	85	133	133	133												
Սիմիզար Հովսեփյան	23																			
Սյուզաննա Ուլիխանյան	80	84	88	91	92															

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ																			
Աննա Մաթևոսյան	35																		
Ավագ Գաբրիելյան	21	90	98	98	98	98	105												
Գայանե Խաչատրյան	13	18	26	42	48	53	74												
Գայանե Մազմանյան	35																		
Դանիել Դանիելյան	112																		
Դանիել Միսեյան	98	101	106	106	108														
Երեմ Եսոյան	59	63	70	82	91														
Ժաննա Ասատրյան	12	21	37	52	77	83	86	98	98	111	112	116							
Լիզա Գրիգորյան	8	12	14	15	17	17	18	20	21	22	63								
Նաիրա Հովսեփյան	42	42	46	63															
Տաթևիկ Ստեփանյան	19	21	53	84	88	100	103	110	112	117	121								
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ԱՎԱՆ ՆՍՏԱՎԱՅՐ																			
Արման Հովհաննիսյան	9	12	14	24	26	48													
Արմինե Մելիքսեթյան	20	53	56	68															
Արմինե Սաֆարյան	54																		
Գնել Գասպարյան	13	31																	
Դավիթ Հարությունյան	7																		
Հարություն Մանուկյան	12	16	21	21	23	25	26	33	35	35	43	92	95	105	120				

Մանվել Շահվերդյան	4	18	18	19	31	43	43	44	45													
Վահագն Մելիքյան	5	27	31	35	38	44	50	51	52	55	57	57	69									
Վահե Միսակյան	14	18	22	24	35	35	62	63	64	68												
Վարդան Գրիգորյան	34	73	98	98	111	116																
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ԿԵՆՏՐՈՆ ՆՍՏԱՎԱՅՐ																						
Աննա Մաթևոսյան	4	6	8	10	12	14	21	24	25													
Արթուր Մկրտչյան	10	26	29																			
Գագիկ Պողոսյան	28	30	32	34	36	43																
Կարեն Ֆարխոյան	6	23	26	37	68	80	86	86	90													
Մնացական Մարտիրոսյան	9	14	21	22	25	26	31	33	33	45	54											
Ջոն Հայրապետյան	2	10	12	26																		
Սուսաննա Գզոգյան	5	6	7	12	13	17	30	32	36	37	47											
Տաթևիկ Գրիգորյան	7	18	23	24	27	28	30															
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ՇԵՆԳԱՎԻԹ ՆՍՏԱՎԱՅՐ																						
Աննա Դանիբեկյան	4	33																				
Արտուշ Գաբրիելյան	14	17	21	31	33	38	45	46	56	69	75											
Դավիթ Բալայան	11	23	24	28	29	30	53	54	63	64												
Ժորա Չիչոյան	5	16	20	28	30																	
Կարեն Ֆարխոյան	44																					

Նելլի Բաղդասարյան	6	21	21	28	33	44	49	49	52	56	58	59	69		
Սամվել Յուզբաշյան	8	13	23	27	30	35	35	38							
Վաչե Մարգարյան	14	24	27	28	30	30	37	53	55	71	71	74			
Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ԱԼԱՎԵՐԴՈՒ ՆՍՏԱՎԱՅՐ															
Բակուր Գրիգորյան	20	28	28	28	30	30	31	44							
Սուրեն Բաղդասարյան	10	20	27	32	32	41									
Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ՍՊԻՏԱԿԻ ՆՍՏԱՎԱՅՐ															
Աղասի Մկոյան	12	13	13	70	98	99	105	105	105	106	109	112	116		
Արտակ Կարապետյան	2	26	27	36											
Մարտին Արզումանյան	8	21													
Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ՎԱՆԱՁՈՐԻ ՆՍՏԱՎԱՅՐ															
Անի Չիլինգարյան	37	38	66	77	89	116	117	119							
Ելենա Առաքելյան	21	30	30	32	47	98									
Լուսինե Ալավերդյան	6	13	49												
Մուշեղ Հարությունյան	10	12	31	46											
Նանե Սահակյան	26	26	49	79											
Սուրեն Բաղդասարյան	17	31													
Վարդուհի Հովնանյան	21	91	92												
Տարոն Թադևոսյան	7	15	22	29	30	31	31	35	40						

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ԱՐԹԻԿԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Արման Սարոյան	21	27	49	62	82	83	84	85	91	91	91	91	91	103	104	105	112	112	112	112	112
Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ԳՅՈՒՄՐՈՒ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Ալլա Քյուրքչյան	21	34																			
Անի Երիջանյան	15	18	35																		
Անի Մարտիրոսյան	4	5	14																		
Ժենյա Մելիքսեթյան	14	28	36	49																	
Լիլիթ Խաչատրյան	55	154	175																		
Լիլիթ Սադոյան	2																				
Ռոբերտ Մաքեյան	35	35																			
Ռոման Սմբատյան	22	49																			
Սաթենիկ Անդրեասյան	8																				
Վահագն Թորոսյան	14	14	30	35	42	77	77	84	84												
Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ՄԱՐԱԼԻԿԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Անի Աթանեսյան	12																				
Արամայիս Ասատրյան	11	35	37	39	39																
Հայկ Իսրայելյան	13	14	31	33	38	64															
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ԳՈՐԻՍԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Արտուր Հարությունյան	9	69	71	85	85	85	89														

Մուշեղ Արամյան	3	3	7	7	8	9	14	15	17	19	19	20	20	21	21	27	29	34	41		
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ՍԻՍԻԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Էմին Աբգարյան	12	16	22	30	34	34	35	44	48	49	49	49									
Հայկ Աղաքարյան	35																				
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Լիլիթ Սադոյան	20	20	21	21	26	28	29	29	30	30	30	30	30	30	31	33	33	33	33	34	35/ 36/ 37/ 37/ 37/ 37/ 40/ 41/ 47
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Աղասի Դարբինյան	124	141	146	147																	
Անի Հարությունյան	7	21	69	69	195																
Աննա Դիլբարյան	21	62																			
Արգիշտի Ղազարյան	259	267	267																		
Արթուր Ավագյան	19	20	70	126	226	273															
Արթուր Ծատուրյան	28	52	64	68	82	133	190	258	258	264	264										
Արմեն Ներսիսյան	8	20	215	223	229																
Գևորգ Սոսյան	163																				
Գրիգոր Առաքելյան	146	146	150	150																	

Դանիել Դանիելյան	14	21	42	64	147	181															
Ելենա Առաքելյան	49	104																			
Մերի Համբարձումյան	26	77	90	91																	
Միեր Պետրոսյան	5	13	14	46	189	225															
Ռոբերտ Մաքեյան	51	91	98	114	120	121															
Ռուզաննա Ազրոյան	16	71																			
Վարազդատ Միքաելյան	20	42	133																		
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՍԵՒԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Արկադիկ Մկրտչյան	35	41	44	50	56	77	80	98	101	105	106	113	114								
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Անի Չիլինգարյան	20	21	21	30	41	41	49	50	51	57	58	70	70	73	89	90	90	98	98	106	119/119/119/120
Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ԴԻԼԻՋԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Աշոտ Ջավախյան	19	15																			
Նանա Դալլաքյան	27	37	42	42	42	56	56														
Սարգիս Արմենակյան	35																				
Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ԻՋԵՎԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Արամ Մարտիրոսյան	10	11	21	21	22	23	28														
Նարեկ Բաղալյան	22	24	28	30	33																

Սամվել Մարդանյան	7	7	8	16	26	31	36	44	45	49	49	23	30	35	35						
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ԳԱՎԱՌԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Արշակ Հարությունյան	4	10	21	21	24																
Սյուզաննա Պողոսյան	14	14	42	63	63																
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ՄԱՐՏՈՒՆՈՒ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Գոհար Գրիգորյան	17	29																			
Ժենյա Նազարյան	7	19	20	21	33	39	41														
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ՍԵՒԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ																					
Դավիթ Սարգսյան	13	24	30	31	35	37	45	45													
Լիանա Ներսիյան	56	58																			
Սերոբ Մանուկյան	32	84	134	139	139	140	162	168													

Բացի այդ, դատական նիստերի նշանակման հետ կապված էական ազդեցություն ունի նաև դատավարության մասնակիցների վարքագիծը: Հարկ է նկատի ունենալ, որ պրակտիկայում դատավորները հաջորդող դատական նիստի ամսաթիվը համաձայնեցնում են գործով փաստաբանների, դատախազների և դատավարության այլ մասնակիցների հետ: Ըստ այդմ, մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ դատավարության մասնակիցները ծանրաբեռնվածության կամ անձնական պատճառներով խնդրել են դատական նիստը նշանակել դատավորի կողմից նախապես առաջարկված օրվանից ուշ:

Այսպես օրինակ, թիվ ԵԴ/1508/01/21 քրեական գործով 23.02.2023թ. կայացած դատական նիստի մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ հաջողող դատական նիստի օրը որոշելիս «հանրային պաշտպանի գրասենյակը և մյուս փաստաբանը չէին համաձայնվում առաջարկվող օրերի հետ՝ պնդելով որ գրասենյակը զբաղված ու ծանրաբեռնված է, իսկ դատավորը արձագանքել է՝ նշելով, որ դատարանը գերծանրաբեռնված է: Բացի այդ, Դատավորը դժգոհեց այն բանից, որ 1 տարի է ինչ այս գործը քննում է նա, մինչ այդ այլ դատավոր է եղել, 1 տարի անց նոր անցել են ապացույցների հետազոտմանը»: Դատավորը, որպես հաջորդ դատական նիստերի օրեր, առաջարկել է 17/04/23թ., 24/04/23թ. ժ 9/30 26/04/23 թ: Դատալեքս տեղեկատվական համակարգի ուսումնասիրությամբ պարզվեց, որ հաջորդ դատական նիստը նշանակվել է 17.05.2023թ., որը, սակայն, չի կայացել և հաջորդ դատական նիստը կայացել է 24.05.2023: Գործը ներկայումս էլ գտնվում է քննության փուլում:

Առաջարկություն

- **Ներդնել դատական նիստերի հետաձգման պատճառների հետազոտության գործիքակազմ՝ պարզելու համար դրանց հիմնավորվածությունը, նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Հետազոտման արդյունքների մասին պարբերաբար իրազեկել հանրությանը:**

Դատավորների հաճախակի փոփոխության ազդեցությունը դատաքննության ժամկետների վրա

Մեկ քրեական գործի քննությունը սկսվել է 6 տարի առաջ, քննել են 7 դատավորներ և գործի քննությունը դեռևս շարունակվում է

Մշտադիտարկում է իրականացվել թիվ ՍԴ/0066/01/18 քրեական գործով 22.03.2023թ կայացած նիստի: Դատալեքսի ուսումնասիրությամբ պարզվել է, որ գործը ստացվել է 19.06.2018, մակագրվել է Նապոլեոն Գրիշայի Օհանյանին: Վերջինիս նախագահությամբ կայացել է 9 դատական նիստ և 27-11-2018 կայացվել է արդարացման դատավճիռ: 04.09.2019 դատական ակտը բեկանվել է և ուղարկվել ստորադաս դատարան նոր քննության: 24.03.2020 մակագրվել է դատավոր Մանվել Շահվերդյանին: 26.08.2020թ. կրկին կազմի փոփոխություն է եղել՝ Գործուղման ժամկետի ավարտով պայմանավորված: 26.08.2020 մակագրվել է Հրաչյա Մեխակյանին: Վերջինիս գործուղման ժամկետը ավարտվել է 01.12.2020 և գործը վերամակագրվել է Բորիս Բախշիյանին: Վերջինիս լիազորությունները 07.03.2022թ. կասեցվել է և գործը վերամակագրվել է Լուսինե Սեփխանյանին: Վերջինիս գործուղման ժամկետն ավարտվել է 10.02.2023թ և գործը մակագրվել է Մուշեղ Արամյանին: 18.07.2023 տեղափոխվել է այլ դատարան և գործը մակագրվել է Վարսենիկ Մելքոնյանին: Գործը ներկայումս գտնվում է քննության փուլում:

Վարչական գործ, որը 10 տարի քննվելուց հետո փոխանցվեց քաղաքացիական դատարանին

Նշված գործով ՎԴ/0934/05/13 հայցադիմումը վարչական դատարանը վարույթ է ընդունել 19-02-2013: ՀՀ վարչական դատարանի 26.05.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.06.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի վճիռը մասով բեկանվել է, և այդ մասով գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ

ծավալով նոր քննության, Դատարանի 26.05.2020 թվականի վճիռը բողոքարկված ու չբեկանված մնացած մասով թողնվել է անփոփոխ: ՀՀ վարչական դատարանի 11.11.2022թ. որոշմամբ վարչական գործն ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատարանի 10.01.2023թ. որոշմամբ վարչական գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան: 02.11.2023թ, հայցը թողնվել է առանց քննության:

Իրավունքների ու պարտականությունների պարզաբանումը

Կանոն

Անհրաժեշտության դեպքում նախագահողը գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչներին բանավոր պարզաբանում է նրանց դատավարական իրավունքներն ու պարտականությունները[137]:

Վարչական դատարանը նախնական դատական նիստում՝ (...) անհրաժեշտության դեպքում կողմերին պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները, դատավարական գործողություններ կատարելու կամ չկատարելու հետևանքները[138].

Նախագահողն ամբաստանյալին բացատրում է ՀՀ քրեական դատավարությանվ օրենսգրքի 65 հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները:

Մշտադիտարկման արդյունքներ

Թվով 13 դատական նիստերի ժամանակ իրավունքներն ու պարտականությունները չեն պարզաբանվել:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Աջափնյակ-2 նստավայր 1 դատական նիստ (Դատավոր՝ Արշակ Պետրոսյան),
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոնի նստավայր 1 դատական նիստ (դատավոր՝ Կարեն Ֆարխոյան),
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան Շենգավիթ նստավայր 1 դատական նիստ (դատավոր՝ Աննա Դանիբեկյան),
- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գյումրու նստավայր 2 դատական նիստեր (դատավոր՝ Սաթենիկ Անդրեասյան),
- Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան Սիսիանի նստավայր 6 դատական նիստեր (դատավոր՝ Էմին Աբգարյան),

---

[137] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 148-րդ հոդված, 1-ին մաս

[138] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 89-րդ հոդված, 3-րդ մաս

- Վարչական դատարան Գյումրու նստավայր 1 դատական նիստ (դատավոր՝ Լիլիթ Սադոյան),
- Վարչական դատարան Երևանի նստավայր 1 դատական նիստ (դատավոր՝ Արթուր Ծատրյան):

Թվով 62 դատական նիստերի ժամանակ իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են, սակայն ոչ հասկանալի կերպով:

- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գավառի նստավայր- 2 դատական նիստեր (դատավոր Արշակ Հարությունյան),
- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Մարտունու նստավայր- 1 դատական նիստ (դատավոր Ժենյա Նազարյան),
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Աջափնյակ-2 նստավայր- 3 դատական նիստեր (դատավորներ Սարգիս Երիցյան, Տիգրան Գրիգորյան, Հայարփի Զարգարյան),
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Արաբկիր նստավայր - 6 դատական նիստեր (դատավորներ Ռուբեն Բունիաթյան, Էդուարդ Ամալյան, Արմենուհի Բաղիրյան, Սիմիզար Հովսեփյան, Սյուզաննա Ուլիխանյան),
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Էրեբունի նստավայր- 2 դատական նիստեր (դատավորներ՝ Դանիել Մխեյան, Գայանե Խաչատրյան),
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան Ավան նստավայր 1 դատական նիստ (դատավոր Հարություն Մանուկյան),
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան Շենգավիթ նստավայր 4 դատական նիստեր (դատավորներ, Վաչե մարգարյան, Աննա Դանիբեկյան, Արտուշ Գաբրիելյան, Դավիթ Բալայան),
- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Ալավերդու նստավայր 11 դատական նիստեր (դատավորներ Բակուր Գրիգորյան 7 անգամ, Սուրեն Բաղդասարյան(4)),
- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Սպիտակի նստավայր 1 դատական նիստ (դատավոր Աղասի Մկոյան),
- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Վանաձորի նստավայր 6 դատական նիստեր (դատավորներ Ելենա Առաքելյան-3, Լուսինե Ալավերդյան-2, Նանե Սահակյան 1),
- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գյումրու նստավայր 3 դատական նիստեր (դատավորներ Կիմա Արզումանյան, Ժենյա Մելիքսեթյան, Անի Մարտիրոսյան),
- Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան Գորիսի նստավայր 3 դատական նիստեր (դատավոր Մուշեղ Արամյան),
- Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան Սիսիանի նստավայր 10 դատական նիստեր (դատավոր Էմին Աբգարյան),
- Վարչական դատարան Երևանի նստավայր 8 դատական նիստեր (դատավորներ Անի Հարությունյան, Արգիշտի Ղազարյան 2, Արթուր Ավագյան 2, Դանիել Դանիելյան 2 , Վարազդատ Միքաելյան),

- Վարչական դատարան Վանաձորի նստավայր 1 դատական նիստ (դատավոր Անի Չիլինգարյան):

Դատական նիստի դահլիճի պայմանները

Դատական նիստի դահլիճի ջերմաստիճանը

Դահլիճում կառուցվածքային առանձնահատկությունների և տեխնիկական հնարավորությունների հաշվառմամբ տեղադրվում է օդորակիչ[139]:

Մշտադիտարկման արդյունքներ

Թվով 3 դատական նիստեր մշտադիտարկելիս մշտադիտարկողները նշել են, որ դատական նիստերի դահլիճում եղել է տոթ: Նված դատական նիստերը կայացել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթ, Կենտրոն, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայրերում:

Թվով 4 դատական նիստեր մշտադիտարկելիս մշտադիտարկողները նշել են, որ դատական նիստերի դահլիճում եղել է ցուրտ: Նշված դատական նիստերը կայացել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավանի նստավայրում:

Թվով 15 դատական նիստեր մշտադիտարկելիս մշտադիտարկողները նշել են, որ դատական նիստերի դահլիճում եղել է շոգ: Նշված դատական նիստերը կայացել են Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Վանաձորի, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գյումրու, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոնի, Վարչական դատարանի Գյումրու, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան Գորիսի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավանի, Վարչական դատարանի Երևանի նստավայրերում:

Դատական նիստերի դահլիճի լուսավորությունը

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված դատական նիստերից 28-ի ժամանակ մշտադիտարկողները նշել են ոչ բավարար լուսավորության մասին: Մնացած դեպքերում լուսավորությունը եղել է լավ և բավարար:

Անբավարար լուսավորությամբ դատական նիստերն անցկացվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի (3), Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու (14), Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական

[139] ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», կետ 26

դատարանի Ավանի (6), Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթի (5) նստավայրերում:

Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումը և դատարանի տեխնիկական հագեցվածությունը

Դատավարության մասնակիցների մասնակցությունը դատական նիստին հեռահաղորդակցության միջոցների գործադրմամբ

Կանոն

1. Դատավարության մասնակցի պատճառաբանված միջնորդությամբ դատարանը թույլատրում է նրան կամ դատավարության այլ մասնակցին մասնակցել դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, եթե դատական նիստերի դահլիճում տեղադրված է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ: Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստին չի կարող մասնակցել թարգմանիչը, ինչպես նաև չի կարող իրականացվել առերես հարցաքննություն:

2. Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստին մասնակցելու վերաբերյալ գործին մասնակցող անձի միջնորդությունը կարող է ներկայացվել դատարան նիստն սկսելուց առնվազն յոթ օր առաջ: Դատական նիստի ընթացքում կարող է ներկայացվել հաջորդ դատական նիստի վերաբերյալ միջնորդություն:

3. Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստին մասնակցելու վերաբերյալ միջնորդությունը քննարկվում է եռօրյա ժամկետում՝ առանց դատական նիստ հրավիրելու: Դատական նիստի ընթացքում ներկայացված միջնորդությունը քննարկվում է տվյալ դատական նիստում:

4. Միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է որոշում:

5. Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստին մասնակցելը թույլատրելու վերաբերյալ որոշումը ոչ ուշ, քան հաջորդ օրն ուղարկվում է համապատասխան դատարան:

6. Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստին մասնակցելը թույլատրելու վերաբերյալ որոշումը կատարվում է հանձնարարությունն ստացած դատարանի աշխատակազմի միջոցով, որն ապահովում է գործը քննող դատարանի հետ տեսաձայնային հաղորդակցման հնարավորությունը, ստուգում է դատավարության մասնակցի ներկայությունը և ինքնությունը, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատավարության մասնակցից ստորագրություն է վերցնում սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն կամ մասնագիտական բացատրություն տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու մասին: Դատավարության մասնակցի նախազգուշացման վերաբերյալ փաստաթուղթը հնգօրյա ժամկետում ուղարկվում է գործը քննող դատարան և կցվում է դատական նիստի արձանագրությանը[140]:

---

[140] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 145-րդ հոդված

Օրենքով նախատեսված բանավոր քննության դեպքում դատարանը կարող է թույլատրել դիմողին մասնակցելու դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, եթե դատական նիստերի դահլիճում տեղադրված է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ: Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ չի կարող իրականացվել առերես հարցաքննություն[141]:

Պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով):

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, «Դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով», 83-րդ հոդված, 1-ին մաս

1. Այն բացառիկ դեպքերում, երբ առողջական վիճակի կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու պատճառով հարցաքննության ենթակա անձի ներկայությունը դատարանում անհնար է կամ կարող է սպառնալ հարցաքննվողի անվտանգությանը կամ վտանգել ցուցմունքի արժանահավատությունը, կամ երբ առկա է անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտություն, դատարանը, կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, իրավասու է հարցաքննությունը կատարելու տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով):

2. Տեսակապի միջոցով հարցաքննության ընթացքում պետք է երաշխավորվի, որ դատական վարույթի մասնակիցները և այլ վայրում գտնվող ու ցուցմունք տվող անձը հստակորեն տեսնեն և լսեն միմյանց:

3. Տեսակապի միջոցով հարցաքննությունը հարցաքննվողի գտնվելու վայրում ապահովում է դատարանի որոշած անձը:

4. Տեսակապի միջոցով հարցաքննությունն սկսելուց առաջ նախագահողը պետք է հայտարարի՝

1) հարցաքննության կատարման օրը և ժամը, ինչպես նաև տեղեկություններ, թե որ վարույթի շրջանակներում է կատարվում տվյալ հարցաքննությունը.

2) հարցաքննվողի գտնվելու վայրը, եթե այդ տեղեկության հրապարակումը չի կարող սպառնալ հարցաքննվողի անվտանգությանը.

3) հարցաքննվողի անունը, ազգանունը, հայրանունը և կարգավիճակը.

4) հարցաքննության կատարումն ապահովող իրավասու անձի անունը և ազգանունը.

5) հարցաքննության ժամանակ կիրառվող տեխնիկական միջոցները:

5. Հատուկ կարգով հարցաքննությունն ավարտելուց հետո նախագահողը կողմերին հարցնում է, թե արդյոք ունեն առարկություններ հարցաքննության կատարման կարգի կամ ընթացքի վերաբերյալ:

---

[141] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, «Կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման գործերի քննության կարգը և ժամկետները», 222.15-րդ հոդված, 3-րդ մաս

6. Տեսակապի միջոցով կատարված հարցաքննության տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչը կցվում է դատական նիստի արձանագրությանը[142]:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված դատական նիստերից միայն մեկի ժամանակ են կիրառվել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներ: Մասնավորապես, թիվ ԵԴ/1954/01/21 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավանի նստավայրում, նախագահությամբ դատավոր Մանվել Շահվերդյանի, ԱՄՆ-ում բնակվող տուժողի մասնակցությունը դատական նիստին կայացել է տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների գործադրմամբ:

Դատարանի տեխնիկական հագեցվածությունը

Կանոն

Դահլիճում առկա է առանձին դատավարական գործողություններ իրականացնելու համար նախատեսված մոնիտոր՝ տեսանելի տեղում:

Անհրաժեշտությունից ելնելով դահլիճում կարող է տեղադրվել (...) ժամանակակից տեխնիկական և այլ միջոցներ[143]:

ցացույցների հետազոտության նպատակով տեսաձայնային միջոցների միացնելը խնդիր առաջացրեց և բավականին ջանք ու ժամանակ պահանջեց: Դատախազը միջնորդեց "տեխնիկական" ընդմիջում հայտարարել: Դատավորը նշեց, որ դատարանը չունի տեսաձայնագրությունների հետազոտման նպատակով առանձին համակարգիչ: Ի վերջո հետազոտումն իրականացվել քարտուղարի համակարգչով: Հանրության (տվյալ դեպքում՝ ինձ) համար լսելու հնարավորություն կար, սակայն տեսնելու՝ ոչ, քանի որ դիտումն ւնացվում էր նիստերի քարտուղարի համակարգչի միջոցով»: Մշտադիտարկողի մեկնաբանությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթի նստավայրում տեղի ունեցած դատական նիստից:

Ապացույցների ուսումնասիրության ընթացքում տեսանյութը դիտելու համար ընդմիջում հայտարարվեց տեխնիկական մասը ապահովելու համար: Տեխնիկական մասն ապահովում էին շատ երկար՝տպավորություն էր , թե առաջին անգամ էին կազմակերպում տեսանյութի դիտում(նոութբուք , բարձրախոս , դիսկավոդ բերելը տևեց 15 ր»: Մշտադիտարկողի մեկնաբանությունը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վանաձորի նստավայրում տեղի ունեցած դատական նիստից:

---

[142] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, «Հարցաքննության հատուկ կարգը», 327-րդ հոդված

[143] ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», կետ 20 և 23

Մշտադիտարկողները ներկա են գտնվել այնպիսի դատական նիստերի, որոնցում իրականացվել է տեսաձայնային կամ ձայնային գրառումներ պարունակող ապացույցների հետազոտություն: Նման դատական նիստերի քանակը 7-ն է: Նշված դատական նիստերում նման ապացույցների հետազոտումը 5 դատական նիստերում իրականացվել է դատական նիստերի քարտուղարի համակարգչով, 1 դեպքում՝ պաշտպանի և միայն 1 դեպքում դատարանում հատուկ այդ նպատակով նախատեսված և տեղադրված մոնիտորի միջոցով:

5 դատական նիստերում, որոնցում ապացույցների հետազոտման նպատակով օգտագործվել է նիստերի քարտուղարի համակարգիչը, նշված տեսաձայնագրությունը դիտելու հնարավորություն դատավարության մասնակից չհանդիսացող հանրության ներկայացուցիչները չեն ունեցել:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, տեսաձայնագրություն հանդիսացող ապացույցների հետազոտման նպատակով նախատեսված մոնիտորները դատարաններում կամ բացակայել են կամ չեն ծառայել սահմանված նպատակին՝ ոչ սարքին լինելու կամ տեխնիկական այլ պատճառներով: Բացի այդ, նման դեպքերում հանրության մասնակցությունը դատական նիստերին լրիվ ծավալով չի ապահովվել՝ դիտելիության և լսելիության բացակայության պատճառով:

Դռնփակ դատական նիստեր

Կանոն

Դատական նիստերը դռնբաց են:

Դատական վարույթը կամ դրա մի մասն օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով[144]:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման ընթացքում դատարանը դռնփակության է անցել թվով 3 դատական նիստերով: Ընդ որում, 3 դեպքերում էլ դռնփակությունը վերաբերել է ոչ թե ամբողջ գործի քննությանը, այլ դատական նիստին: 2 գործով դռնփակ անցկացնելու միջնորդություն էին ներկայացրել կողմերը, իսկ 1 գործով նման որոշում է կայացրել Դատարանը իր նախաձեռնությամբ:

[144] «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, 11-րդ հոդված, 1-ին և 2-րդ մասեր:

Արձանագրվել է նաև դեպք, երբ մշտադիտարկողը մշտադիտարկել է այնպիսի դատական գործով անցկացվող դատական նիստ, որը ԴատաԼեքս համակարգում ներկայացված է որպես դռնփակությամբ քննվող դատական գործ:

Դատական նիստի ձայնագրումը

Կանոն

Գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկաներն առանց դատարանի թույլտվության իրավունք ունեն կատարելու գրառումներ, սղագրություն և ձայնագրություն[145]:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ Դատարաններում ոչ բոլոր դատավորներն ու վերջիններիս կազմերն են տիրապետում հանրության ներկայացուցիչների կողմից դատական նիստերի ձայնագրման, գրառումներ կատարելու կարգին, այն է՝ նման դեպքերում թույլտվության անհրաժեշտության բացակայությանը:

«Դատական նիստի ավարտին, երբ դատավորն արդեն հեռացել էր դահլիճից, պատասխանող կողմի ներկայացուցիչը մոտեցավ քարտուղարին ու հայտարարեց, որ ես, իրավունք չունենալով, ձայնագրել եմ դատական նիստը: Քարտուղարը զանգահարեց դատավորին, վերջինս էլ ասաց, որ ինքը տեղյակ չի եղել, թույլտվություն չեմ վերցրել նախապես և պետք է ջնջեմ: Պատասխանողի ներկայացուցիչը նշում էր, որ որ սա ավելացնելու է գործի մեջ: Քարտուղարը պարտադրեց ջնջել, ջնջեցի ձայնագրությունն իրենց ներկայությամբ, սակայն նշեցին, որ դա միակ տեղը չի, գուցե այլ տեղ էլ պահպանված լինի, քարտուղարը վերցրեց հեռախոսս ու ինքը սկսեց ստուգել արդյո՞ք որևէ տեղ ևս կա ձայնագրությունը, թե ոչ: Պատասխանողի ներկայացուցչի կողմից հնչեցին արտահայտություններ «Հուսամ ոչ մեկին չեք ուղարկել, որովհետև եթե հանկարծ մինչև գործի ավարտը հրապարկվի, վատ կլինի ձեր կազմակերպության համար: Եթե խնդրեիք նախապես, մենք դեմ չէինք լինի» (Մշտադիտարկողի մեկնաբանությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ 2 նստավայրում կայացած նիստից)

Դատավորի արձագանքը մշտադիտարկողի ներկայությանը

Մշտադիտարկման արդյունքում արձանագրված պատասխաններ

Դատարան	Դատավորի արձագանքը
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գավառի նստավայր	Հարցրել է իմ գրանցումների մասին, պատասխանել եմ, որ չեմ կարող մանրամասներ ներկայացնել: Դատավորը խնդրեց իմ գրառումներում նշեմ, որ տանիքից ջուր է կաթում և պատը թրջվել, բորբոսնել է, իսկ նիստերի դահլիճը կարծես սպորտային դահլիճ լինի:
	Խորհուրդ տվեց հաջորդ անգամ գալ ավելի լայնածավալ նիստի:

[145] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 144-րդ հոդված, 8-րդ մաս:

	Խնդրել է արձանագրել նիստերի դահլիճի ոչ բարվոք վիճակը, հարցրել է իմ գրառումների մասին:
	Դատավորի օգնականը նիստի սկզբին զեկուցեց իմ ներկայության մասին, դատավորը հարցրեց իմ ինքնության և գտնվելու նպատակի մասին, հարցրեց արդյոք տեսանկարահանելու կամ ձայնագրելու եմ, այնուհետև կողմերից հարցրեց, թե արդյոք համաձայն են իմ ներկայությունը, թե նիստը անցկացնել դռնփակ:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Աջափնյակ-2 նստավայր	Իմանալով մշտադիտարկման նպատակի մասին, պատճառաբանեց, որ կարող է տրամադրել առաջարկներ, որոնք կօգնեն դատական բարեփոխումներին
	Դատական նիստի ավարտից անմիջապես հետո հարցրեց, արդյոք ինձ պարզ են իմ իրավունքները, թե ոչ:
	Տեղեկացրի, որ մշտադիտարկող եմ, ներկայացրեցի կազմակերպությունը: Դատավորը պահանջեց անձը հաստատող փաստաթուղթ, այն պատճենահանվեց և վերադարձվեց ինձ:
	Խնդրեց ներկայանալ, հետո խնդրեց ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, որը նիստի ավարտին պատճենելուց հետո ինձ վերադարձրեց քարտուղարը
	Դատավորը խնդրեց ներկայանալ, ասաց, որ տեսաձայնագրել չի կարելի, բայց կարելի է ձայնագրել:
	Դրական արտահայտվեց մշտադիտարկողի ներկայությանը նիստին, նշեց, որ համակարգում շատ բացեր կան և մշտադիտարկումները միգուցե օգնեն կարգավորելու որոշ հարցեր: Առաջարկեց նաև օգնել, եթե հարցեր ունենամ: Հարցրեց, ինչ եմ մշտադիտարկում և խնդրեց, որ նշեմ վերելակների խափանման մասին, քանի որ քաղաքացիները չեն կարողանում բարձրանալ դատարան
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Արաբկիր նստավայր	Դատավորը բարյացակամ չէր, կարծես չէր ցանկանում, որ ներկա գտնվեմ նիստին: Տարբեր հարցեր տվեց ինքնությանս և այցիս նպատակի մասին: Հարցրեց արդյոք դեպարտամենտը տեղյակ է ծրագրի մասին, թե ոչ, պատասխանեցի, որ բոլոր հարցերով կազմակերպությունը զբաղվել է: Նաև հարցրեց արդյոք այս ծրագիրը չի վերաբերում միայն քրեական գործերին:
	Դատավորը հետաքրքրվեց, թե որ կազմակերպությունն եմ ներկայացնում: Ասաց, որ առաջին անգամն է ականատես լինում քաղ. գործերով մշտադիտարկման դեպքի:
	Հորդորեց հարցեր տալ, եթե ինչ-որ բան անհասկանալի է, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ իրադրությունն այլ կերպ մեկնաբանվի: Հարցրեց նիստի մասով ամեն ինչ հասկանալի էր, պարզ էր հետաձգման հիմքը, թե ոչ:
	Հորդորեց, որ դիտարկման քարտումս անպայման նշեմ դատավորի ծանրաբեռնվածության մասին, հարցրեց արդյոք տեսել եմ, թե քանի նիստ կա այսօր նշանակված:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան Էրեբունի նստավայր	Դատավորը մի փոքր լարվել էր, երբ իմացավ որ մշտադիտարկող կա դահլիճում: Դատական նիստի մեկնարկին՝ դատավորը կարգադրիչից հարցրեց իմ ինքնության և ներկա գտնվելու նպատակի մասին: Կարգադրիչը տեղեկացրեց, որ մշտադիտարկող եմ և դիտարկում եմ դատական նիստը: Նիստի ավարտից հետո դատավորը հետաքրքրվեց, թե ինչ մոնիթորինգ է, ո՞վ է իրականացնում, ի՞նչ նպատակով է իրականացվում: Ես հակիրճ ներկայացրեցի մշտադիտարկման մասին և իրականացնող կազմակերպության մասին: Դատավորն առաջարկեց, եթե հարցեր կան կարող է հիմա պատասխանել, օգնել մշտադիտարկմանը, որին ի պատասխան ես շնորհակալություն հայտնեցի և նշեցի ,որ դիտարկումը իրականացվում է միայն նիստի ընթացքում: Դատավորը առաջրկեց, որ սպասեմ մոտ 30-40 րոպե և հաջորդ դատական նիստը դիտարկեմ, քանի որ այս նիստին կողմերը չեն ներկայացել և այն չկայացավ: Քանի որ այս նիստը նույն օրվա իմ 3-րդ մշտադիտարկումն էր, ես չէի կարող ևս 1 նիստի մասնակցել, ինչպես նաև չցանկացա դատավորի կողմից ընտրած/առաջարկաց նիստի մասնակցել:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան Ավան նստավայր	Նիստի արձանագրությունը միացնելուց հետո քարտուղարը դատարանին զեկուցեց, որ նիստին ներկա է ՀՔԱՎ մշտադիտարկող, դատարանը ասաց շատ լավ:
	Նիստի սկզբում քարտուղարը ասաց նաև, որ նիստին ներկա է մշտադիտարկող Հելսինկյան կազմակերպությունից, սակայն դատավորն ասաց, որ մշտադիտարկողը մասնակից չէ և յուրաքանչյուր անձ կարող է ներկա գտնվել դատական նիստին:
	Շատ դրական Հարցնում էր, արդյոք հասցնում եմ գրի առնել, ինչպես նաև բացատրեց նիստի հաջորդական քայլերը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան Կենտրոն նստավայր	Քննության ընթացքում չէր հետաքրքրվել այցիս նպատակով, սակայն վերջում երբ խնդրեցի տրամադրել դատական գործի համարը, հարցրեց, ով եմ ու ինչու եմ հարցնում: Սկզբում հրաժարվեց տրամադրել, սակայն պնդեցի, որ դատալեքսից էլ կարող եմ գտնել այդ տեղեկատվությունը և բացի այդ գործը քննվել է դռնբաց, ուստի ևս մեկ անգամ հորդորեցի տրամադրել, թելադրեց գործի համարը, վրդովված ասաց հիմա այս նիստի դիտարկումը Ձեզ ինչ տվեց, որ 95-րդ անգամ նիստը հետաձգվումա ու 7 ամիսա արդյունքի չենք հասնում:
Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Արթիկի նստավայր	Նորմալ, նույնիսկ շատ լավ, նշեց որ բարեփոխումները ցանկալի են, բայց բարդ է անգամ այդ մասին խոսելը:
Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գյումրու նստավայր	ատավորն ասաց, որ անիմաստ է դատական նիստեր լսելով խնդիրներ պարզել: Հայտնեց նաև, որ գործերի երկար քննվելու պատճառը նաև դատավորների հաճախ տեղափոխումն է:
ունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան Սիսիանի նստավայր	Դատավորը ողջունեց խնդիրների վերհանման նպատակով մշտադիտարկում իրականացնելը, և ինքը նշեց մի շարք խնդիրներ, որ առկա են տվյալ դատարանում՝ հին գույք և այլն:
	Դատավորը ողջունեց մշտադիտարկման իրականացումը և հույս հայտնեց, որ դրա արդյունքում դրական փոփոխություններ կլինեն:
Վարչական դատարան Գյումրու նստավայր	Հարցրեց, թե ով եմ, որ կազմակերպությունն եմ ներկայացնում, ինչ մեթոդով եմ մշտադիտարկումն անում, որից հետո պահանջեց անձը հաստատող փաստաթուղթ, այն նայելուց հետո, իր մոտ նշեց անուն ազգանունս և վերադարձրեց փաստաթուղթս: Դատական նիստի ընթացքում այլևս որևէ ուշադրություն չդարձրեց
Վարչական դատարան Երեւանի նստավայր	Դատավորին քարտուղարը շշուկով հայտնեց, որ դիտորդ է ներկա, երբեմն հայացքով ուշադիր նայում էր ինձ, հատկապես, երբ գրառումներ էի կատարում:
	Նկատվեց ոգևորություն դատավորի կողմից: Վերջում նույնիսկ կարծիք հարցրեց, թե ինչպես է անցկացրել նիստը, որին չարձագանքեցի:
Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Իջեւանի նստավայր	Դատավորը պահանջեց անձը հաստատող փաստաթուղթս, քարտուղարին ասաց, որ պատճենահանի և այն կցեց գործին:

Դատական նիստերի դահլիճը

Կանոն

Դահլիճն ունի հերթական համար, որի համարակալումն սկսվում է թիվ 1-ից՝ աճողական կարգով: Դահլիճի համարը և մեծատառերով գրված «ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃ» բառերը նշվում են 15 սմ * 30 սմ պլաստիկե ցուցանակի վրա: Դահլիճի համարը և «ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃ» բառերը նշված են 100 տառաչափով և «Գրապալատ» տառատեսակով: Ցուցանակն ամրացվում է Դահլիճի արտաքին մուտքի-ելքի դռան աջ կամ ձախ կողքի պատին՝ տեսանելի, դռան վերին նիշի բարձրությամբ:

ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», 2-րդ կետ.

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված թվով 600 դատական նիստից դատական նիստերի դահլիճի նույնականացման (համարակալման) խնդիր արձանագրվել է թվով 4 դատական նիստեր մշտադիտարկելիս: Չհամարակալված դահլիճները գտնվել են Վերաքննիչ վարչական և Վերաքննիչ քրեական դատարաններում

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ մշտադիտարկված դատարաններում դատական նիստերի դահլիճները մեծամասամբ համարակալված են, սակայն Վերաքննիչ դատարաններում առկա են դատական նիստերի չհամարակալված դահլիճներ:

Նիստերի դահլիճ վերաքննիչ վարչական դատարանում

Դատարաններում այցելուների համար նախատեսված նստարանների առկայությունը.

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ Վերաքննիչ քրեական դատարանում այցելուների համար նախատեսված նստարանները բացակայել են, նստարան տեղադրված է միայն անցակետի մուտքի մոտ:



Վերաքննիչ քրեական դատարան

Վերաքննիչ քաղաքացիական դատարան

Վերաքննիչ վարչական դատարան

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ վերաքննիչ քրեական դատարանի և վերաքննիչ վարչական դատարանի միջանցքներում բացակայել են նստարաններ դատական նիստի մեկնարկին սպասելու համար, բացի այդ, դատարանները ապահովված չեն սպասասրահներով:

Առաջարկ

Առաջարկում ենք վերաքննիչ դատարաններն ապահովել սպասասրահներով՝ դատական նիստի մեկնարկին սպասելու, ինչպես նաև գործի նյութերին ծանոթանալու համար:

Դահլիճի դատավարական հատվածում դատավարության կողմերի համար նախատեսված նստարանների առկայությունը

Կանոն

Դահլիճն առանձնացված է երկու հատվածի՝ դատավարական գործողություններ իրականացնող անձանց համար նախատեսված հատվածի (դատավոր, դատական նիստերի քարտուղար, դատավարության մասնակիցներ) (այսուհետ՝ Դատավարական հատված) և դատական նիստին ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածի (այսուհետ՝ Այցելուների հատված):

ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», կետեր 3 և 4.

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված թվով 600 դատական նիստի ժամանակ դատավարության կողմերի համար նախատեսված բավարար քանակի նստարանների խնդիր արձանագրվել է 4 նիստի ընթացքում: Նշված խնդիրն արձանագրվել է վերաքննիչ վարչական դատարանում 1 անգամ, վերաքննիչ քաղաքացիական դատարանում 1 անգամ, վերաքննիչ քրեական դատարանում 2 անգամ:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դատավարության մասնակիցների համար նախատեսված նստարանների քանակի խնդիր արձանագրվել է հիմնականում վերաքննիչ քրեական դատարանում, ինչը պայմանավորված է եղել դատավարության մասնակիցների մեծ թվով, իսկ վերաքննիչ վարչական և վերաքննիչ քաղաքացիական դատարաններում արձանագրվել է, որ խնդիրը պայմանավորված է նիստերի դահլիճ մակերեսի փոքրությամբ:

Վերաքննիչ քրեական դատարան

Վերաքննիչ վարչական դատարան

Դատական նիստերի անցկացման կարգը

Կանոն

Դատական նիստերը դռնբաց են: Դատական վարույթը կամ դրա մի մասն օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ ՀՈԴՎԱԾ 11-ՐԴ, կետեր 1 և 2.

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկողներն արձանագրել են, որ Վերաքննիչ վարչական դատարանում գործում է հետևյալ կարգը. կարգադրիչը տեղեկանում է, թե ովքեր են սպասում նիստին, տեղեկացնում է

դատարանին և միայն դատարանի թույլտվությունն ստանալուց հետո են ներս թողնում նիստերի դահլիճ:

Կարգադրիչների մոտ մշտադիտարկողների համոզմամբ սահմանված է այն կարգը, որ մինչև դատավորներին չեն տեղեկացնում դիտորդի ներկայության մասին, ներս չեն թողնում դատական նիստերի դահլիճ:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ ոչ բոլոր դեպքերում են պահպանվում դատական նիստերի դռնբացության սկզբունքի ապահովումը և անխոչընդոտ մուտքը դատական նիստերի դահլիճ:

Առաջարկ

Սահմանել ընթացակարգ, որը հնարավորություն կտա այցելուներին անխոչընդոտ մուտք գործել դատական նիստերի դահլիճ:

Լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությունը դատական նիստերին

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման ամբողջ ընթացքում լրատվամիջոցների ներկայացուցիչներ ներկա են եղել ընդամենը 3 դատական նիստի ընթացքում, որից 3 էլ քրեական գործեր են եղել[146] (կեղծ անձնագրի օգտագործմամբ պետական սահմանի հատման փորձ, շահադիտական նպատակով ՀՀ քաղաքացիների և նրանց զավակների անօրինական միգրացիայի կազմակերպում ՀՀ դեպի Եվրոպա):

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ լրատվամիջոցների ներկայացուցիչները ներկա են գտնվում մեծամասամբ հանրային հնչեղություն ունեցող գործերով:

Առաջարկ

Սահմանել որոշակի ժամանակահատվածներ դատարանների գործունեությունը և դատական նիստերը լուսաբելու համար: Ցանկալի է լուսաբանելու նպատակով յուրաքանչյուր դատարանում լինեն դատարանի մամլո խոսնակներ:

Դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածների (այցելուների հատված) առանձնացվածությունը.

[146] ՍԴ/0081/01/22, ԵԴ/0900/01/20, ՍԴ/0081/01/22

Կանոն

Դահլիճում դատավարական հատվածն այցելուների հատվածից առանձնացված է դահլիճի կահավորանքին համապատասխան առնվազն 1 մետր բարձրությամբ փայտե կամ զրահապատ ապակե միջնորմով:

ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», կետ 5

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված դատարաններից՝ դահլիճներ, որոնք առանձնացված չեն Դատավարական հատվածն Այցելուների հատվածից արձանագրվել է 89 դեպք, որից 87-ը վերաքննիչ վարչական դատարանում, 2-ը վերաքննիչ քրեական դատարանում:

ՀՀ վերարաքննիչ վարչական դատարան

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածներն (այցելուների հատված) հիմնականում առանձնացված են միմյանցից փայտե պատնեշներով, սակայն վերաքննիչ վարչական և վերաքննիչ քրեական դատարաններում կան դահլիճներ, որոնք առանձնացված չեն:

Առաջարկ

Այն դահլիճներում, որտեղ դեռևս դատավարության մասնակիցների (դատավարական հատված) և դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածներն (այցելուների հատված) առանձնացված չեն՝ առանձնացնել:

Դատական նիստի ժամի մասին տեղեկացումը

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ը 2023 թվականի հուլիս ամսին իրականացրել է մշտադիտարկման գործիքների փորձարկում՝ վերաքննիչ քաղաքացիական, քրեական և վարչական դատարաններում:

Դիտարկման արդյունքում պարզվել է, որ առկա են խնդիրներ դատարան մուտք գործելու, գործերի ցուցակների և «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգը լրացված չլինելու հետ կապված:

«ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում չեն լրացվում կայացվող դատական նիստերի վերաբերյալ տվյալները՝ օրը, ժամը:

Դատարաններ մուտք գործելը և դռնբաց դատական նիստերի մասնակցելը անարգել է, սակայն մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում մատչելիությունն այս առումով սահմանափակ է: Դատարան մուտք գործելիս տրվում են լրացուցիչ հարցադրումներ դատական կարգադրիչների և կարգադրիչների պետի կողմից, մասնավորապես, ո՞ր կազմակերպությունից եք, ի՞նչ նպատակով է այցը, ինչու՞ չեք նախապես զգուշացրել, ի՞նչ մասնագիտություն ունենք և այլ նմանատիպ բովանդակությամբ հարցեր:

Դժվարություն է առաջացել նիստերի ցուցակների հասանելիության, մատչելիության հետ կապված: Դատարաններում բացակայում են օրվա նիստերի վերաբերյալ ժամանակացույցերը: Կարգադրիչները շատ դեպքերում չեն տիրապետում նիստերի ժամանակացույցին և մշտադիտարկում կատարելու համար պետք է եղել շրջել միջանցքներով և գտնել այն դահլիճը, որտեղ կայանալու է դատական նիստը:

19.07.2023 թվականին վերաքննիչ քաղաքացիական դատարանում դիտարկման արդյունքում պարզվել է, որ գրասենյակի աշխատակիցն է կազմում նիստերի վերաբերյալ ժամանակացույցը, ինչպես նաև, որ քաղաքացիական գործերով նիստերը շատ քիչ են լինում՝ շաբաթական մեկ կամ երկու նիստ:

21.07.2023 թվականին վերաքննիչ վարչական դատարանում դիտարկման ժամանակ, պարզ դարձավ, որ վերաքննիչ վարչական գործերով նիստերի ժամանակացուցը փակցվում է, սակայն այդ պահին փակցված չէ, քանի որ նիստեր չկան և առաջիկա նիստը լինելու է 2023թ. օգոստոսի 03-ին, դատավորների արձակուրդում լինելու պատճառով:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման ընթացքում մշտադիտարկողները դատական նիստերի ժամի մասին տեղեկացել են հիմնականում Դատալեքս տեղեկատվական համակարգի, դատական նիստերի կարգադրիչների, իսկ առավել քիչ՝ դատական նիստերի ցուցակների միջոցով:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ վերաքննիչ վարչական և վերաքննիչ քրեական դատարաններում բացակայել են դատական նիստերի վերաբերյալ ժամանակացույցը, ինչպես նաև արձանագրվել են, որ ԴատաԼեքս տեղեկատվական ծրագրում դատական նիստերի տեղի ու ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը ժամանակին չի լրացվում և ծրագիրը ժամանակին չի թարմացվում, որը բավականին մեծ դժվարություններ է առաջացնում, թե դատավարության մասնակիցների, թե մշտադիտարկողների համար:

Առաջարկ

Վերաքննիչ դատարաններում ապահովել նիստերի ժամանակացույցի հասանելիությունը:

Հետևողական լինել, որպեսզի ԴատաԼեքս տեղեկատվական համակարգում տեղեկատվությունը ժամանակին տեղադրվի և ծրագիրը ժամանակին թարմացվի:



Վերաքննիչ քրեական դատարան



Վերաքննիչ քաղաքացիական դատարան

Դատական նիստի բացման ժամը

Կանոն

Դատական նիստ սկսելու համար սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք 143-րդ հոդված.

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 102-րդ հոդված, 1-ին մաս.

Համապատասխան որոշմամբ սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հայտարարում է, թե որ վարույթն է ենթակա քննության, ինչպես նաև հայտնում է դատավորի և դատական նիստի քարտուղարի անունը և ազգանունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 266-րդ հոդված, 2-րդ մաս.

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստերից 318-ը բացվել են նշանակված ժամին:

Ամենանաշատ ուշացումները արձանագրվել է վերաքննիչ քրեական դատարանում՝ 181 դատական նիստ՝ մեղադրողի ուշացման, ամբաստանյալի ներկայության հետ կապված խնդիրների լուծման, պաշտպանի ուշացման հետ կապված, այլ դատական նիստով ծանրաբեռնվածության, կազմից դատավորներից մեկի ծանրաբեռնվածության պատճառներով:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ մեծամասամբ դատական նիստերը մեկնարկում են նշանակված ժամին: Դատական նիստի սահմանված

ժամկետում չսկսելու ամենաշատ դեպքեր արձանագրվել են վերաքննիչ քրեական դատարանում:

Դատարանի կազմի և քննության ենթակա գործի հրապարակումը նիստի մեկնարկին

Կանոն

Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և դրանց վերաբերյալ, ինչպես նաև սույն օրենսգրքի 384-րդ և 385-րդ հոդվածներով նախատեսված հարցերով որոշումները կայացնում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Առաջին ատյանի դատարանի՝ պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտերի, վճռման կարգադրությունների և միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննվում և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են միանձնյա, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտատերերի պահանջների հաստատման կապակցությամբ կայացված որոշումների դեմ ներկայացված բողոքների, որոնք վերաքննիչ դատարանը քննում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Առաջին ատյանի դատարանում գործի քննությունը, իսկ վերաքննիչ դատարանում բողոքի քննությունն անցկացվում են դատարանի անփոփոխ կազմով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու մասին որոշում, և գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկսվում է սկզբից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք 27-րդ հոդված, 3-րդ, 4-րդ,5-րդ կետեր.

Վարչական վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող վարչական դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքները քննվում են կոլեգիալ, իսկ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ բերված բողոքները՝ միանձնյա, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

ՀՀ վարչական դատատավարության օրենսգիրք 12-րդ հոդված, 2-րդ կետ

Վերաքննիչ դատարանում վերաքննությունը, ինչպես նաև բացառիկ վերանայումն իրականացվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, իսկ հատուկ վերանայումը՝ միանձնյա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք 31-րդ հոդված

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստից 453-ը քննվել է երեք դատավորի կազմով:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ հիմնականում բանավոր ընթացակարգով քննվում են առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտի դեմ բերված բողոքները:

Վերաքննիչ քրեական դատարանում ԵԴ/1835/01/21 քրեական գործի քննության ժամանակ նիստը կայացել է երկու դատավորի կազմով՝ չէր ներկայացել դատավոր Մարինե Մելքոնյանը, որի վերաբերյալ բացատրություն չի տրվել:

Կանոն

Դատական նիստ սկսելու համար սահմանված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հրապարակում է դատարանի կազմը և քննության ենթակա գործը:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստերից 538-ի դեպքում հրապարակվել է դատարանի կազմը և քննության ենթակա գործը:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել են, որ հիմնակում հայտարարվում է դատարանի կազմը և քննության ենթակա գործը: Դատարանի կազմի և քննության ենթակա գործի մասին չի հրապարակվել այն դատական գործերի քննության ժամանակ, որոնցով նիստը հանդիսացել է դատաքննության շարունակությունը:

Դատավարության մասնակիցներից մեկի չներկայանալու դեպքում դատական նիստի շարունակումը կամ հետաձգումը

Կանոն

Դատական նիստին դատավարության մասնակիցներից որևէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով գործին մասնակցող անձանց կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը նրա բացակայությամբ շարունակելու կամ դատական նիստը հետաձգելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 146-րդ հոդված, 3-րդ մաս

Դատական վարույթի որևէ մասնակցի չներկայանալու դեպքում դատարանը քննարկում է դատական նիստը շարունակելու հնարավորության հարցը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք 266-րդ հոդված.

Նախնական դատական նիստի մասին պատշաճ ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալու դեպքում նախնական դատական նիստը կարող է անցկացվել նրանց բացակայությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք՝ 89-րդ հոդված, մաս 2.

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 դատական նիստերից 421-ի ընթացքում չի ներկայացել դատավարության մասնակիցներից որևէ մեկը, որից 398-ի դեպքում դատարանը լսել է գործին մասնակցող անձանց կարծիքը:

Թվով 23 դատական նիստում չի լսվել գործին մասնակցող անձանց կարծիքը, որից 12-ը վերաքննիչ վարչական դատարանում, 11-ը վերաքննիչ քրեական դատարանում:

Վերաքննիչ վարչական դատարան	Դատավորների կազմը		
	Ռուստամ Մախմուդյան	Կարեն Ավետիսյան	Սամվել Հովակիմյան
	Կարեն Գևորգյան	Լիանա Հակոբյան	Էդվարդ Նահապետյան
	Հրաչ Այվազյան	Ալեքսանդրա Հարությունյան	Ռաֆիկ Խանդանյան
	Ռուստամ Մախմուդյան	Սամվել Հովակիմյան	Կարեն Ավետիսյան
	Արթուր Առաքելյան	Կարեն Գևորգյան	Կարեն Մաթևոսյան
	Աննա Մաթևոսյան	Արմեն Բեկթաշյան	Մարինե Մելքոնյան
	Հայկ Խաչատրյան	Կարեն Մաթևոսյան	Արթուր Պողոսյան
	Ռաֆիկ Խանդանյան	Հրաչ Այվազյան	Ալեքսանդրա Հարությունյան
	Կարեն Մաթևոսյան	Հայկ Խաչատրյան	Արթուր Պողոսյան
	Ալեքսանդրա Հարությունյան	Հրաչ Այվազյան	Ռաֆիկ Խանդանյան
	Ալեքսանդրա Հարությունյան	Հրաչ Այվազյան	Ռաֆիկ Խանդանյան
	Սամվել Հովակիմյան	Արթուր Առաքելյան	Կարեն Գևորգյան

Վերաքննիչ քրեական դատարան			
	Կարեն Մարդանյան	**Նարինե Հովակիմյան**	**Ռուբիկ Միհիթարյան**
	Ռոբերտ Պապոյան	Լուսինե Հովհաննիսյան	Սևակ Համբարձումյան
	Վազգեն Ռշտունի	Միհիթար Պապոյան	Արշակ Վարդանյան
	Միհիթար Պապոյան	Արշակ Վարդանյան	Վազգեն Ռշտունի
	Նարինե Հովակիմյան	Ռուբիկ Միհիթարյան	Կարեն Մարդանյան
	Ռուբիկ Միհիթարյան		
	Ռոբերտ Պապոյան		
	Արսեն Նիկողոսյան	Մնացական Հարությունյան	Արմեն Դանիելյան
	Նարինե Հովակիմյան	Կարեն Մարդանյան	Արմեն Բեկթաշյան
	Նարինե Հովակիմյան	Կարեն Մարդանյան	Արշակ Վարդանյան
	Լուսինե Ալավերդյան	Գրիգոր Հովհաննիսյան	Միհեր Արղամանյան

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ վարչական և վերաքննիչ քրեական դատարաններում արձանագրվել են դեպքեր, որ մասնակիցների կարծիքը հաշվի չի առնվել:

Վերաքննիչ բողոք բերելու իրավունքը

Կանոն

1. Առաջին ատյանի դատարանի վճիռների և սույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1 -ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) գործին մասնակցող անձինք,

2) դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

3) գործին մասնակից չդարձած անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ,

4) այն անձինք, որոնց նկատմամբ առաջին ատյանի դատարանի կողմից կիրառվել է դատական տուգանք՝ դատական տուգանք կիրառելու մասին որոշման մասով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անձինք վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

3. Վճարման կարգադրության դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի պարտապանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք 360-րդ հոդված.

1. Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև սույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները.

2) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված անձինք վերաքննիչ դատարանում օգտվում են երրորդ անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք 130-րդ հոդված.

1. Դատական վերանայման բողոք բերելու իրավունք ունեն՝

1) վարույթի մասնավոր մասնակիցը.

2) վարույթի մասնավոր մասնակից չհանդիսացող անձը, եթե դատական ակտն ուղղակիորեն վերաբերում է նրա իրավաչափ շահերին.

3) դատախազը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված անձանց կողմից կամ ի շահ նրանց դատական վերանայման բողոքը կարող է բերվել միայն դատական ակտի՝ այդ անձանց մասնավոր շահերին առնչվող մասով:

3. Դատախազը կարող է դատական վերանայման բողոք բերել միայն հանրային շահին առնչվող մասով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք 353-րդ հոդված.

Գծապատկեր 21.Վերաքննիչ բողոք ներկայացրած անձինք



Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ բողոքների մեծ մասը բերվել է դատախազի և պատասխանողի կողմից:

Բողոքարկվող դատական ակտ.

Կանոն

Վճիռների դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել վճռի հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում(վերաբերելի է քաղաքացիական, քրեական, վարչական գործերին):

1. Վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի հետևյալ որոշումները՝

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը.

3) հայցի ապահովման միջոց կիրառելու, հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու, հայցի ապահովումը վերացնելու մասին որոշումները.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը, վճռի վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու մասին որոշումները.

5) գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումները.

6) հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշումը.

7) գործի վարույթը կարճելու մասին որոշումը.

8) դատական տուգանք կիրառելու մասին որոշումը.

9) օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

10) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

11) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

12) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

13) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքով կայացված որոշումը.

14) դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

15) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք 361-րդ հոդված.

1. Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին.

3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.

5) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.

6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.

7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.

8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

9) սույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը.

10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

11) ինքնաբացարկի մասին դատական ակտերը:

2. Եթե վարչական դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հիմքով որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, ապա բաց թողնված

դատավարական ժամկետը վերականգնելու մասին որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը համարվում է վերացված, իսկ հայցադիմումի ընդունումը՝ մերժված:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք 131-րդ հոդված

1. Դատական բողոքարկման ենթակա են հետևյալ մինչդատական ակտերը.

1) ձերբակալումը.

2) ենթադրյալ հանցագործության մասին հաղորդումն արձանագրելուց կամ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելը.

3) քրեական վարույթը կարճելու մասին որոշումը.

4) քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու, քրեական հետապնդումը նորոգելու մասին որոշումը.

5) վարույթի մասնակից ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը.

6) խափանման միջոց կիրառելու մասին որոշումը.

7) վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու մասին որոշումը.

8) վարույթից հեռացնելու կամ վարույթին մասնակցելուց ազատելու մասին որոշումը.

9) գրավը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը.

10) հատուկ պաշտպանության միջոցի կիրառումը մերժելու կամ դադարեցնելու մասին որոշումը.

11) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի որոշումը՝ քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նոր հանգամանքի կամ նոր ի հայտ եկած հանգամանքի հիմքով վերացնելու մասին:

2. Դատական բողոքարկման ենթակա են նաև մինչդատական այն ակտերը, որոնց վիճարկումը դատաքննության ընթացքում անհնար է լինելու կամ բողոքարկողին ակնհայտորեն զրկելու է իր իրավաչափ շահերն արդյունավետ պաշտպանելու իրական հնարավորությունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք 299-րդ հոդված.

Մշտադիտարկման արդյունքներ

453 դատական նիստով արձանագրվել է, որ բողոքարկվել է վեճն ըստ էության լուծող դատական ակտ: Առաջին ատյանի դատական ակտն անփոփոխ է մնացել 238 գործով, որից 112-ը վարչական, 74-ը քաղաքացիական, 52-ը քրեական գործերով: Առաջին ատյանի դատական ակտը բեկանվել է 215 գործով, որից 99-ը քրեական, 73-ը քաղաքացիական, 43-ը վարչական գործերով:

Դատական նիստերի արձանագրումը՝ ձայնագրման համակարգի միջոցով

Կանոն

1. Հայաստանի Հանրապետության դատարաններում դատական նիստերի արձանագրումը կատարվում է SRS Femida ձայնագրման համակարգի միջոցով /այսուհետ՝ ձայնագրման համակարգ/: Սույն կարգով սահմանվում են ձայնային համակարգի շահագործման, տվյալների արխիվացման և համակարգի պահպանության մանրամասն ընթացակարգերը, դատական նիստի ձայնագրումն իրականացնելու, ծրագրային ապահովումը կիրառելու, տվյալները մուտքագրելու, պահպանելու և օգտագործելու կանոնները, ինչպես նաև այն հրահանգները, որոնց կատարումը պարտադիր է տվյալ դատական նիստի արձանագրումը վարող դատական նիստի քարտուղարի համար:

Դատական գործերի կոլեգիալ կազմով քննության դեպքում՝ դատավորների սեղանը հարմարեցված է մեկ համակարգչի օգտագործման համար, և սեղանին առկա է համակարգիչ, ինչպես նաև դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոսներ:

Դատավորների սեղանի դիմաց՝ կենտրոնական հատվածում, տեղադրված է ամբիոնը, որի վրա պետք է ամրացված լինի դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոս:

Դահլիճում դատավարության կողմերի համար նախատեսված գրասենյակային սեղանի (սեղանների) վրա տեղադրված են դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոսներ:

ԲԴԽ նախագահի թիվ 3-Լ որոշումը «Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին», կետ 10, 15 և 18

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ վերաքննիչ դատարաններում դատական նիստերը արձանագրվում են ձայնագրման համակարգի միջոցով:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ դատարանները ապահովված են համակարգչային ձայնագրման համակարգով:

Դատավորի, դատավարության մասնակիցների սեղաններին և ամբիոնի վրա դրված բարձրախոսների սարքինությունը.

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստերից միայն 100 նիստերի ընթացքում են առկա եղել բարձրախոսներ՝ դահլիճում ձայնը լսելի դարձնելու համար: Մյուս բոլոր դեպքերում բարձրախոսները բացակայել են: Ընդ որում, նշված 100 նիստերից 7 նիստը կայացել է վերաքննիչ վարչական դատարանում, 2 նիստը՝ վերաքննիչ քաղաքացիական, իսկ 91 նիստը՝ վերաքննիչ քրեական դատարանում:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ վարչական, քաղաքացիական և քրեական դատարանները ընդհանուր առմամբ ապահովված չեն բարձրախոսներով:

Առաջարկ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Վերաքննիչ դատարանների դատական նիստերի բոլոր դահլիճներն ապահովվել բարձրախոսներով՝ դատավարության մասնակիցների և դատավորի ձայնը լսելի դարձնելու համար:



Վերաքննիչ քրեական դատարան

Դատական նիստի համակարգչային ձայնագրության անընդհատությունը.

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստերից 3 նիստի ընթացքում համակարգչային ձայնագրությունը դադարեցվել է: Ձայնագրումը գլխավորապես դադարեցվել է տեխնիկական պատճառներով: Համակարգչային ձայնագրումը դադարեցվել է հետևյալ գործերով և դատավորների կազմով:

Վերաքննիչ վարչական դատարան Գործ՝ ՎԴ/5221/05/21	**Էդվարդ Նահապետյան Ռաֆիկ Խանդանյան Ալեքսանդրա Հարությունյան**	**Դատական նիստը սկսվելուց րոպեներ առաջ քարտուղարը հայտարարեց, որ ձայնագրումը չի իրականացվել, դատարանը դադարացրեց դատական նիստը, մինչև որ տեխնիկական խնդիրը լուծվեց, հետո 12:20 նորից սկսվեց դատական նիստը սկզբից:**

Վերաքննիչ քաղաքացիական դատարան **Գործ՝ ԵԴ/32450/02/22**	Լևոն Գրիգորյան Մարգարիտա Հարթենյան Սերգեյ Սահակյան	Հոսանքազրկման պատճառով՝ 11.54-ից 4 րոպե տևողությամբ: Դատարանը հայտարարեց ընդմիջում:
Վերաքննիչ քրեական դատարան **Գործ՝ ԵԴ1/0352/01/23**	Գրիգոր Հովհաննիսյան Լուսինե Ալավերդյան Միեր Արղամանյան	Նիստերի քարտուղարն անմիջապես տեղեկացրեց, որ ձայնագրումը խափանվել է 11.44-ից: Այն կրկին վերականգնվեց 2 րոպեում, ժամը 11.46-ին:

Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումը և դատարանի տեխնիկական հագեցվածությունը

Կանոն

Դատավարության մասնակցի պատճառաբանված միջնորդությամբ դատարանը թույլատրում է նրան կամ դատավարության այլ մասնակցին մասնակցել դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, եթե դատական նիստերի դահլիճում տեղադրված է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ (Տե՛ս առաջին ատյանը):

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստերից չի արձանագրվել ոչ մի դեպք, երբ դատական նիստի ընթանքում կիրառվել է տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներ:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ դատարաններում մշտադիտարկման ժամանակահատվածում չեն կիրառվել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներ: Ինչպես նաև արձանագրվել է 5 դեպք, որտեղ նշվել է, որ դահլիճը ապահովված չէ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներով, որից՝ 1 դեպք վերաքննիչ քրեական դատարանում, 4 դեպք վերաքննիչ վարչական դատարանում:

Առաջարկ

Վերաքննիչ դատարանները ապահովվել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներով:

Դատական նիստերի դահլիճի պայմանները

Մշտադիտարկման արդյունքներ

Վերաքննիչ քրեական դատարան	
Տոթ էր	4 նիստ

Շոգ էր	5 նիստ
Երկար նստելու դեպքում դահլիճում սառն էր	1նիստ
Շատ շոգ էր, ընթացքում պատուհանը բացեցին, նոր մի փոքր հովացավ	1
Վերաքննիչ վարչական դատարան	
Շոգ էր	5 նիստ
Ցուրտ էր	2 նիստ
Այնքան շոգ էր, որ պատուհանը բացել էին	1 նիստ

Մնացած դեպքերում նշվել է, որ դատական նիստերի դահլիճում հնարավոր է ներկա գտնվել նիստի ողջ ընթացքում:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ դատարաններում հիմնականում հնարավոր է դատական նիստերի դահլիճում ներկա գտնվել նիստի ողջ ընթացքում:

Առաջարկ

Վերաքննիչ դատարանների դահլիճներում տեղադրել օդափոխման համակարգեր:

Դատավորի և դատավարության մասնակիցների խոսքի լսելիությունը

Մշտադիտարկման արդյունքներ

Արձանագրվել է վատ ակուստիկա 2 դեպքով վերաքննիչ քրեական և վարչական դատարաններում: Խոսում են ցածր 26 դեպքով, որից՝ վերաքննիչ վարչական դատարանում 11 նիստով, վերաքննիչ քրեական դատարանում 15 նիստով:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ դատարանների ոչ բոլոր դահլիճներում է դատավորների ձայնը լսելը:

Առաջարկ

Վերաքննիչ դատարաններին ապահովվել բարձրախոսներով՝ ձայնը լսելի դարձնելու համար:

Իրավունքների ու պարտականությունների պարզաբանում

Կանոն

Դատարանը գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձանց պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները (վերաբերելի է քաղաքացիական, քրեական, վարչական դատարաններին):

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 դատական նիստից 363-ի դեպքում արձանագրվել է, որ դատավարության մասնակից անձանց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են պարզ և հասկանալի լեզվով, որից՝ վերաքննիչ վարչական դատարանում՝ 143, վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 16, վերաքննիչ քրեական դատարանում՝ 204 դեպքերում: Մյուս դեպքերում իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են պարզ և հասկանալի, իսկ 53 դատական նիստերին իրավունքները և պարտականությունները չեն պարզաբանվել, որը, սակայն, պայմանավորված է եղել կողմերի բացակայությամբ և/կամ ներկայացուցիչ փաստաբանների ներկայությամբ:

Թվով 3 նիստերի ընթացքում իրավունքները և պարտականությունները չեն պարզաբանվել պարզ և հասկանալի: Նշված նիստերը կայացվել են թիվ ԿԴ/0033/01/20, ԳԴ1/0026/01/22, ԵԴ1/0033/01/23 քրեական գործերի շրջանակներում:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ դատարաններում մշտաիտարկված 600 նիստերից 366 դատական նիստերի ընթացքում եղել է իրավունքները և պարտականությունները պարզաբանելու անհրաժեշտություն, ըստ այդմ, 366 դատական նիստերի դեպքում Դատարանն ունեցել է պարտականություն պարզաբանել կողմերի իրավունքներն ու պարտականությունները պարզ և հասկանալի լեզվով: Մշտադիտարկման արդյունքներով՝ Վերաքննիչ քրեական դատարանում կայացված 3 դատական նիստերի ընթացքում իրավունքներն ու պարտականնությունները չեն պարզաբանվել կամ պարզաբանվել են ոչ պարզ ու հասկանալի: Թեև նշված դեպքերը ընդհանուր մշտադիտարկված նիստերի փոքր տոկոսն են կազմում, այնուամենայնիվ, իրավունքների ու պարտականությունների չպարզաբանման կամ ոչ պարզ ու հասկանալի պարզաբանման յուրաքանչյուր դեպքում անընդունելի է:

Դատական նիստի հետաձգումը

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 դատական նիստերից 197-ի ընթացքում դատական նիստը հետաձգվել է, որից՝ վերաքննիչ վարչական դատարանում՝ 26 նիստ, վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 8 նիստ, վերաքննիչ քրեական դատարանում՝ 163 նիստ:

Գծապատկեր 22. Դատական նիստի հետաձգումը



- Կողմերի միջնորդությամբ-66%
- Կողմի ներկայությունը ապահովելու համար-17%
- Աշխատանքային ժամը վերջանալու պատճառով-12%
- Դատարանի նախաձեռնությամբ-20%

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, դատական նիստերի ավելի քան 32 տոկոսը հետաձգվել են: Ընդ որում, անդրադառնալով հետաձգման պատճառներին, նշենք, որ դատական նիստերի մեծ մասը հետաձգվել է կողմերի միջնորդությամբ, այնուհետև՝ դատարանի նախաձեռնությամբ՝ կողմերի ներկայությունն ապահովելու կամ աշխատանքային ժամը լրանալու պատճառով:

Գործի քննություն ավարտ և դատական ակտի հրապարակում

Կանոն

Ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը, ավարտելով գործի դատաքննությունը, հայտարարում է եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը (վերաբերելի է քաղաքացիական, քրեական, վարչական դատարաններին):

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստից 177–ի ընթացքում գործի քննությունն ավարտվել է և դատարանն անցել է դատական ակտի կայացման փուլ, որից՝ վերաքննիչ վարչական

դատարանում՝ 20 նիստ, վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 6 նիստ, վերաքննիչ քրեական դատարանում՝ 151 նիստ:

139 դատական նիստերի ընթացքում հրապարակվել է դատական ակտ, որից վերաքննիչ վարչական դատարանում՝ 14, վերաքննիչ քրեական դատարանում՝ 125:

Դատական ակտի բողոքարկման կարգի պարզաբանումը

Կանոն

Դատական ակտում նշվում է դատական ակտի բողոքարկման կարգը և ժամկետը, եթե այն ենթակա է բողոքարկման, իսկ եթե բողոքարկման ենթակա չէ, ապա նշում այդ մասին (վերաբերելի է քաղաքացիական, քրեական, վարչական դատարաններին):

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստից 179-ի ընթացքում հրապարակվել է դատական ակտ: Նշված նիստերից 174-ի ընթացքում պարզաբանվել է դատական ակտի բողոքարկման ժամկետներն ու կարգը, որից վերաքննիչ վարչական դատարանում՝ 49 գործով, վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 2 գործով, վերաքննիչ քրեական դատարանում՝ 123 գործով: Մյուս 5 նիստերի ընթացքում չի պարզաբանվել, դատական ակտի բողոքարկման ժամկետներն ու կարգը, որից՝ վերաքննիչ վարչական դատարանում՝ 2 գործով, վերաքննիչ քրեական դատարանում՝ 3 գործով:

Եզրահանգում

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վերաքննիչ վարչական և վերաքննիչ քրեական դատարաններում արձանագրվել են դեպքեր, երբ դատական ակտ հրապարակելիս չի պարզաբանվել դատական ակտը բողոքարկելու կարգը: Հարկ է նշել, որ դատական ակտում վերջինիս բողոքարկման հնարավորության, բողոքարկման կարգի և ժամկետների նշումն ինքնանպատակ չէ, այն միտված է դատական վարույթի կողմերին հենց դատական ակտով վերջինիս բողոքարկելիության մասին ծանուցելուն և պարզաբանելուն: Դատական ակտի բողոքարկման կարգի և ժամկետի մասին նշվում է դատական ակտի եզրափակիչ մասում, իսկ դատական ակտը հրապարակելիս Դատարանը հրապարակում է հենց դատական ակտի եզրափակիչ մասը, որում նշվում է դատական գործի ելքը և նշված ակտի բողոքարկման կարգը:

Դատական կարգադրիչների ներկայությունը դատական նիստերին

Կանոն

Դատական կարգադրիչների ծառայության խնդիրներն են՝

1) դատավորի, դատարանում և արտագնա նիստի անցկացման վայրում, ինչպես նաև դրա սպասարկման տարածքում գտնվող անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից.

2) տեղում անմիջական կատարման ենթակա դատարանի կարգադրությունների կատարումը.

3) Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների տարածքում հասարակական կարգի պահպանումը, Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգի, կցված գույքի, ինչպես նաև շենքի և դրա սպասարկման տարածքի պահպանությունը.

4) Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Բարձրագույն դատական խորհրդի շենքում, ինչպես նաև դրա սպասարկման տարածքում գտնվող ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից:

2. Դատական կարգադրիչների ծառայությունն իր խնդիրներն իրականացնելու նպատակով անհրաժեշտության դեպքում համագործակցում է ոստիկանության և պետական այլ մարմինների հետ:

ՀՀ օրենքը դատական դեպարտամենտում ծառայության մասին, հոդված 34-րդ

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստից արձանագրվել է, որ դատական կարգադրիչ ներկա է եղել 490 դատական նիստի ժամանակ, որից՝ վերաքննիչ վարչական դատարանի 218 նիստերին, վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17 նիստերին, վերաքննիչ քրեական դատարանի 255 նիստերին

Եզրահանգում

Ձեռք բերված տվյալներից կարելի է եզրակացնել որ դատական կարգադիչներն առավելապես գտնվել են քրեական, այնուհետև վարչական գործերով վերաքննիչ դատարաններում նիստերի ժամանակ, և առավել քիչ՝ քաղաքացիական գործերով դատական նիստերի ժամանակ:

Դատավորի վարքագիծը և էթիկան

Կանոն

Դատավորի վարքագծի կանոնները պարտադիր են բոլոր դատավորների համար:

ՀՀ դատական օրենսգրքի ՀՀ Սահմանադրական օրենքի 87-րդ հոդված.

Դատավորը պարտավոր է բարձր պահել իր պատիվն ու արժանապատվությունը և խուսափել այն ամենից, ինչը կարող է արատավորել դատական իշխանության հեղինակությունը, նվազեցնել հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ, վնաս հասցնել դատավորի համբավին, կասկածի տակ դնել նրա օբյեկտիվությունը և անկախությունն արդարադատություն իրականացնելիս: Դատավորը պետք է նման վարքագիծ պահանջի նաև իրեն կցված դատական ծառայողներից:

Դատավորի վարքագծի կանոններ, կանոն 2

Դատավորը պետք է լինի արժանապատիվ, համբերատար և բարեկիրթ, հարգալից վերաբերմունք դրսևորի գործով կողմերի, դատավարության այլ մասնակիցների, գործընկեր դատավորների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց հանդեպ, ում հետ առնչվում

է, իր համար ընդունի այնպիսի սահմանափակումներ, որոնք կապահովեն նրա հավասարակշռվածության ու արդարամտության հասարակական ընկալումը:

Դատավորը պարտավոր է կարգուկանոն պահպանել դատական նիստերի դահլիճում, դատական նիստին մասնակցող անձանցից պահանջել պատշաճ և հարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ: Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում դատարանը պարտավոր է կիրառել դատական սանկցիա:

Դատավորի վարքագծի կանոններ, կանոն 12

Արդարադատություն իրականացնելիս դատավորը պարտավոր է չարտահայտել իր դրական կամ բացասական վերաբերմունքը դատավարության կողմերի հանդեպ և չցուցաբերել այնպիսի վարքագիծ (միմիկա, ժեստիկուլյացիա, հեգնանք և այլն), որը դատավարության մասնակիցների կողմից կարող է ընկալվել որպես նախատրամադրվածության դրսևորում:

Դատավորի վարքագծի կանոններ, կանոն 9

Արդարադատություն իրականացնելիս դատավորը չպետք է դրսևորի խտրականություն կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, դավանանքից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, ֆիզիկական արատներից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Դատավորի վարքագծի կանոններ, կանոն 10

Դատավորի ոչ դատական գործունեության իրականացումը չպետք է անկողմնակալ դիտորդի մոտ ողջամիտ կասկածներ առաջացնի որպես դատավոր անաչառ գործելու նրա ունակության վերաբերյալ, նսեմացնի դատավորի պաշտոնի հեղինակությունը կամ խոչընդոտի դատական պարտականությունների պատշաճ իրականացմանը:

Դատավորի վարքագծի կանոններ, կանոն 23

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ դատավարության մասնակիցների նկատմամբ դատավորների վերաբերմունքը և դրսևորած վարքագիծը (միմիկա, ժեստիկուլյացիա, հեգնանք և այլն) մշտադիտարկողների մոտ առաջացրել են դատավորի վարքագծի կանոնների պահպանման հետ կապված մտահոգություններ:

Մշտադիտարկողի մեկնաբանությունը թիվ ՍԴ1/0050/15/23 գործով 20.11.2023թ. կայացած դատական նիստից.

Դատավոր Արմեն Բեկթաշյանը «դու»-ով էր խոսում մեղադրյալի հետ: «Եթե հերթապահությունից զենք բերած լինեիր, զենքո՞վ էիր խփելու», քմծիծաղով ասաց Արմեն Բեկթաշյանը:

Մշտադիտարկողի մեկնաբանությունը թիվ ԵԴ/0152/15/23 գործով 18.12.2023թ. կայացած դատական նիստից

«Դատավոր Արմեն Բեկթաշյանը դու-ով էր խոսում դատապարտյալ Կարեն Չիչոյանի հետ: Դատապարտյալը փորձում էր պարզել, թե ինչու իրեն վաղաժամկետ ազատ չեն արձակում: Նա 8 տարուց 7 տարի երկու ամիսն արդեն կրել է պատիժը: ՔԿՀ ներկայացուցիչը եւ դատախազը նշեցին, որ վերջինս ունի տույժեր, երբեւէ չի խրախուսվել եւ դրսեւորել է բացասական վարքագիծ: ՔԿՀ ներկայացուցիչը նաեւ նշեց, որ դատապարտյալը 28 միավոր ներառյալ պետք է ունենա, որ դիմեն դատարան, մինչդեռ նա ընդամենը 20 միավոր ունի»:

Մշտադիտարկողի մեկնաբանությունը թիվ ԱՐԱԴ/0023/01/22 գործով 07.02.2024թ. կայացած դատական նիստից.

«... Երբ դատական նիստը ավարտվեց ու դատավորը հայտարարեց հետաձգման որոշման մասին, բոլորը սկսեցին դուրս գալ, արդեն գրեթե բոլորը դռան մոտ էին հասել, երբ դատավոր Արմեն Բեկթաշյանը ձայնը բարձրացրեց նստած տեղից, «հետ արի» ասաց ու շատ արագ նետվեց հանրության ներկայացուցիչների կողմը, վիճաբանություն սկսվեց նրա և մի տղամարդու միջև, բարձր գոռում էր, իր ասելով այդ անձը ձեռքի շարժումով ծաղրել էր իրենց ու ինչ որ բան ասել, ինքը դա տեսել էր ու լսել, ուրիշ կարգադրիչներ եկան, հանրության ներկայացուցիչներին դուրս տարան, և փորձում էին դատավորին ու այդ անձին հեռացնել իրարից: Այդ անձին ևս դուրս բերեցին նիստերի դահլիճից»:

Մշտադիտարկողի մեկնաբանությունը թիվ ԵԴ/0357/01/21գործով 24.10,2023թ. կայացած դատական նիստից

«Դատավոր Միհեր Արղամանյանը մեղադրյալի հետ խոսում էր «դու»-ով, երբ մեղադրյալն ասաց, որ առողջական խնդիրներ ունի, դատավորը հակադարձեց՝ նարկոտիկը օգնու՞մ է դրան: Բացի այդ՝ երբ ամբաստանյալն ասաց, որ հայերեն բանավոր լեզվին տիրապետում է, իսկ գրավորին՝ ոչ: Դատավորների եռյակը քմծիծաղ տվեց»:

Եզրահանգում

Վերը վկայակոչված դեպքերը վկայում են, որ Վերաքննիչ դատարանի որոշ դատավորների վարքագիծը անկախ դիտորդի մոտ չեն թողել արժանապատիվ, համբերատար, բարեկիրթ ու հարգալից վերաբերմունքի հասարակական ընկալում: Նշված դեպքերի՝ իրավասու մարմնի կողմից քննության ադրյունքում կարող են պարզվել դատավորների կողմից վարքագծի կանոնների պահպանման հետ կապված հարցերը:

Դատական իշխանության պաշտոնական կայք.Դատական տեղեկատվական համակարգ «ԴատաԼեքս»

Կանոն

Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում են գործի և դրա ընթացքի վերաբերյալ տեղեկությունները, որոնց ցանկը և հրապարակման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

Դատական օրենսգիրք, 11-րդ հոդվածի 9-րդ մաս

ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի կողմից թիվ ԲԴԽ-9-Ո-13 որոշմամբ սահմանվել է «Դատական իշխանության կայքում գործի և դրա ընթացքի վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունների, այդ թվում եզրափակիչ և այլ դատական ակտերի ցանկը և հրապարակման կարգը», որի 2-րդ հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ Դատական գործի և դրա ընթացքի վերաբերյալ վիճակագրական քարտում Դատական ավտոմատացված համակարգում լրացված տեղեկությունները յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում համապատասխան ծրագրի միջոցով ավտոմատացված եղանակով տեղափոխվում են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգ:

Նշված որոշմամբ սահմանվել է քաղաքացիական գործերով,վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ քաղաքացիական գործերով, սնանկության, վարչական և քրեական գործերով հրապարակման ենթակա տեղեկությունները: Տեղեկությունների ցանկը ներառում է կայացվող դատական որոշ ակտերի թվարկում և այնուհետև նշվում է «այլ դատական ակտեր» ևս հրապարակելու պահանջի մասին: Հատկանշական է, որ նշված թվարկումը միայն ներառում է դատական ակտերի թվարկումը, մինչդեռ տարբեր տեսակի գործերով կայացված դատական նիստերի մասին հրապարակելու պահանջ նախատեսված չէ:

Մշտադիտարկման արդյունքներ

Մշտադիտարկված 600 նիստից արձանագրվել է, որ 99 դատական նիստի վերաբերյալ տեղեկությունները ժամանակին չեն լրացվել դատալեքս տեղեկատվական համակարգում:

Մշտադիտարկման ամսաթիվ 11/12/2023


http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=354658470656115

Նշանակվել է դատական քննություն
Երբ: 03-07-2023
Ուղարկվել է ծանուցագիր:
Ժամ: 12:00
Այլ նշումներ:
Նիստերի դահլիճի համարը: 5
Նիստը: Չի կայացվել
Պատճառը: Նախագահող դատավորի արձակուրդում գտնվելու պատճառով:

Նշանակվել է դատական քննություն
Երբ: 22-08-2023
Ուղարկվել է ծանուցագիր:
Ժամ: 14:00
Այլ նշումներ:
Նիստերի դահլիճի համարը: 5
Նիստը: Կայացվել է
Պատճառը:

Նշանակվել է դատական քննություն
Երբ: 02-10-2023
Ուղարկվել է ծանուցագիր:
Ժամ: 15:00
Այլ նշումներ:
Նիստերի դահլիճի համարը: 5
Նիստը:
Պատճառը:

Վերաքննիչ քրեական դատարան

Մշտադիտարկման ամսաթիվ 27/11/2023



Վերաքննիչ քրեական դատարան

Մշտադիտարկման ամսաթիվ 10/01/2024



Վերաքննիչ վարչական դատարան

Մշտադիտարկման ամսաթիվ 11/12/2023


http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809969

	ԴԱՏԱԿՈՐ ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	17-01-2022
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. (ՀՀ դրամ):	0
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (ԱՄՆ դոլար):	
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (Եվրո):	
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (Ռ՝Դ ռուբլի):	
Ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և ... մասին դատական ակտ կայացրած դատավորների ցանկ	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
Որոշումն ուղարկվել է կողմերին	
Ամսաթիվ:	19-01-2022
Գլխի համարը:	1889/22
Այլ նշումներ:	
Գործը, Որոշումը հանձնվել է գրասենյակ	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	07-03-2022
Էջերի քանակը:	17
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է դատարանի արխիվ	
Ամսաթիվ:	09-03-2022
Էջերի քանակը:	17
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Դատարանային գիտելիացնել է www.datalex.am արխիվի նյութից 03 Նոյեմբեր 2023

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, որ ԴատաԼեքս տեղեկատվական ծրագրում վերաքննիչ քրեական դատարանի կողմից զետեղված տեղեկատվության տեղադրման ամսաթվերը չեն երևում:


Գործի համար | Ամբաստանյալ | Դատավոր

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=458804212042716

Այլ նշումներ:

Դատական ակտ

Դատական ակտ: ԵԴ/0346/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

«15» սեպտեմբերի 2022թ. ք.Երևան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)

Նախագահող դատավոր Ա.Մնացականյան
դատավորներ Մ.Պապոյան
Ս.Մարաբյան

քարտուղարությամբ Ա.Ավետիսյանի

մասնակցությամբ՝
դատախազ Դ.Թադևոսյանի
պաշտպան Լ.Քոչարյանի
ամբաստանյալ Ռ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով քննելով թիվ ԵԴ/0346/01/22 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 24-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Ռոլանդ Արթուրի Գրիգորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը
Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.
2022 թվականի հունվարի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Մելքոնյանի որոշմամբ ՀՀ

19 | + | ԵԴ/0605/01/19 | Լևիկ Բաղդասարյան | Հարություն Մանուկյան



Առաջարկ

ԴատաԼեքս համակարգում գեներացնել Վերաքննիչ քրեական դատարանի կողմից լրացվող տեղեկատվության ամսաթվերը, ինչպես իրականացվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տեղադրվող տեղեկատվության դեպքում: Միաժամանակ, առաջարկում ենք գեներացնել յուրաքանչյուր գործողության ստեղծման ամսաթիվը:

Դատավորի արձագանքը մշտադիտարկողի ներկայությանը

Մշտադիտարկման արդյունքում արձանագրված պատասխաններ

Վերաքննիչ վարչական դատարան	Դատավորի արձագանքը
	Հայտնեց, որ կարող եմ միայն դիտարկել:
	Կողմերին հարցրեց, արդյոք դեմ չեն մշտադիտարկողի ներկայությանը:
	Հայտնեց, որ կարևորում է մշտադիտարկողների ներկայությունը, այն, որ իրենք բաց են աշխատում, նիստերի մեծ մասը դռնբաց են:
	Դատավորը ողջունեց, նշելով, որ արդարադատության ոլորտը պետք է միշտ զարգանա և վեր հանվեն բոլոր բացերը:
	Ողջունեց, ասելով որ իրենց համար կարևոր է հասարակության կարծիքը:
	Նախագահող դատավորը մանրամասն հետաքրքրվեց ինքնության և նպատակի մասին: Իմանալով, որ մշտադիտարկող եմ, ասաց, որ նման կատեգորիա չկա: Քաղաքավարի կերպով հակադարձեցի՝ նշելով, որ ես Ձեզ օրինակ, որ կա:
	Հարցրեց, ով եմ, որ կազմակերպությունից, ինչ նպատակով եմ լսում քննվող գործը:
Վերաքննիչ քրեական դատարան	Դրական արձագանքեց, ասելով, որ դռնբաց նիստ է և ես իրավունք ունեմ ներկա գտնվելու:
	Կողմերին հարցրեց, թե դեմ չեն մշտադիտարկողի ներկայությանը, կողմերը չառարկեցին :
	Արձագանքեց լավ, նշելով հանրության կարևորությունը և կարծիքի մեծ նշանակությունը :
	Նախագահող դատավորը նիստի քարտուղարին ասաց, որ այլևս թույլ չտան այն աղջկան (նկատի ունենալով ինձ, նիստերի դահլիճում միայն ես և մեղադրյալն էինք) բարձրանա իր նիստերին: